

ՆՈՐԱՅՐ ՊՈԴՈՍՅԱՆ

ՄԵՐ ԳՐԱԲԱՐԸ

ԶՐՈՒՅՑ-ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

1

ԵՐԵՎԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆ
2018

ՀՏԴ 80:811.19

ԳՄԴ 80+81. 2Հ

Պ 797

Տպագրվում է ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի
խորհրդի երաշխավորությամբ:

Խմբագիր՝ բանասիր. գիտ. դոկտ. պրոֆ. Վ. Գրիգորյան:

Գրախոսներ՝ բանասիր. գիտ. թեկնածու, դոց. Ն. Դիլ-
բարյան, բանասիր. գիտ. թեկնածու, դոց. Ա. Խաչատրյան,
բանասիր. գիտ. թեկնածու Ն. Պարոնյան:

Պողոսյան Նորայր

Պ 797 Մեր գրաբարը. Զրույց-ընթերցումներ/

Ն. Պողոսյան.-Եր.: Գիտություն, 2018.-150 էջ:

«Մեր գրաբարը» գրքույկը պարունակում է լեզվական, պատմա-
կան, գրական, սուրբգրային թեմաներով զրույց-էսսեներ գրաբա-
րի մասին: Բերված են գրաբար հատվածներ, դրանց աշխարհա-
բար փոխադրությունները, մեկնաբանություններ այս կամ այն
հատվածի վերաբերյալ: Նախատեսված է ուսանողների և գրաբա-
րով հետաքրքրվողների համար:

ՀՏԴ 80:811.19

ԳՄԴ 80+81. 2Հ

ISBN 978-5-8080-1341-4

© Պողոսյան Ն., 2018

© Գիտություն, 2018

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Մեր հին պատմությունը, մշակույթը, լեզվամտածողությունն իր ընդերքում պահել և մեզ է փոխանցել գրաբարը, հայ միջնադարյան ողջ գրավոր մշակույթը գրաբարով է, և ուրեմն դրա իմացությունը մեծապես բացում է գիտելիքի դռները մեզ համար:

Դեռ ուսանողական տարիներին հիացում էինք ապրում, թե ինչպես գրաբարի ամեն տողի մեջ մշակութային շերտեր են խտացած, ամեն մի բառ, արտահայտություն, դրվագ կարելի է քննել երկար՝ տարբեր գիտակարգերի դիրքերից, թե ինչքան խորունկ ու գեղեցիկ է գրաբարն իր հնչմամբ, իմաստներով, քերականական համակարգով: Եվ եթե այդպես է, մտածում էինք մենք, ամեն մի հայորդի այդ արժեքին հաղորդակից լինելու, մշտապես նրա միջավայրում գտնվելու հնարավորություն պետք է ունենա:

Այդ նպատակադրությամբ է նաև, որ վիրտուալ միջավայրում ստեղծեցինք «Գրաբար» էջը: Այն հիմնադրելիս նշում էինք, որ «գրաբարն այսօր ևս կենդանի է մեր մայրենի լեզուն սնուցելով, գրաբարով պահպանված բնագրերը վերստին ընթերցելու և բովանդակությունը նորովի ընկալելու, մեր օրերի

վերքերին դարման հուշելու պարտադրանքով...»: Կայքէջում տեղադրեցինք բազմազան այնպիսի դրվագներ մեր պատմությունից ու մշակույթից, որոնք հիմնական մի կամրջով կապված են մեր ժամանակների հետ, և ինչքան պատմական, նույնքան էլ արդիական շունչ ունեն, որոնց հասու ենք լինում գրաբար հատվածներ, տեքստեր ընթերցելու, այդ կերպ դասական հայերենին ուղղակիորեն առնչվելու ճանապարհով:

Կայքէջն ունեցավ հարյուրավոր ընթերցող-հետևորդներ: Իսկ եղած արձագանքները մղեցին մեզ լայնացնելու նախաձեռնության շրջանակները և հրատարակելու գրքույկ, որ գրաբարի միջավայրում գտնվելու մեկ հավելյալ հնարավորություն կբերի ամենքիս:

«Մեր գրաբարը» գրքույկում, այսպիսով, ներկայացվում են գրույցներ գրաբարով և գրաբարի մասին, դրանք պարունակում են գրաբար հատվածներ, մի մասը՝ աշխարհաբար զուգադիր թարգմանությամբ, իսկ մի մասը, որ շատ ավելի դյուրամարս է լեզվական առումով, թողնված է ընթերցողին ի ճաշակ: Դրանք քաղված են մեր հին ու նոր ժամանակների տարբեր՝ պատմությանը, գրականությանը, լեզվին, հավատալիքներին առնչվող բնագրերից, Ս. Գրքից, մի քանիսը դուրս են բերված մեր հոդվածներից, որ տպագրվել են Հայաստանի ու արտերկրի հայագիտական հանդեսներում:

Ակնարկ-գրույցները խմբավորված են Սուրբգրայինք, Պատմականք, Գրականք, Լեզվականք բաժիններում, իսկ Զվարճալիք բաժնում կարելի է հանդիպել դասավանդման մեր փորձառության հումորային ինչ-ինչ իրավիճակների: Զրույցները մեր ողջ պատմության կամ գրավոր մշակույթի ժամանակագրական արտացոլումը չեն, թեև որոշակի ներքին տրամաբանություն առկա է գրույցների միջև: Պետք է հաշվի առնել, որ

նպատակն այնուամենայնիվ գրաբար տեքստն է, որը մատուցվում է պատմության ու մշակույթի դրվագի հետ գիրկընդխառն, ամեն մի առանձին գրույց ինքնուրույն կյանք ունի, ընթերցողը կարող է որևէ հատվածից կարդալ:

Ներկայացված ընթերցումների ժանրային հատկանիշների մասին խոսելիս համեմատության համար աչքի առաջ է գալիս «Հայկական էսքիզները» (հեղ.՝ Վարդգես Պետրոսյան): Ի դեպ, նախապես նման պայմանական վերնագրով էլ օժտել էինք «Գրաբարյան էսքիզներ», որ ըստ հնարավորին արտահայտում է գրքույկի բնույթը: Սակայն «էսքիզներ» նորահունչ բառը դժվարությամբ կկապվեր գրաբարի հետ, ուստի այն իր տեղը գիջեց «ընթերցումներին»:

Հեղինակն այս շարքով երկու հիմնական նպատակ է իր առաջ դրված տեսել. նախ՝ որ նոր օրերում շարունակի իր ներկայությունն ունենալ մեր գրաբարը, մեղմվի պատկերացումը, թե այն միջնադարյան քարացած, մեզանից օտարված մի միավոր է, որ գտնվում է մեզանից հեռու ինչ-որ մի տեղում, միայն եկեղեցական ծեսում կամ մագաղաթյա մատյաններում: Ցանկացել ենք գրաբարը դուրս բերել ձեռագիր մատյաններից, տարբեր դրվագների միջոցով հասանելի դարձնել ընթերցողին, և հետո՝ պարզ դարձնել, որ բնավ դժվար չէ գրաբարն ուսանել և հասկանալ, պետք է միայն քայլ անել այդ ուղղությամբ: Գրաբար ընթերցանության հատվածներն ընտրվել են այդ նպատակադրությամբ:

Եվ հիմնական նպատակը՝ ցանկացել ենք գրաբարը տեղափոխել մեր օրերը, նոր կերպով խոսեցնել ու խոսել նրա հետ, հնադարյան պատկերացումից դարձնել նաև մեզ՝ 21-րդ դարի մարդուն ուղեկցող արժեք՝ ևս մեկ անգամ զգալու համար գրա-

բարի լեզվական հմայքը, ձգողականությունը, հոգևոր ներգործությունը:

Բավարարություն ապրած կլինենք, եթե գրաբարի հանդեպ սիրո սերմերն իրենց մեջ մեկ անգամ արդեն անցկացրած մեր ուսանողները, նաև մասնագետները, հայորդիները գրույցներն ընթերցելիս որոշ օգտակար բաներ գտնեն իրենց համար, և, կրկին շեշտենք, առնչվեն գրաբարի հմայքին ու վեհությանը:

Ս ՈՒ Ր Բ Գ Ր Ա Յ Ի Ն Ք

-1-

Աստված արաչագործությունից հետո «դրախտ տնկեց Եդեմում, նրա արևելյան կողմում, և այնտեղ դրեց իր ստեղծած մարդուն» (Ծննդոց գիրք, Բ.8): Ս. Գրքում մոտավոր նկարագրվում է Եդեմի՝ դրախտի տեղադրությունը.

«Եւ գետ ելանէր յեդեմայ՝ ոռոգանել զդրախտն, եւ անտի բաժանի ի չորս առաջս: Անուն միումն Փիսովն, նա է որ, պատէ զամենայն երկիրն Եփլատայ, անդ ուր ոսկին է... Եւ անուն գետոյն երկրորդի Գեհովն, նա պատէ զամենայն երկիրն Եթովպացոց: Եւ գետն երրորդ՝ Տիգրիս, նա է, որ երթայ յանդիման Ասորեստանի: Եւ գետն չորրորդ Եփրատն է»: (Գետ էր բխում Եդեմից, որպեսզի ոռոգեր դրախտը, և այնտեղից բաժանվում էր չորս ճյուղերի: Մեկի անունը Փիսոն էր. նա է, որ պատում է ամբողջ Եփլատ երկիրը, այնտեղ, ուր ոսկի կա: Երկրորդ գետի անունը Գեհոն է, նա պատում է եթովպացիների երկիրը: Երրորդ գետը Տիգրիսն է, սա հոսում է դեպի Ասորեստան: Չորրորդ գետը Եփրատն է):

Տարբեր տեղերում են ուսումնասիրողները փորձել գտնել դրախտը՝ Մերձավոր արևելքում, Պարսից ծովի շրջաններում: Սակայն հետևելով Ս. Գրքի նկարագրությանը, մանավանդ բխող գետերին, որոնք սկիզբ են առնում Եդեմից, շատ վաղուց հանգել են նաև այսպիսի վարկածի. Եփրատեսը հստակ է՝ սկիզբ է առնում Հայկական բարձրավանդակից, Արևմտյան Եփրատը՝ Ծաղկավետ լեռներից, հոսում է Կարնո և Երզնկայի

դաշտերով և ապա միանում Արևելյան Եփրատին կամ մեր Արածանիին, որ հոսում գալիս է Ծաղկանց լեռներից: Տիգրիսը Տիգրիսն է, Գեհոնը ենթադրաբար Արաքսն է, Փիսունը՝ Ճորոխը:

Ստացվում է՝ դրախտը գտնվում է չորս գետերի ակունքներն ընդգրկող տարածքում՝ Հայկական լեռնաշխարհում, նույնն է թե՛ Հայաստանում:

-2-

Մեր քրիստոնեական կրոնը կյանքի, ուրախության, զվարթության կրոն է: Նոր Կտակարանում կարելի է նման զվարթ բազում մտքեր գտնել: Մի քանի օրինակ ենք քաղել, որոնց ընթերցումն անմիջապես առույգացնում է մարդու տրամադրությունը.

«Զգաստացարու՛ք այսուհետև եւ լերու՛ք զուարթունք յաղօթս»:

«Լե՛ր զուարթուն եւ լի՛ց զթերութիւն, որ եղեալ է ի մտի քում»:

«Ապա մի՛ զքնով անկանիցիմք որպէս եւ այլքն, այլ արթունք եւ զուարթունք եղիցուք»:

«Այլ դու զուարթ կաց յամենայնի, ճգնեա՛ց, զգործս աւետարանչի գործեա՛լ»:

Նույնպիսի ներգործություն ունի Նարեկը, որ թեև «ողբեր-գութեան մատեան» ենք կոչում, սակայն զուարթ լինելու շատ տողեր ունի.

«Իսկ դու եղեր ինձ՝ թշուառացելոյն, ձայնիւ զուարթնոցն բարի բարեխօս» (ԼԴ):

«Վանեա՛ զընդդիմամարտն իմ զինուորութեամբ զուարթնոցդ» (ՁԴ):

«Հայեա՛ց, Տէ՛ր, յերկնից զուարթ քաղցրութեամբ յամենակործան վտանգ նեղելոյս» (Ղ):


Էլ չենք ասում «զուարթուն»-ների՝ հրեշտակների մասին: Դրանից ունենք Զուարթնոց (=հրեշտակների, հրեշտակային)

մեր տաճարը, որի հրեշտակային տեսքն իսկ զվարթացնում է մարդու հոգին:

-3-

Ծննդյան 40-րդ օրը, երբ Հիսուսին բերում են տաճար, Նրան ընդառաջ է գալիս և գրկում Սիմեոն ծերունին և ասում. «Ահա սա կայ ի գլորումն եւ ի կանգնումն բազմաց ի մէջ Իսրայէլի եւ ի նշան հակառակութեան»: (Ահա սա նա է, որ պատճառ է դառնալու Իսրայէլի մէջ շատերի անկման ու բարձրացման և նշան հակառակութեան):

Սիմեոնն արդար և աստվածապաշտ մարդ էր: Նա մեկն էր Եգիպտոսի Պտղոմեոս թագավորի հրավիրած 72 թարգմանիչներից, որոնք եբրայերենից հունարեն թարգմանեցին Հին Կտակարանը: Թարգմանիչներն ապրում ու թարգմանում էին առանձին, իսկ Պտղոմեոսի ներկայությամբ՝ համեմատում այդ թարգմանությունները: Սիմեոնին հանձնարարված էր թարգմանել Եսայու մարգարեությունը: Թարգմանելով այն հատվածը, ուր խոսվում է կույսի հղանալու և որդի ունենալու մասին՝ մտածում է, որ մարդիկ կարող են չհավատալ, և ջնջում է այդ տողերը: Առավոտյան արթնանալով՝ տեսնում է, որ ջնջված տողը մագաղաթի վրա վերստին գրված է ոսկյա տառերով. «Ահա կույսը կհղիանա և որդի կծնի»:



Ծերունին ուրախությամբ վերցնում է Մբ. Գիրքը, համբուրում, փառաբանում է Աստծուն և երանի տալիս նրանց, ովքեր պիտի տեսնեն կույսից ծնված Մանկանը և գրկեն նրան: Տերը լսում է նրա խոսքերը և խոստանում. «Մահ չես տեսնի, մինչև որ տեսնես Տիրոջ Օծյալին»:

Սիմեոնն ապրեց 344 տարի և ի վերջո տեսավ ու գրկեց Տիրոջը. «Նա առ ընկալաւ զնա ի գիրկս իւր եւ օրհնեաց զԱստուած եւ ասէ. Արդ՝ արձակես զծառայս քո, Տէր, ըստ բանի քում ի խաղաղութիւն, զի տեսին աչք իմ զգիրկութիւն քո, զոր պատրաստեցեր առաջի ամենայն ժողովրդոց»:

Այսօր հայերենում մի գեղեցիկ օրհնություն է այդ խոսքը. «Երկար ապրես՝ Սիմեոն ծերունի դառնաս»:

-4-

Մաշտոցյան Մատենադարանի թ. 2271 ձեռագիր բառարանի (17-րդ դար) Հերմուպոլիս քաղաքին նվիրված հատվածում գտնում ենք Հիսուս Բրիստոսի մասին պարականոն մի պատմություն, որ հետաքրքրական է ինքնին և գուցե բանահյուսական ակունք ունի:

«Նախ անդ չոգաւ Տէրն մեր Յիսուս, ի տուն այրոյ կնոջ ուրումն, որ լուաց և սրբեաց զՆա գոգնոցովք եւ ասաց. «Մայրն Բո նման է Արուսեկի, իսկ Դու իբրեւ զԵրկիր»։ Եւս այլ գովասական բանս ասաց։ Իսկ ջուրն, որով լուանայր, ուր եւ անկաւ՝ զարմանալի ծառ բուսաւ, որ բուժէ։ Եւ ամս վեց անդ բնակեցաւ Տէր ի յԵգիպտոս»։ Ավետարաններում շատ քիչ բան ենք գրտնում Հիսուսի պատանեկան և երիտասարդական կյանքի տարիների մասին։ Այս փոքր դրվագը, թեկուզ և ավանդություն, գալիս է լրացնելու դա։

-5-

Գերմանացի աստվածաբան Յոհաննես Շիլլերերգերը (1396-1427 թթ.), որ 15-րդ դարի սկզբներին ճանապարհորդել է Արևելքով, որոշ տվյալներ է թողել նաև Հայաստանի ու հայերի

մասին: Օրինակ՝ ասում է, թե ինչպես հայկական եկեղեցում քահանան «իջնում է խորանից և մեկ-մեկ աջը դնելով տղամարդկանց ու կանանց գլխին՝ օրհնում է և ասում. «Աստված թողություն տա մեղքերից»:

Արժեքավորն այն է, որ Յոհաննեսը տալիս է նաև հայերեն մի քանի բառեր ու արտահայտություններ՝ գերմաներենի տառադարձած, որից իմանում ենք իր ժամանակի հայերենի որոշ խոսքեր: Այդպես պահպանվել է Տերունական աղոթքի՝ «Հայր մեր»-ի հայերեն մի տարբերակ, որ տարբերվում է բոլորիս հայտնի «Հայր մեր, որ յերկինս ես» շարադրանքից: Դա հետաքրքիր է, կարծում ենք, ցույց տալու համար, որ հնում հայերը գործածել են հանրահայտ աղոթքի մեկ այլ տարբերակ: Գերմանացի բանասեր Ն. Ֆինկը այն վերածել է հայերենի, և ուրեմն Յոհաննես Շիլթերգերի գրառած Տերունական աղոթքը հնչում է այսպես.

Հայր մեր, որ յերկինք ես,
Սուրբ իցէ անուն Զո,
Գայ արքաւուն Զո,
Եղիցի կամք Զո
Յերգինք եւ յերկրի:
Հաց մեր հանապազ տու՛ր մեզ այսօր,
Եւ թող մեզ պարտք մեր,
Հայնց մենք թողունք մերոց պարտապանաց:
Եւ մի՛ թող մեզ ի փորձութիւն,
Ապա փրկէ՛ մեզ ի չարէն: Ամէն:

-6-

Հին Կտակարանում գտնում ենք Հիսուսի մասին մի շարք մարգարեություններ: Բերում ենք դրանցից մի քանիսն ըստ հինկտակարանյան գրքերի:

Հիսուսի ծննդյան մարգարեությունը. «Վասն այդորիկ տացէ ձեզ Տէր ինքնին նշան. ահա կոյսն յղացի եւ ծնցի որդի, եւ կոչեսցեն զանուն նորա Եմմանուէլ» (Եսայի Է.14):

Ծննդավայրը. «Եւ դո՛ւ, Բեթղեհէմ, տուն Եփրաթայ, սակաւաւոր իցես լինել ի հազարաւորս Յուդայ, ի քէն ելցէ ինձ լինել իշխան Իսրայէլի. եւ ելք նորա ի սկզբանէ աւուրց աշխարհի» (Միքիա Ե.2):

Չարչարանքները և մահը. «Թշնամիք զանձն իմ պաշարեցին, ի ճարպս իւրեանց արգելան, եւ բերանք նոցա խօսեցան զամբարտաւանութիւն» (Մաղմոս ԺԶ. 10):

Առաքելությունը. «Նա ժառանգեացէ զբազումս, եւ զաւարիզօրաց բաշխեացէ. փոխանակ զի ի մահ մատնեցաւ անձն նորա, եւ ընդ անօրէնս համարեցաւ» (Եսայի ԾԳ.12):

«Լրումն օրինաց», «կատարումն օրինաց» արտահայտություններն այսօր էլ գործածում ենք գրաբարյան ձևով, որ նշանակում է հին օրենքների՝ Հին Կտակարանի մարգարեությունների կատարումը, լիացումը, որ կատարվեց Հիսուսի միջոցով:

-7-

Ավետարանն արգելում է երդվել, նույնն է թե՛ խոստում տալ ու չկատարել: «Այլ եղիցի ձեր բան՝ այոն այո, եւ ոչն ոչ, զի աւելին քան զայն ի չարէն է»: (Ձեր խոսքը թող լինի՝ այո-ն այո, եւ ոչ-ը՝ ոչ, որովհետև դրանից ավելին չարից է):

Այս խոսքերը հնչում են այն ժամանակ, երբ Հիսուս պատվիրում է չերդվել.

«Ասեմ ձեզ՝ ամենեւին մի՛ երդնուլ. մի՛ յերկինս, զի աթոռ է Աստուծոյ, եւ մի՛ յերկիր, զի պատուանդան է ոտից նորա, եւ մի՛ յերուսաղէմ, զի քաղաք է մեծի արքայի»: (Մատթ. Ե.34)

Այս տողի մի հստակ պարզաբանություն ունի Մխիթար Գոշը «Դատաստանագրքում»: Այո՛, արգելված է երդվել, ասում է Մ. Գոշը, սակայն թագավորներն ու իշխանները հաճախ երդում կամ խոստում են տալիս, միայն թե այդ դեպքում պարտավոր են.

«Առ մարդկան անստելի է երդումն, նոյնպէս եւ խոստումն անստելի է»: (Մարդկանց առաջ ունեցած երդումը կամ խոստումը պետք է պահպանել անսուտ կերպով):»:

-8-

Հին հայերը Սուրբ Գրքի տարբեր հատվածներ առաջարկում էին ընթերցել զանազան հոգեվիճակների համար: Պահպանվել են նման առաջադրանքներ, որ անշուշտ գալիս է սուրբգրային այս կամ այն հատվածի ունեցած առավել ուժգին ներգործությունից:

Օրինակ՝ վախի զգացողություն ունենալու դեպքում առաջարկվում է կարդալ Եսայի ԽԳ.1-5 հատվածը, հոգնության դեպքում՝ Մատթ. ԺԱ. 25-30, ընկճվածություն՝ Հռովմ. Ը. 28-39, կասկածանք՝ Հովհ. Ի.24-29, մեռություն՝ Սաղմոս ԻԷ, խաղաղություն՝ Եսայի ԻԶ.1-9 և այլն:

Ամեն ոք կարող է անձամբ համոզվել ներգործության ուժի մեջ՝ ընթերցելով բերվող հատվածները:

Անհանգստություն՝ «Յամենայնի նեղեալք, այլ ոչ նուագեալք. կարօտեալք, այլ ոչ տարակուսեալք. հալածեալք, այլ ոչ լքեալք. չարչարեալք, այլ ոչ սատակեալք: Յամենայն ժամ զմահն Յիսուսի ի մարմինս մեր կրեսցուք, զի եւ կեանքն Յիսուսի ի մարմինս մեր յայտնեսցին»: (Կորնթ. Դ. 8-10)

Վախ՝ «Եւ եթէ անցանիցես ընդ ջուրս՝ ընդ քեզ եմ, եւ գետք զքեզ մի՛ ողողեսցեն, եւ եթէ անցանիցես ընդ հուր՝ մի՛ այրեսցիս, եւ բոց նորա զքեզ մի՛ կիզցէ: Զի ես եմ Տէր Աստուած քո սուրբն Իսրայելի որ փրկեմ զքեզ»: (Եսայի ԽԳ. 2-3)

Փորձություն՝ (այն դրվագն է, երբ սատանան անապատում փորձության է ենթարկում Հիսուսին) «Դարձեալ առնու ածէ զնա սատանայ ի լեռն մի բարձր յոյժ եւ ցուցանէ նմա զամենայն թագաւորութիւնս աշխարհի եւ զփառս նոցա եւ ասէ ցնա. «Զայս ամենայն քեզ տաց, եթէ անկեալ երկիրպագանիցես ինձ»: Յայնժամ ասէ ցնա Յիսուս. «Ե՛րթ յետս իմ,

սատանայ՝ զի գրեալ է՝ Տեառն Աստուծոյ քում երկիր պագցես եւ զնա միայն պաշտեսցես»։ (Մատթ. Դ.8-10)

-9-

Ըստ Ներսես Շնորհալու՝ մատաղը հիշեցնում է առաքյալների շրջանի սիրո ճաշը, և այդ կարգը մեզանում մտցրել է Գրիգոր Լուսավորիչը։ Նախապես օրհնվում է աղը, որ այնուհետև ուտեցնելով անասունին՝ մաքրում է նրան, և մորթելով բաժանվում աղքատներին։

Ծիսական գրքում՝ Մայր Մաշտոցում, մատաղի օրհնության կարգի մեջ ընթերցվում է Ղուկասի Ավետարանի հատվածը, ուր ասվում է.

«Յորժամ առնիցես ճաշ կամ ընթրիս, մի՛ կոչեր զբարեկամս քո, եւ մի՛ զեղբարս քո, եւ մի՛ զազգականս քո, եւ մի՛ զորացիս քո, եւ մի՛ զմեծամեծս. զի մի եւ նոքա փոխարէն կոչեսցեն զքեզ, եւ լինիցի քեզ հատուցումն։ Այլ յորժամ առնիցես ընդունելութիւն, կոչեա՛ զաղքատս եւ զխեղս զկաղս եւ զկոյրս, եւ երանելի լինիցիս, զի ոչ ունին փոխարէն հատուցանելոյ քեզ»։ (Երբ ճաշ կամ ընթրիք ես տալիս, մի կանչիր ո՛չ քո բարեկամներին, ո՛չ քո եղբայրներին, ո՛չ քո ազգականներին և ո՛չ էլ քո հարուստ հարևաններին, որպեսզի նրանք էլ փոխարենը քեզ չհրավիրեն, և քեզ հատուցում լինի։ Այլ երբ ընդունելություն անես, կանչի՛ր աղքատներին, խեղանդամներին, կաղերին ու կոյրերին, և երանելի կլինես, որովհետև փոխարենը քեզ հատուցելու ոչինչ չունեն)։

Սուրբգրային այս մտքից շատ հեռու չէ Հակոբ Նալյանի խոսքը.

«Յորժամ խնջոյս արասցես, մի՛ հրաւիրեսցես զհարուստս եւ զպաշտօնեայս, այլ զաղքատս եւ զրկեալս, որք ընդ ոտից ի տուն քո բերցեն օրհնութիւն Աստուծոյ»։ (Երբ խնջույք կազմակերպես, հարուստներին և պաշտոնյաներին մի՛ հրավիրիր, այլ աղքատներին և զրկվածներին, որոնք ոտքի փոշու հետ քո տուն կբերեն Աստծու օրհնությունը)։

Մատթեոսի Ավետարանն ավարտվում է Հիսուսի՝ Գալիլեայում առաքյալներին տված պատգամով. «Տուալ ինձ ամենայն իշխանություն յերկինս եւ յերկրի. որպէս առաքեաց զիս հայր, եւ ես առաքեմ զձեզ: Գնացէ՛ք այսուհետեւ աշակերտեցէ՛ք զամենայն հեթանոսս, մկրտեցէ՛ք զնոսս յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյ սրբոյ: Ուսուցէ՛ք նոցա պահել զամենայն, որ ինչ պատուիրեցի ձեզ»:

«...Աշակերտեցէ՛ք զհեթանոսս», այսինքն՝ «աշակերտ դարձրեք (ուսուցանեք) հեթանոս ազգերին»:

Այդպես էր առաջին դարում և հետագայում, երբ քարոզում և քրիստոնեության էին դարձի բերում այլադավաններին, հեթանոսներին: Իսկ ի՞նչ են անում մեր օրերում քրիստոնյաներին քրիստոնեություն «քարոզող» աղանդները:

Այդ մասին մեկնաբանող մի ուսանելի գրառում է պահպանվել Վազգեն Ա և Կիլիկիոյ Գարեգին Բ կաթողիկոսների գրույցից:

«Գարեգին Բ – Այս աղանդները, որ տարածվում են մեր ժողովրդի մեջ, հակաքրիստոնեական են իմ հասկացողությամբ: Եթե ուզում են Քրիստոսին քարոզել, ինչու՞ չեն գնում նրանց մոտ, որոնց համար Հիսուս ուղարկում է իրենց:

Վազգեն Ա – Ուրեմն նրանք քրիստոնյա չեն:

Գարեգին Բ – Ամենեն տարրական բացատրությունն է այդ: Թող գնան այն երկրները, այն ժողովրդի մոտ, որտեղ Քրիստոսի անունը դեռ չի լսվել: Սրանց բերածը հոգևոր անիշխանություն է: Քրիստոս եկել է միացնելու, ոչ թե պառակտելու: Սրանք փայլ են, լույս չեն, լույսը մեր եկեղեցուց է գալիս»:

Եկեղեցու ավանդության մեջ ավետարանիչները սովորաբար պատկերվում են խորհրդանիշ պատկերներով, Մատթեոսը՝ մարդ հրեշտակակերպ, Մարկոսը՝ առյուծ, Դուկասը՝ եզ,

Հովհաննեսը՝ արծիվ, որոնք տեսնում ենք մանրանկարչության, որմնանկարչության, քանդակագործության մեջ:



Նման պատկերների մեկնաբանություն շատ կարելի է հանդիպել: Մատթեոսը նույնացվում է մարդու հետ, քանի որ նրա Ավետարանն սկսվում է Քրիստոսի մարդեղության պատմությամբ, իսկ Հովհաննեսը նույնացվում է արծվի հետ, քանի որ իր ավետարանն սկսում է վեր սավառնելով, երբ հայտարարում է Քրիստոսի աստվածությունը՝ «Ի սկզբանէ էր Բանն, եւ Բանն էր առ Աստուած, եւ Աստուած էր Բանն...»:

Այս սիմվոլիկ ներկայացումն իրականում հենված է Եզեկիելի մարգարեության վրա: Մարգարեն մի տեսիլք է տեսնում, թե ինչպես մի հողմ է գալիս՝ ճառագայթներ արձակելով, և դրա մեջ չորս էակների կերպարանքներ կային.

«Եւ կերպարանք երեսաց նոցա՝ կերպարանք մարդոյ, եւ կերպարանք առիւծու յաջմէ չորեցունց, եւ կերպարանք եզին, եւ կերպարանք արծուոյ ի ձախմէ չորեցունց»:

Նույն պատկերը կրկնվում է նաև Հովհաննու Հայտնության մեջ: «Եվ ահա տեսա երկնքի դռները բացված», նկարագրվում է

այնտեղ, ուր երևում է աթոռ, սպիտակ զգեստներով և ոսկե պսակներով երեցներ, աթոռի շուրջը՝ չորս կերպարանքներ.

«Եւ էր առաջին կենդանին նման առիծու, եւ երկրորդ կենդանին նման զուարակի, եւ երրորդ կենդանին ունէր երեսս մարդոյ, եւ չորրորդ կենդանին նման արծուոյ թռուցելոյ: Եւ չորից կենդանեացն էին մի մի ի նոցանէն, վեցթեւեանք շուրջանակի, եւ ի ներքոյ լի էին աչօք, եւ ոչ հանգչէին ոչ տիւ եւ ոչ գիշեր. եւ ասէին. Սո՛րբ, Սո՛րբ»:

-12-

Առանձնահատուկ գործվանքով են նկարագրված մանուկները Նոր Կտակարանում: Հիսուս մանկանց մասին խոսում է՝ նրանց մաքրությունն ի ցույց դնելով, այն աստիճանի, որ Աստծու արքայությունն անգամ մտնել անհնար է, եթե մանկան նման չընդունենք այն: Մանուկներին նվիրված դրվագները բազում են, մի քանի օրինակներ ենք քաղել Ավետարանների տարբեր էջերից:

ա) Հիսուսի աշակերտները վիճաբանում են, թե ով է իրենցից ամենից մեծը: Այդժամ Հիսուս հարցը լուծում է մանկան օրինակով.

«Եւ կոչեաց առ ինքն Յիսուս մանուկ մի, կացոյց զնա ի մէջ նոցա եւ ասէ. Ամէն ասեմ ձեզ, եթէ ոչ դարձչիք եւ լինիջիք իբրեւ զմանկտի, ոչ մտանիցէք յարքայութիւն երկնից»:

բ) Մի առիթով փյունիկեցի ասորի կնոջն ասում է.

«Թո՛յլ տուր, նախ յագեսցին մանկունք. զի ոչ է բարւոք առնուլ զհաց մանկանց եւ արկանել շանց»:

գ) Մեկ այլ առիթով քարոզելիս մի մանկան է նստեցնում իր գրկին և աշակերտներին հորդորում.

«Եւ առեալ մանուկ մի կացոյց ի մէջ նոցա. եւ ընկալեալ զնա ի գիրկս իւր, ասէ ցնոսա. Որ միանգամ յայսպիսի մանկտոյ ընկալցի յանուն իմ, զիս ընդունի: Եւ որ զիս ընդունի, ոչ զիս ընդունի, այլ զայն՝ որ առաքեացն զիս»:

դ) Մի օր առաքյալները սաստում են մարդկանց, որոնք փորձում էին օրհնություն ստանալու համար Հիսուսին մոտենել իրենց մանուկներին: Եվ հնչում է Տիրոջ պատասխանը (ամենից զգայացունց պատկերներից է Ավետարանում).

«Թո՛ւյլ տու՛ք մանկտույդ գալ առ իս, եւ մի՛ արգելուք զդոսս, զի այդպիսեացդ է արքայութիւն Աստուծոյ: Ամէն ասեմ ձեզ, որ ոչ ընդունիցի զարքայութիւն Աստուծոյ իբրեւ զմանուկ, ոչ մտցէ ի նա»: (Թո՛ւյլ տվեք այդ մանուկներին, որ ինձ մոտ գան, և մի՛ արգելեք նրանց, որովհետև այդպիսիներինն է Աստծու արքայությունը: Ճշմարիտ եմ ասում ձեզ, ով որ Աստծու արքայությունը չընդունի ինչպես մի մանուկ, այնտեղ չի մտնի):

Ավետարանների բազմաթիվ այլ էջերում նույնպես կարելի է գտնել մանուկների վերաբերյալ նման դրվագներ, որոց գտնելը թողնում ենք սիրելի ընթերցողին:

-13-

Հայտնի է, թե Ծաղկազարդին Երուսաղեմ մտնելիս մարդիկ ինչպիսի խանդավառությամբ էին դիմավորում Հիսուսին, իսկ ընդամենը մեկ շաբաթ անց քվեարկում Նրան մահվան դատապարտելու համար՝ բղավելով. «ի խաչ հան, ի խաչ հան զդա»:

Իսկ մինչ այդ, երբ Հիսուս Ձիթենյաց լեռան կողմից դեպի Երուսաղեմ էր իջնում, շատերը ձիթենու և արմավենու ճյուղերու նաև իրենց զգեստներն էին փռում ճանապարհի վրա և աղաղակում՝

«Ովսա՛նա բարձրելոյն, օրհնեալ որ գասդ յանուն Տեառն, օրհնեալ թագաւորութիւնդ եկեալ հօր մերոյ Դաւթի. Խաղաղութիւն յերկինս եւ փառք ի բարձունս» (ինչպես մարգարեացել էր Եսային):

Այս միջոցին հրեա փարիսեցիներ են մոտենում Հիսուսին և տեղի է ունենում այսպիսի երկխոսություն.

«Եւ ոմանք ի փարիսեցոցն յամբոխէ անտի ասեն ցնա.

- Վարդապետ, սաստեա՛ աշակերտացդ քոց:

Պատասխանի ետ եւ ասէ.

-Ասեմ ձեզ, զի եւ թէ դոքա լռեսցեն՝ քարինքդ աղաղակեսցեն»։ (Եթե այդ մարդիկ լռեն՝ քարերը կաղաղակեն [Աստվածորդու մուտքը])։

Մի գեղեցիկ ավանդություն ունի մեր եկեղեցին Երուսաղեմում։ Հայկական Ս. Հրեշտակապետաց եկեղեցում ցույց է տրվում քարերից մեկը, որ իրոք աղաղակելիս է եղել Հիսուսի մուտքի պահին։



Այդ քարի պատկերը կարող ենք տեսնել նկարում։ Եվ կամենում ենք ասել, որ Հիսուսի ժամանակներից պահպանված նման մասունքներ սփռված են Ս. Քաղաքի ամեն մի հատվածում, մի մասը՝ հայոց սրբավայրերում։

-14-

Ավետարանում հանդիպում է «մօղուկ քամել» արտահայտությունը։ Այն զարմանալիորեն ընդգրկված չէ գրաբարի դարձվածային բառարաններում, չնայած որ խիստ դարձվածային և տարողունակ իմաստ ունի։ «Վայ»-երի մեջ Հիսուս ասում է.

«Վա՛յ ձեզ, դպրաց եւ փարիսեցւոց կեղծաւորաց... Առաջ-
նորոք կոյրք, որ զմօղուկս քամէք եւ զուղտս կլանէք»: (Վա՛յ ձեզ
կեղծավորներիդ՝ օրենսգետներիդ և փարիսեցիներիդ... Կու՛յր
առաջնորդներ, որ մօղուկները քամում եք և ուղտերը կուլ եք
տալիս):

Եվ ի՞նչ է «մօղուկ քամելը»:

Սովորաբար երբ գինին քամում են մաղի կամ ցանցի միջով
անցկացնելով, մօղուկները մնում են ցանցի վրա, և մաքուր
գինին լցվում է տակաժը: Հնում էլ անշուշտ այդպես են արել,
որպեսզի ըստ հրեաների՝ «անսուրբ» կենդանին օրինավոր
գինու մեջ չանցնի: Եվ Հիսուս ակնարկում է, որ սնտոի զգուշա-
վորությամբ մօղուկին զտում էին, մինչդեռ չէին վարանում
մեծամեծ մեղքեր գործելուց:

Դարձվածքի իմաստը, ուրեմն՝ «մօղուկին անգամ քամել-
զտելն» է: Թեև կարելի է հասկանալ (նաև մեր օրերի համար)
«աղքատ մարդուն կեղեքելու» իմաստով նույնպես:

«Վա՛յ»-երի մեջ մի դիպուկ դրվագ կա: Պարսավանքի
արժանացած մի օրենսգետ մոտենում է Հիսուսին և փորձում
իրեն դուրս դնել մյուսներից: Տեղի է ունենում այսպիսի երկ-
խոսություն.

«Պատասխանի ետ ոմն յօրինականացն եւ ասէ.

- Վարդապե՛տ, զայդ բանս ասելով եւ զմեզ թշնամանես:

Եւ նա ասէ.

- Եւ ձե՛զ վա՛յ, օրինականացդ, զի բառնայք մարդկան բե-
ռինս դժուարակիրս եւ դուք մատամբ միով ի բեռինս ոչ մեր-
ձենայք»: (...Ձեզ նույնպես վայ, ո՛վ օրենսգետներ, որ մարդ-
կանց վրա դժվարակիր բեռներ եք բարձում, բայց դուք մի
մատով անգամ չեք օգնում):

-15-

Ավետարաններն ուսումնասիրելու համար գիտնականները
հաճախ գործածում են «համատես Ավետարաններ» տերմինը:
Այդ տերմինով հասկացվում է, որ Մատթեոսի, Մարկոսի և

Ղուկասի Ավետարանների շատ տեղեր իրենց բովանդակությամբ համընկնում են: Հիսուսի հետ կապված որոշ պատմություններ հանդիպում ենք նշված երեք Ավետարաններում, որոշները՝ միայն երկուսում կամ մեկում: Առանձին է մնում Հովհաննու Ավետարանը: Այդ համընկնումների պատճառները տարբեր կարող են լինել, և ընթերցողը հնարավորություն ունի երեք տարբերակներով իմանալ նույն դրվագի մասին: Օրինակ՝ այն դրվագը, երբ յուդաբեր կանայք գալիս են և իմանում Հիսուսի Հարության մասին, համատես Ավետարանները ներկայացնում են հետևյալ կերպ:

Ա. Մարկոսի Ավետարան	Բ. Մատթեոսի Ավետարան	Գ. Ղուկասի Ավետարան
Ի գերեզմանի երիտասարդ մի զգեցեալ պատմունճան սպիտակ ասէ ցնոսա. Մի՛ երկնչիք, զՅիսուս խնդրէք զՆազովրեցի զխաչեալն, յարեաւ, չէ աստ, ահաւաղիկ տեղին, ուր եղին զնա:	Պատասխանի ետ հրեշտակն եւ ասէ ցկանայսն. Մի՛ երկնչիք դուք, զիտեմ զի զՅիսուս խնդրէք զխաչեալն, չէ՛ աստ, քանզի յարեաւ, որպէս ասացն. եկայք, տեսէք զտեղին ուր կայր:	Եւ իբրեւ զահի հարան եւ խոնարհեցուցին զերեսս իւրեանց յերկիր, ասեն ցնոսա. Զի՞ խնդրէք զկենդանին ընդ մեռեալս, չէ աստ, յարեաւ. յիշեցէք որպէս խօսեցաւ ընդ ձեզ մինչ էր ի Գալիլեա:

-16-

Որ Մաշտոցն է ստեղծել վրացերեն գրերը, հայտնի է Կորյունից. «Հոգ ի մտի արկանէր սիրելին Քրիստոսի եւ վասն բարբարոսական կողմանն: Եւ առնոյր կարգեալ նշանագիրս վրացերէն լեզուին, ըստ շնորհեցելոյն ի Տեառնէ: Գրէր, կարգէր եւ օրինօք յարդարէր»: (Քրիստոսի սիրելին մտածեց հոգ տանել նաև բարբարոսական կողմի համար: Եվ սկսեց տիրոջից իրեն շնորհվածի համեմատ նշանագրեր հորինել վրացերեն լեզվի համար: Գրեց, դասավորեց ու օրինավոր կերպով հարդարեց):

Հայկական «հետքը» վրաց գրավոր մշակույթում տեսնում ենք ողջ միջնադարում, այդ թվում՝ Աստվածաշնչի թարգմանության մեջ: Վրացագետները համոզված են, որ վրացերեն Ս. Գրքի վաղ տարբերակը թարգմանվել է հայերենից ու ասորերենից: Հետո է վերանայվել ու խմբագրվել Ս. Յուրիմովսի կողմից 1026 թ. Աթոս լեռան վրա:

Հայերեն ու վրացերեն թարգմանությունների միջև կապը բնութագրվում է իբրև հոր և դստեր հարաբերություն: Նմանությունները նկատելի են հատկապես Ավետարաններում: Վրացերեն բնագրում սպրդել են վրիպումներ, որ բացատրվել կարող են միայն հայերենով: Ներկայացնում ենք նման մեկ օրինակ:

Մատթեոսի Ավետարանի 21.12 համար. «Եւ եմուտ Յիսուս ի տաճարն եւ եհան արտաքս զամենեսին, որ վաճառէին եւ գնէին ի տաճարի անդ: Եւ զսեղանս հատավաճառացն կործանեաց եւ զպթոռս աղավնեվաճառացն»:

Հովհաննու Ավետարանի 2.15 համար. «Եւ արար խաբազան չուանեայ եւ եհան զամենեսին ի տաճարէն, զոչխարսն եւ զարջառս, եւ զպղինձս հատավաճառացն ցրուեաց, եւ զսեղանն կործանեաց»:

Երկու հատվածում էլ գործածված «հատավաճառ» բառը վրաց թարգմանիչները սխալմամբ հասկացել են հատ(իկ)ավաճառ՝ սերմնավաճառ, և այդպես էլ ներկայացրել իրենց Ս. Գրքում, մինչդեռ այն ունի «որ վաճառէ զհատս դրամոց՝ դրամավաճառ» (ըստ Նոր հայկազեան բառարանի) բացատրությունը: Լեզվական թյուրընկալմամբ ստացվել է, որ Հիսուսը տաճարից քշել է ոչ թե դրամավաճառների, այլ սերմնավաճառների:

-17-

Հայերեն ամբողջական Աստվածաշունչը առաջինը տպագրել է, մեծ ջանքերի գնով, Ոսկան Երևանցին 1666 թ. Ամստերդամում (թվային տարբերակը հնարավոր է գտնել

<http://greenstone.flib.sci.am/> էլեկտրոնային հասցեում): Տպագրության համար հիմք է ծառայել 1295 թ. Հեթում արքայի համար ընդօրինակված ձեռագիրը, որն այժմ պահվում է Մաշտոցյան Մատենադարանում:

Տպագրության թույլտվություն ստանալու և կաթոլիկ միջավայրում «անցկացնելու» համար Ոսկան Երևանցին ստիպված էր մասնակի փոփոխություններ անել բնագրում, իսկ որոշ գրքեր, որ պակասում էին հայերեն կանոնում, նոր թարգմանել: Այդպես ստացվել են հայերեն Ս. Գրքի մի քանի գրքերի նոր թարգմանություններ: Միրաքի գրքի օրինակով կարող ենք տեսնել հին ու նոր թարգմանությունների բնույթը: Առաջին սյունակում տրված են Ոսկան Երևանցու թարգմանած, երկրորդում՝ 1805 թ. Հովհաննես Զոհրապյանի տպագրած Աստվածաշնչի համապատասխան հատվածները: Զոհրապյան տպագրության հիմքում ընկած է Վենետիկում պահվող՝ Աստվածաշնչի 1319 թ. ընդօրինակված ձեռագիրը:

Ոսկանյան 1666 թ. հրատ.	Զոհրապյան 1805 թ. հրատ.
Իմաստութիւն որդոց իւրոց գլեանս ներաշնչեաց և ընկալաւ զխնդրողս իւր:	Որդեա՛կ, իմաստութիւն գորդիս բարձրացոյց:
Երանեալ է այր, որ ներ իմաստութեան համիցի և որ յարդարութեան իւրում մտածիցէ:	Երանեալ է այր, որ իմաստութեամբ խորհի և ի խորհուրդս հանճարոյ իւրոյ խաւսի:
Ներ բարեաց մի՛ տացես տանջանս և ներ ամենեցուն տրոց մի՛ տացես զողորմութիւն:	Որդեա՛կ, բարեաց բամբասանս մի՛ տար, և մի՛ յամենայն տուրս տրտմութիւն բանից:
Իմաստութիւն գաղեալ և գանձ անյայտ, զի՛նչ շահեկանութիւն ներ երկաքանչիւրոց:	Իմաստութիւն ծածկեալ գանձ աներեւոյթ, և այդ յերկոցունց զի՛նչ օգուտ:

Ոսկանյան տպագիր Աստվածաշունչը մեծ ընդունելություն գտավ: Այն վերահպատարակվել է 1705 թ. Կ. Պոլսում, 1733 թ. Վենետիկում, 1817 թ. Ս. Պետերբուրգում, 1817 թ. Կալկաթայի Սիրամպուրում:

-18-

Հայերեն Աստվածաշնչի առաջին գրավոր թարգմանությունն ից առաջ գոյություն է ունեցել 4-րդ դարի թարգմանություն, որի հեղինակն է համարվում Գրիգոր Լուսավորիչը:

Այդ մասին մի մատենագրական վկայություն ունենք 7-րդ դարից: Կոմիտաս Ա Աղցեցի կաթողիկոսի եղբորորդին և Արագածոտնի Ս. Աստվածածին վանքի վանահայր Թեոդորոս Քոթենավորն իր հակառակորդի՝ Հովհան Մայրավանեցու դեմ մի ճառ է գրում, «Ընդդեմ Մայրագումացոյն» վերնագրով, որում հարևանցի հիշատակում է հին այդ թարգմանության մասին:

«Մտքի կաճառները կրկին վիճաբանում են,- գրում է Թ. Քոթենավորը,- քանզի ավետարանական խոսքերը հաճախ տարբեր աղբյուրներում չեն համընկնում, որից մեկը գովում են՝ ընդունելի համարելով, մյուսները՝ հերքում»:

Ահա այստեղ Քոթենավորը հստակ ասում է՝ «Քանզի բազմերգելին Գրիգոր, առաքելաբարոզ նահատակն Քրիստոսի, զամենայն ավետարանական պիտառութիւնսն ճառագրեաց՝ զոր ինչ յաղագս Աստուծոյ բանի տնօրինական կիրառութիւն պիտառէր»: (Քանզի բազմերգելի Գրիգոր [Լուսավորիչը]՝ Քրիստոսի նահատակը, ճառագրեց ավետարանական ամենայն պատգամները, նրանք, ովքեր Աստծու խոսքի վերաբերյալ տնօրինական հրահանգներ ունեին):

Կարծում ենք չպետք է կասկածել, որ «յաղագս Աստուծոյ բանի» խոսքը հատկապես Ս. Գրքի մասին է:

-19-

Հայերեն Աստվածաշնչի հին թարգմանություններից մի հատված հանդիպել ենք Երուսաղեմի հայերեն ձեռագրերի մեջ:

Ս. Հակոբյանց մատենադարանի 864 թվահամար ձեռագրում գտել ենք Սաղմոսարան, որը մեզ հայտնի գրաբար տեքստը չէ, մեկ այլ թարգմանություն կամ խմբագրություն է: Ձեռագիրը բաղկացած է 96 թղթից, բարակ թղթյա կազմ ունի, գրված է փոքր նոտրգիր տառերով:

Ներկայացնում ենք «նորագյուտ» սաղմոսարանից մի քանի հատված: Ուշադիր ընթերցողը կարող է գրաբար Ս. Գրքի համապատասխան տեղերը համեմատել ներկայացվածի հետ՝ հաճախ ակնհայտ տարբերություններ նկատելով:

«Երանեալ է այր, որ ոչ գնաց ի խորհուրդ ամպարշտաց, և ի ճանապարհ մեղաւորաց ոչ եկաց, և ի բազմականի կատակողաց ոչ նստաւ: Այլ յօրէնս տեառն է կամք նորա, և յօրէնս նորա խորհի ի տուէ և ի գիշերի»: (Ա.1-2)

«Ի կարդալ իմում անաւ ինձ, Աստուած արդարութեան իմոյ, ի նեղութեան ընդարձակեցեր ինձ տեղի, ողորմեա՛ ինձ և լու՛ր աղօթից իմոց: Որդիք առն, մինչև յե՛րբ փառք իմ ի խայտառակութիւն եղիցի, սիրէք զաննրութիւն, խնդրէք զստութիւն»: (Դ.1-2)

«Բարձրացուցանեն գբեզ, Տէ՛ր, զի տարար զիս, ևս չուրախացուցեր զթշնամիս իմ յիս: Տէ՛ր Աստուած, գոչեցի առ քեզ և բժշկեցեր զիս: Տէ՛ր, հաներ ի գերեզմանէ՛ զանձն իմ, կեցուցեր զիս յիջանողաց ի գուր»: (Լ.1-3)

-20-

Սուրբ Հակոբ Մծբնեցու (3-4-րդ դարեր) մասին շատ ավանդություններ են պահպանվել: Գրիգոր Լուսավորչի հորաքրոջ՝ Խոսրովուիու որդի Հակոբն առաջիններից էր, որ ցանկացավ բարձրանալ Արարատ լեռը՝ Նոյի տապանը տեսնելու, մասունք բերելու հույսով, որպեսզի փարատի Մծբնի շրջակայքի բնակիչների անհավատությունը: Լեռը բարձրանալիս Հակոբ Մծբնեցին լանջերին հոգնում է և ննջում: Եվ ըստ ավանդության՝ Աստծո հրեշտակը նրա մոտ է դնում Նոյան տապանից մի մասունք:

Հակոբ Մծբնեցու ննջած վայրում բխում է մի աղբյուր, որի սառնորակ ջուրը շատ երկար ժամանակ բուժում է հավատացյալներին:

«Ապա դներ ծունր մեծն Յակոբ ի վերայ երկրին, եւ կայր յաղօթս առ տէր, եւ ի տեղւոջն, ուր եղեալ էր գգուիս իւր, բղխեաց աղբիւր, եւ արբին նա եւ որ ընդ նմայն էին, որ մինչեւ ցայսօր ասեն այնմիկ աղբեր Յակոբայ» (Ըստ Փ. Բյուզանդի):

Մեր լեռնային աշխարհը անհամար աղբյուրներ ունի: Գրիգոր Լուսավորչի ճգնարանի մոտ նրա հրաշագործութեամբ բխել է Բարեհամ աղբյուրը: Սասնա ծռերն իրենց գործությունը ստանում էին Կաթնաղբյուրից: Մեկ այլ Կաթնաղբյուր՝ Օշական գյուղի մերձակայքում, բխել է Մ. Մաշտոցի տապանը դրած տեղից: Միայն անվանումներն արդեն հուշում են դրանց բնույթի, բանաստեղծական անվանումների, սիրված և բուժիչ լինելու մասին՝ Գեղաղբյուր, Հովաղբյուր, Շենաղբյուր, Լուսաղբյուր, Սառնաղբյուր, Զերմաղբյուր, Լանջաղբյուր, Վարդաղբյուր, Զույգաղբյուր, Յոթնաղբյուր...

-21-

Աստվածաշնչի գրքերի հայերեն թարգմանությունների սկիզբը դրվել է, ինչպես Մովսես Խորենացին է նշում, Սամոսատ քաղաքում: Այս առաջին թարգմանությունն ընդունված է անվանել «փութանակի»:

Ավելի ուշ Եդեսիա և Բյուզանդիա են ուղարկվում Մաշտոցի ավագ աշակերտներից Եզնիկ Կողբացին, Հովհան Պաղնացին, Կորյունը և այլք: Եփեսոսի տիեզերաժողովից հետո Հայաստան վերադառնալով՝ նրանք բերում են Սուրբ Գրքի ընտիր օրինակներ (անհավանական չէ կարծել, որ իրենց հետ բերել են Յոթանասնից թարգմանության բնագիրը): Դրա հիման վրա ճշտվում է արդեն եղած թարգմանությունը, սրբագրվում և խմբագրվում է: Աստվածաշնչի այս թարգմանությունն անվանվում է «ընկալյալ»:

«Զոր առեալ մեծին Սահակայ եւ Մեսրոպայ՝ դարձեալ թարգմանեցին զմի անգամ թարգմանեալն փութանակի, հանդերձ նոքօք վերստին յօրինեալ նորոգմամբ: Բայց քանզի անգետք էին մերումս արուեստի՝ ի բազում մասանց թերացեալ գործն գտանէր. վասն որոյ առեալ մեծին Սահակայ եւ Մեսրոպայ զմեզ առաքեցին յԱղեքսանդրիայ, ի լեզու պանծալի, ի ստոյգ յօդանալ ճեմարանին վերաբանութեան»: (Մեծն Սահակ եւ Մեսրոպ ընդունելով Ս. Գրքի օրինակը՝ նորից թարգմանեցին մի անգամ փութանակի թարգմանվածը՝ նրանց հետ միասին նորից հորինելով եւ նորոգելով: Բայց որովհետո նրանք մեր արվեստին տեղյակ չէին, ուստի գործը շատ կողմերից թերի էր դուրս գալիս: Այս պատճառով մեծն Սահակ եւ Մեսրոպ մեզ ուղարկեցին Աղեքսանդրիա պանծալի լեզուն սովորելու, իսկական ճեմարանում կատարելագործվելու):

Ուրեմն՝ ունեցել ենք Ս. Գրքի առնվազն երկու գրաբար բնագրեր՝ փութանակի եւ ընկալյալ: Առաջինից մի քանի պատառիկ կարելի է գտնել ձեռագրերում, իսկ երկրորդը հարատեց եւ այսօր էլ գործածվում է ամենքի կողմից:

-22-

Քրիստոնեական կրոնի ամենից վատթար մեղքը հպարտությունն է. «զհպարտութիւն զամենայն ի բաց ընկեսցուք եւ զմեղս կարեւորս»,- հորդորում է Պողոս առաքյալը: Մեր եկեղեցին ուղղակի սահմանում է յոթ մահացու մեղքերի ցանկը, որ սկսվում է հպարտությունից, ապա և՛ ազահություն, ցանկասիրություն, նախանձ, որկրամոլություն, բարկություն եւ ծուլություն:

Հպարտությանն է անդրադառնում Բարսեղ Մաշկևորցին (13-րդ դար) իր մեկնության մեջ մի տեսանելի հակադրությամբ: Ո՛չ ուժով, ո՛չ գեղեցկությամբ, ձայնով, արագությամբ, սրատեսությամբ կամ մի այլ բանով մարդը առավել չէ, ուրեմն ի՞նչն է հպարտանալու շարժառիթը:

«Զի՞ հպարտանաս, ո՛վ մարդ, թերեւս ուժգի՞ն իցես: Ահա եւ առիւծ եւ վարազ ուժեղ քան զքեզ են:

Այլ թերեւս գեղեցիկ ես: Սակայն քան զսիրամարզն չիցես գեղեցիկ:

Թերեւս ձայնի՞ր ինչ: Զփողն եւ գտխակն չկարես յաղթել:

Թերեւս ոտիւք արագութեա՛մբ: Եւ այնո՛ւ այծեմանց եւ նապաստակաց ոչ կարես յաղթել:

Թերեւս սրատեսութեա՛մբ: Այլ ոչ նման ես արծուոյ:

Թերեւս գործունեա՛յ իցես: Այլ ոչ իբրեւ զմրջին:

Տե՛ն, զի որ քան զամենայն մարդիկ զինքն մեծ համարէր, գտաւ եւ քան զանասուն փոքր»:

Վերջին տողի մեջ («Տե՛ն՝ նա, ով իրեն բոլոր մարդկանցից մեծ էր համարում, կենդանիներից անգամ փոքր գտնվեց») ամփոփված է Բարսեղ Մաշկեղոցու հիմնական միտքը:

Այն էլ հավելենք, որ յոթ մեղքերի դիմաց մեր եկեղեցին թվարկում է յոթ առաքինություններ, որոնց մասին արժե շատ ավելի հաճախ խոսել՝ խոնարհություն, եղբայրասիրություն, հեգություն, աշխատասիրություն, ողորմածություն, ժուժկալություն, ողջախոհություն: Առաքինական հատկությունների ընտրությունը պատահական չէ, դրանք բոլորն ունեն աստվածաշնչային հիմք և մեկնաբանություն:

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Ք

-23-

Հայկական մեծ թվականությունը սկիզբ է առնում Հայկի հաղթանակից: Ամենքիս հայտնի է պատմությունը. Բելը «հետևակ գորքի մեծ ամբոխով» հարձակվում է Հայկի սահմանների վրա՝ նրան հնազանդեցնելու համար, «խոհեմ, քաջագանգուր և խայտակն» Հայկը շտապ հրավիրում է որդիներին, թոռներին, իր ձեռքի տակ եղած քաջ և աղեղնավոր այրերի փոքրաթիվ ուժերը և գալիս հասնում Վանա լճի ափերի մոտ: Երկու կողմերի հսկաներն իրար են բախվում, և «մարտն յերկոցունց կողմանց մնայր անպարտելի»:

Անակնկալի եկած Տիտանյան Բել արքան մի պահ զարհուրում և հետ է քաշվում, որպեսզի վերստին ճակատ կազմի, բայց Հայկի «լայնալիճ աղեղի երեքթևյան նետը» խոցում է նրա կրծքի գրահը, թափանցում-անցնում և ուժգին հարվածից մխրճվում է գետնին.

«Զայս իմացեալ աղեղնաւորին Հայկայ՝ յառաջ վարէ զինքն, մօտ հասանէ յարքայն, լի քարշէ զլայնալիճն, դիպեցուցանէ զերեքթեւեանն կրծից տախտակին, եւ շեշտ ընդ մէջ թիկանցն թափանցիկ լեալ՝ յերկիր հարստի սլաքն. եւ այսպէս ճոխացեալն Տիտանեան կործանի յերկիր զարկուցեալ, եւ փչէ գոգին»: (Աղեղնավոր Հայկն այս բանը հասկանալով՝ իրեն առաջ է նետում, մոտ է հասնում արքային, պինդ քաշում լայնալիճ աղեղը, երեքթևյան նետը դիպցնում է կրծքի գրահին, և սլաքը շեշտակի թափ անցնելով թիկունքի միջով՝ գետին է խրվում:

Այս կերպ գոռոզ Տիտանյանը կործանվում զարնվում է գետնին և շունչը փչում է):



Մեր պատմության նախասկզբի առասպելական մի դրվագ է սա, ուր ծուլված են պատմականի և առասպելականի սահմանները: Տոմարը, սակայն, ի տարբերություն ավանդազրույցի և առասպելի, ճշգրիտ գիտակարգ է, հնարավորություն է տալիս հստակ թվային հաշվումներ կատարելու, օրինակ՝ Հայկի ժամանակը որոշելու համար: Նման հաշվարկներ է արել Ղևոնդ Ալիշանը, ըստ որի՝ Հայկի հաղթանակը եղել է Ք. ա. 2492 թվականին: Ըստ այդմ՝ «բուն հայոց թվականի» 4500 տարին նշվել է 2008 թվականին: Համեմատության համար նշենք, որ նույն տարին համապատասխանում է բուն հրեական տոմարի 5768, մահմեդական հիջրայի 1386 թվականին:

Որ Հայկ Նահապետի հետ է կապված մեր տոմարը, երևում է նաև մեկ այլ փաստից. մեր հին ամիսների անվանումները, ըստ Հովհաննես Իմաստասերի, Հայկի ուստրերի և դուստրերի անուններն են.

«Հայկն՝ առաջին նահապետն հայոց, զամիսք կարգեաց եւ զանուանս ուստերաց եւ դստերաց իւրոց ամսոցդ կոչեաց՝ Նաւասարդ, Հոռի, Սահմի, Մահեկի, Արեգի, Մարերի (Հայկի

դուստրերն են-Ն.Պ.), Տրէ, Քաղոց, Արաց, Հրոտից (որդիներն են-Ն.Պ.)»:

-24-

Հին աշխարհում Հայաստանը մշտապես ընդգրկված է եղել աշխարհագրական, գիտական, պատմական աղբյուրներում: Հռոմեացի Կլավդիոս Պտղոմեոսի (90-168 թթ.) կազմած՝ աշխարհի 27 քարտեզներից բաղկացած ատլասում ներկայացված է նաև Հայաստանը, և այնտեղ գտնուում ենք Մեծ Հայքի 22 և Փոքր Հայքի 10 բնապատմական և վարչական միավորները:



Պտղոմեոսի քարտեզից օգտվել են հայ հեղինակները, այդ թվում Մովսես Խորենացին, Անանիա Շիրակացին:

Պատմահայրը, օրինակ, ասում է, որ Տիգրան արքան Աժդահակին հաղթելուց հետո նրա Անուշ կնոջը և որդիներից շատերին բնակեցնում է Արարատի փլվածքում: Այա ներկայացնում է փլվածքի մասին իր իմացածը, որ քաղել է Պտղոմեոսից.

«Զորմէ լեալ, ասեն, յահագին իմն շարժմանէ, զոր պատմեն, որք բազմաշրջութեամբ հրամանաւ Պտղոմեայ ասպարիսօք բնակութիւնս մարդկան չափեցին, այլ եւ մասն ինչ զծով եւ

զանքնակս յայրեցածէն մինչեւ ցՔիմիւռն»։ (Այս փլվածքը, ասում են, առաջ է եկել մի ահագին երկրաշարժից։ Այս բանը պատմում են այն մարդիկ, որոնք Պտղոմէոսի հրամանով ընդարձակ ուղևորություններ կատարելով՝ ասպարեզներով չափեցին մարդկանց բնակության տեղերը, մասամբ նաև ծովը և անբնակ վայրերը՝ Այրեցյալ գոտուց մինչև Քիմյուռն (=սառուցյալ վայրերը)։

Ուրեմն 5-րդ դարում Հայաստանում քաջ տեղյակ են եղել Պտղոմէոսի ուղարկած մարդկանց մասին, որոնք չափագրումներ են արել, այդ թվում Արարատ լեռան ու նրա մեծ փլվածքի մասին տվյալներ արձանագրել և փոխանցել հին աշխարհի անվանի գիտնականին։

-25-

Մեր լեռնային Հայկական բարձրավանդակը զարմալիորեն խիստ հարուստ է ձկնատեսակներով։ Հատուկ հիշատակելի է Վանա լճի մանրածուկը՝ տառեխը, որի մասին խոսում է Մ. Խորենացին։ Երբ Բելը արշավում է Հայաստան, Հայկ նահապետն իր ուժերով գալիս հասնում է Վանա լճի մոտ.

«Հասանէ յեզր ծովակի միոյ, որոյ աղի են ջուրքն, մանունս ունելով յինքեան ձկունս»։

Պարզ է, որ խոսքը Վանա լճի մասին է, իսկ հիշատակված մանր ձուկը նրա տառեխն է։

Նոր ժամանակներում Հայաստանով ճամփորդելիս Մեսրոպ Թաղիադյանը թվարկում և համառոտ նկարագրում է ձկները։ Դրանց անունները և նկարագրությունն այսօր էլ հետաքրքիր կլինեն.

«Ճանառ է ոչ երկայն եւ նուրբ, այլ յոյր եւ տակառաձեւ, ահագին է գլուխ նորա, եւ բերանն կարի մեծ։

Վարազաձուկն է թերեւս մեծագոյն ի լուդակս Հայաստանի, որ է ձուկն լերկամորթ, ձեւով՝ նման խոզի։

Կապոյտ է ձուկն պարարտ եւ թեփաւոր, փափուկ մսով եւ փշաւոր։

Կարմրախայտ գեղեցիկ է եւ բարեձեւ, եւ է համեղագոյն:

Սեւախայտ՝ յար եւ նման կարմրախայտի, առաւել մեծ եւ ոչ այնքան համեղ է միսս նորա:

Սեւածուկն սեւագոյն է մորթով: Մուրզն է ձուկն սրակնճիթ, գոյն նորա է խառն դեղին եւ սեւա, ծերպամուտ եւ դժուարորս է սա:

Միեն թէպէտ ոչ այնքան պարարտ, սակայն համեղ է:

Իշխանածուկն՝ գլուխ ամենայն ձկանց, համեղագոյն եւ պարտամարմին է յոյժ, այլ ափսո՛ն որ հագուագիւտ է»:

-26-

Խոսրովի անտառը հիմնվել է մոտ 1680 տարի առաջ: Բազմաթիվ արքաներ են անտառներ տնկել: Մ. Խորենացին հիշատակում է մի քանիսին, օրինակ՝ Տրդատ Մեծի որդի Խոսրով Գ-ին.

«Զի թէպէտ էր [Խոսրովն] մարմնովն փոքր, այլ ոչ որքան մակեղովնացին Աղեքսանդր, որ միայն երից կանգնոց ունէր զչափ հասակի, եւ ոչ զհոգւոյն խափանէր աշխոյժս. իսկ սորա զքաջութենէ եւ զբարի յիշատակաց անփոյթ արարեալ՝ զբօսանաց եւ հաւորութեանց եւ այլոց որսոց պարապեալ: Նորին աղագաւ եւ անտառ առ Ազատ գետովն տնկէ, որ յանուն նորա կոչի մինչեւ ցայսօր ժամանակի: Նա եւ զարքունիսն փոխէ վերոյ անտառին յոստ մի, ապարանս հովանաւորս շինեալ, որ ըստ պարսկական լեզուին Դուին կոչի, որ թարգմանի բլուր: Քանզի ի ժամանակին յայնմիկ Արէս ուղեկցեալ արեգական, եւ օղբ ջերմայինք պղտորեալք ժանդահոտութեամբ փչէին, յորմէ ոչ կարացեալ ժուժել որք յԱրտաշատն բնակեալ էին՝ կամաւ յանձն առին զփոփոխումն»:

Խոսրով Գ-ից դարեր առաջ Ծննդոց անտառ է հիմնել Երվանդ արքան.

«Տնկէ եւ մայրի մեծ ի հիւսիսոյ կողմանէ գետոյն եւ որմովք ամրացուցանէ՝ արգելլով ի ներքս այծեմունս երագունս, եւ գեղանց, եւ գեղջերուաց ազգ, եւ ցիռս, եւ վարագս. Որք ի բազմու-

թիւն աճեցեալ՝ լցին զանտառ, որովք ուրաշանայր թագաւորն յակուրս որսոց: Եւ անուանէ զանտառն Ծննդոց»:

-27-

Հայոց դարձը և մկրտութիւնը նկարագրում է Ագաթանգեղոսը՝ վկայելով, որ Արածանիում մկրտվել է 15 բյուր մարդ.

«Առեալ այնուհետև երանելոյն Գրիգորի զաշխարհաբանակ զօրացն եւ զինքնին զթագաւորն և զկին նորա Աշխէն, եւ զմեծ օրիորդն Խոսրովիդուխտ, եւ զմեծամեծսն ամենայն, եւ ամենայն մարդկաւ բանակին հանդերձ, ընդ այգն ի լուսանալ առաւօտուն յափն Եփրատ գետոյն մատուցանէր, եւ անդէն մկրտէր առ հասարակ զամենեսեան յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ»: (Երանելի Գրիգորը առավ աշխարհաբանակ զորքը և իրեն՝ թագավորին, նրա տիկին Աշխենին, մեծ օրիորդ Խոսրովիդուխտին, ամենայն մեծամեծներին և բանակի բոլոր մարդկանց, առավոտյան այգը լուսանալուն պես Եփրատ գետի ափը տարավ և այնտեղ մկրտեց առհասարակ ամենքին հանուն Հոր և Որդու և Սուրբ Հոգու):

Մկրտության պահին մի հրաշքի նշան է կատարվել, գետի ջրերը կանգ են առել ու ետ դարձել, սաստիկ լույս է երևացել լուսավոր սյան նման և կանգնել ջրերի վրա, որի մեջ ի հայտ է եկել տերունական խաչի նշանը: Թերևս Աստծու նշանն էր դա՝ երևացած հայ ազգի մկրտության առիթով:

«Եւ ամենեքեան զարմացեալք բարձրացուցանէին զօրհնութիւն ի փառս Աստուծոյ»:

-28-

Տրդատ Մեծը մինչ արքայական թագն ընդունելն ու Հայաստան վերադառնալը մեծ քաջագործություններով է իրեն պսակել Հռոմեական կայսրությունում: Մի անգամ, երբ Լիկիանես զորապետը (ապագա կայսրը) զորքն առած, որի մեջ էր նաև Տրդատը, շտապում էր կայսերը ներկայանալու, պատահում է, որ մի քաղաք են հասնում երեկոյան, երբ պարսպի

դռները փակ էին, իսկ զինվորներն ու կենդանիները՝ անոթի: Ապա գտնում են բարձր պարսպով պատված մթերանոց, որտեղից միայն Տրդատն է կարողանում բարձրանալ և դեզ-դեզ պաշար նետել այս կողմ:

«Իբրեւ ոչ գտաւ խար երիվարաց զօրուն բազմութեան դարմար կերակրոյ մինչեւ ի մէջ գիշեր՝ հայեցեալ տեսանէին ի զուարափակ քաղաքորմի միոջ, զի խստահամբար մթերեալ էր: Եւ ոչ ոք կարաց ձգել զձեռն իւր վասն որմոյն բարձրութեան: Յայնժամ Տրդատէս ելեալ եւ իջեալ՝ հոսէր ընկենոյր բարդս բարդս ի մէջ զօրացն մինչ ի լիութիւն բաւականի: Նա եւ զհամբարապանսն իսկ եւ բազում ի շանց յայնկոյս որմոյն ընկենոյր ի մէջ զօրացն, եւ ինքն անդրէն ելեալ իջանէր: Զայն ամենայն ոյժ պնդութեան տեսեալ՝ Լիկիանէս զարմացաւ»: (Երբ զորքի բազմության երիվարներին անասնակեր չոր խոտ չգտնվեց մինչև կեսգիշեր, նայեցին ու տեսան, որ քաղաքի պարսպից ներս անասունների բակում խոտի դեզեր էին մթերված, և ոչ ոք չկարողացավ իր ձեռքը հասցնել պարսպին բարձրության պատճառով: Այնժամ Տրդատը ելավ և իջնելով խոտը դեզ-դեզ նետեց զորքերի մեջ, մինչև որ բավարարվեցին: Իսկ վերակացուներին ու բազմաթիվ շներից շատերին պարբսպից այն կողմ զորքերի մեջ նետեց ու ինքն այնտեղից ելնելով իջավ):

Այս մասին պատմում են կայսրին, որ և հանձնարարում է, որ Տրդատն իր փոխարեն մենամարտի գոթերի արքայի դեմ: Տրդատը, բնական է, հաղթում է հակառակորդ արքային ու բերում «յանդիման առաջի կայսերն կացուցանէր»:

-29-

Շինականների, գյուղատնտեսության դերը հայ պետության մեջ մշտապես բարձր է գնահատված եղել: Մի բնորոշ օրինակ գտնում ենք Փ. Բուզանդի մոտ:

Արշակ Բ-ի թագադրումից հետո ի վերջո մեծ խաղաղություն հաստատվեց երկրում, ցրված և թաքնված բոլոր

մարդիկ հնարավորություն ունեցան հավաքվելու և ապահով կյանքով ապրելու՝ «վայելեալք յիրաքանջիւր յարարս իւրեանց», գրում է Փ. Բուզանդը («յարարս» բառը Ստ. Մալխասյանցը նախընտրել է թարգմանել «խաղաղություն վայելեցին», բայց կարծում ենք ավելի տեղին կլինի հասկանալ այսպես՝ «յուրաքանչյուրը վայելում էր իր ունեցվածքը»):

Մեծամեծները վերահաստատվեցին իրենց աթոռներում, գործակալները՝ իրենց պաշտոններում, «նորոգեցաւ զուարթացաւ տէրութիւնն թագաւորութեանն Հայաստան երկրին, որպէս եւ զառաջինսն»: Հազարապետ է նշանակվում Գնունյաց «շինականաշեն» ազգը: Եվ ու՛մ է նորոգության առաջին պայման հիշատակում Փ. Բուզանդը, շինականներին և աշխարհը շենացնող գյուղացիությանը.



Եւ սկիզբն գործակալութեան հազարապետութեանն աշխարհատեսն խնամակալութեանն, աշխարհաշէն աշխարհատարած դեհկանութեան, շինականաշէն ազգն Գնունեաց՝ հազարապետն ամենայն երկրին»: (Եվ առաջին գործակալ հազարապետ նշանակեց շինականներին շենացնող Գնունյաց ցեղը, որպեսզի իբրև բոլոր երկրի հազարապետներ՝ հոգատարութեամբ խնամեն աշխարհաշէն՝ աշխարհը կերակրող գյուղացիությանը):

Մեր պատմության ուսանելի դրվագներից է դավաճանական քայլերով երկիրը խռովության հասցրած Մերուժան Արծրունու պատժի նկարագրությունը:

Մերուժանը որոշ այլ նախարարների հետ լքել էր Արշակ Բ արքային, դարձել պարսկական կողմնորոշման ղեկավարներից: Բայց երբ Բագրևանդ գավառի Ջիրավի դաշտի ճակատամարտում 371 թ. Պապ թագավորի և Մուշեղ Մամիկոնյանի զորքը հռոմեացիների հետ լիակատար հաղթում է պարսիկներին, ձերբակալվում է նաև այս Մերուժան Արծրունին: Նրա ձին վիրավորված լինելու պատճառով չի կարողանում փախուստի դիմել, և Սմբատ սպարապետը Կոգովտի կողմնորոշման ձերբակալում է Մերուժանին, բայց չի տանում հայոց բանակը, այլ հենց տեղում գտնում է վրանաբնակ մարդկանց, գուցե հովիվների, որոնք միս խորովելու համար կրակ էին վառել և շամփուր պատրաստել: Հենց այս պարագաներով էլ, Մովսես Խորենացու նկարագրությամբ, Սմբատը պատժում է չարագործին հետևյալ կերպ.

«Զտեղեօքն գտանէ գոմանս խորանաւորս հուր լուցեալ, և շամփուր երկաթի՝ միս խորովելոյ, զոր ջեռուցեալ, կրկնեալ բոլորեալ որպէս պսակ, եւ յոյժ արտաշէկ արարեալ՝ ասէ. «Պսակեմ գքեզ, Մեհրուժան, քանզի ի խնդիր էիր թագաւորել Հայոց: Եւ ինձ՝ ասպետիս պարտ է գքեզ պսակել ըստ սովորական իշխանութեան իմոյ հայրենեաց»: Եւ մինչ դեռ տաքն էր իբրեւ զհուր՝ եդ ի գլուխն Մեհրուժանայ, եւ այնպէս սատակեցաւ չարն: Եւ յայնմ հետէ խաղաղեցաւ երկիրն՝ ընդ ձեռամբ Պապայ նուաճեալ»: (Նույն տեղում պատրաստ է գտնում վրանաբնակներ, որոնք կրակ էին վառել, որպէսզի միս խորովեն երկաթե շամփուրով: Նա, շամփուրը տաքացնելով, երկու փաթ ոլորեց պսակի ձևով և շիկացնելով ասաց. «Պսակում եմ քեզ, Մեհրուժան, որովհետև ձգտում էիր Հայոց վրա թագավորելու, և իմ՝ ասպետիս պարտքն է քեզ պսակել իմ հայրենի իշխանության կարգով):

Մեր պետական աստիճանակարգում թագադիր ասպետները Բագրատունի իշխաններն էին, և այդպես՝ շիկացած շամփուրով էլ Բագրատունի Սմբատը «թագադրում է» դավաճան Մերուժանին:

-31-

Ձիրավի ճակատամարտում (371 թ.) հայկական բանակը հռոմեական զորագնդի օժանդակությամբ լիակատար հաղթեց պարսիկներին, և Պապ թագավորը վերահաստատվեց հայոց գահին:

Ճակատամարտի բուն պահը Մ. Խորենացին իրեն հատուկ գեղարվեստական և ռազմական շնչով է նկարագրում. արևի շողերի միջից ճառագայթի նման դուրս էին թռչում մեր զրահավոր քաջերը:

«Ի ծագել արեգականն ընդդէմ մերոց զօրացն, ի պղնձապատ վահանացն նշոյլք զլերամբքն փայլատակէին իբրեւ յամպոյ մեծէ, եւ ի նոցանէ ի դուրս ոստչէին ի մերոց նախարարացն քաջ զրահաւորք՝ որպէս փայլատականց ճառագայթք, յորոց միայն ի տեսութենէն զանգիտեալ պարսկական գունդն, սակաւ ինչ եւ մերն, վասն ոչ կարել հայել ընդդէմ արեգականն ծագման»: (Երբ արևը ծագեց մեր զորքերի դեմ, պղնձապատ վահանների ցոլքը լեռների վրա էր փայլատակում ինչպես մեծ ամպից, և այդտեղից փայլատակող ճառագայթների նման դուրս էին թռչում մեր նախարարներից քաջ զրահավորները, որոնց միայն տեսքից պարսկական գունդը երկյուղի մեջ ընկավ, բայց մի քիչ նաև մեր գունդը, քանի որ դիմացից ծագած արևի պատճառով անկարելի էր դեմուդեմ նայել):

Ռազմական մեկ այլ նկարագրություն՝ Հին Կտակարանից, նույնպես տեղափոխում է անտիկ ժամանակների ռազմադաշտերն ու գնդերի զորաշարժերը: Սա եգիպտացիների դեմ անտիոքացիների վարած մարտի նկարագրության մի դրվագ է.

«Անդ էր լսել թնդիւն վահանաց, շկահիւն զաղեղանց, շողիւն սուսերաց, շաջիւն նշանաց, շառաջիւն նետից, գփայլիւն

զոսկեղէն վառելոց»։ (Այնտեղ լսելի էր վահանների բախվելը, աղեղների շաչումը, սուսերների շողալը, դրոշների փողփողումը, նետերի շառաչումը, ոսկու պես գեներների փայլատալումը)։

Հին հույներից Պլուտարքոսը վկայում է, որ սպարտուհի Գորգոն իր որդուն ճակատ ուղարկելիս վահան է տվել և ասել՝ «Կան՝ վահանով, կան՝ վահանին», այսինքն՝ կան՝ հաղթանակած վերադարձի՝ վահանով, կան՝ քաջաբաց գոհված՝ վահանի վրա։ Գրաբար նույն միտքը կինչի այսպես. «Վահանան կամ ի վահանի»։ Ավելորդ չէ բերել նաև լատիներեն թարգմանությոնը. *Aut cum scuto, aut in scuto!*

-32-

Կար ժամանակ, որ Հռոմի ու Բյուզանդիայի կայսրերն էին հայոց արքաներին ընծաներ ու նվերներ (պետք է հասկանալ կաշառք) ուղարկում՝ ինչ-ինչ հարցեր լուծելու ակնկալիքով։ Օրինակ՝ Փավստոս Բուզանդը պատմում է, որ Վաղես կայսրը հայ նախարարների միջոցով Արշակ Բ-ին բազում գանձեր կաշառք է ուղարկել՝ Ներսես Մեծ կաթողիկոսի հետ կապված մի խնդիրը լուծելու հույսով։

«Իսկ յայն իշխանաց, որ ընդ սրբոյն Ներսէսի երթեալ էին յերկրէն Հայոց, գնոսա բազում գանձիւք լցեալ [Վաղեսն] արծակէր, կաշառակուրծս կաշառաւեկս առնէր առ հասարակ՝ որ միայն անդ էին։ Եւ բազում ոսկւոյ եւ արծաթոյ եւ ականց պատուականաց ի ձեռն նոցա [Արշակայ] արքային առաքէր, իբրեւ այնու կամէր հաճել զմիտս թագաւորին»։ (Իսկ այն իշխաններին, որոնք Հայոց աշխարհից Սուրբ Ներսեսի հետ գնացել էին, Վաղեսը արծակում էր՝ շատ գանձերով լիացնելով, բոլորին կաշառակուրծ կաշառքներով լիանցում էր, որ այնտեղ էին։ Եվ նրանց ձեռքով ոսկու, արծաթի և թանկագին ակների մեծ գանձեր էր ուղարկում Արշակ թագավորին նրա սիրտը առնելու համար)։

Բերված հատվածում տեսնում ենք, որ հին հայերը շատ ավելի կոշտ էին արտահայտվում, գործածում էին կաշառակուրծ բառը, այսինքն՝ «կաշառք կրծող», և ոչ թե սոսկ ուտող՝ կաշառակեր:

-33-

«Անուն քաջութեան յերկրի թողցուք, եւ զարդարութիւն յերկինս ընծայեցուցանէք»: (Երկրի վրա քաջության անուն թողէք և ձեր արդարությունը երկնքին նվիրէք):

Մանուել Մամիկոնյանի հռչակավոր պատգամն է սա, որ բառացի պահպանվել է Փ. Բուզանդի պատմության մեջ:

Մանվել Մամիկոնյանը՝ Մուշեղ Մամիկոնյանի հորեղբորորդին, հաղթանակներից հետո հայ նախարարների համաձայնությամբ թագավոր է հռչակում Պապ թագավորի անչափահաս որդի Արշակ Գ-ին (378-389) և արքայամայր Զարմանդուխտի հետ ստանձնում նրա խնամակալությունը: Մակայն շատ չանցած հիվանդանում է, իր պաշտոնն ու տերությունը հանձնում իր Արտաշիր որդուն՝ պատվիրելով անձնագոհ պատերազմել, ջանալ ու աշխատել Հայաստանի համար:

«Անուն քաջութեան յերկրի թողցուք, եւ զարդարութիւն յերկինս ընծայեցուցանէք:

Եւ ամենեւին ի մահուանէ մի՛ երկնչիք:

Եւ զնենգութիւն եւ զպղծութիւն եւ զչարութիւն յանձանց ձերոց ի բաց արարէք եւ զՏէր Աստուած սրբութեամբ եւ միամտութեամբ պաշտեցէք»:

(Երկրի վրա քաջի անուն թողէք և ձեր արդարությունը երկնքին նվիրէք: Մահից ամենեւին մի՛ վախեցէք: Ձեզ հեռու պահէք նենգությունից, պղծությունից և չարությունից և Տէր Աստծուն ծառայէք մաքուր սրտով և հավատարմությամբ):

-34-

Ավագանին հնում մեր պետության աշխարհիկ ազնվականության վերնախավն էր, նրա մեջ մտնում էին նահապետ-

ները, իշխանները, սեպուհները: Կարևոր վճիռները թագավորները հաճախ էին կայացնում ավագանու հետ խորհրդակցելուց հետո:

Ավագանին նաև արքաների շքախումբն էր: Կորյունը, օրինակ, հատուկ շեշտում է, որ ավագանու ուղեկցությամբ են արքան ու կաթողիկոսը մայրաքաղաքից դուրս եկել՝ Մաշտոցին դիմավորելու խնդրությամբ.

«Եւ արդ՝ եկեալ յիշելին մերձ ի թագաւորական քաղաքն, ազդ լինէր թագաւորին եւ սրբոյ եպիսկոպոսին: Որոց առեալ զամենայն նախարարագունդ աւագանւոյն ամբոխ, ի քաղաքէն ելեալ՝ պատահէին երանելւոյն զափամբ Ռահ գետոյն: Եւ զգանկալի ողջոյնն միմեանց տուեալ՝ ... օրհնութեամբք ի քաղաքն դառնային, եւ զաւուրս տօնական ուրախութեամբ անցուցանէին»: (Եվ արդ, երբ հիշելին եկավ մոտեցավ թագավորական քաղաքին, իմաց տվեցին թագավորին և սուրբ եպիսկոպոսին: Նրանք, նախարարագունդ ավագանու բոլոր բազմությունն առնելով, քաղաքից դուրս եկան, Ռահ գետի ափին դիմավորեցին երանելիին: Եվ ցանկալի ողջույնը միմյանց տալուց հետո... օրհնություններով ետ դարձան քաղաք և տոնական ուրախությամբ անցկացրին օրերը):

-35-

Ղազար Փարպեցին Վահան Մամիկոնյանի մանկության ընկերն է և սննդակիցը: Ավարայրից հետո Վահան Մամիկոնյանի այրիացած մայրը՝ Զվիկը, որդիների հետ տեղափոխվում է Յուտավ, և նրանց հետ է լինում նաև մեր ապագա պատմիչը:

480-ական թթ. կեսերին արդեն մարզպան դարձած Վահան Մամիկոնյանը Փարպեցուն հրավիրում և նշանակում է Վաղարշապատի վանքի առաջնորդ, ուր կարողանում է կարգավորել միաբանության գործերը, մեծ հեղինակություն է ձեռք բերում:

Եվ ինչպես հաճախ է լինում նման դեպքերում, լավ գործերը անպատիժ չեն մնում, սկսում են հակառակորդների խարդավանքները, ամբաստանությունները Վահան Մամիկոնյանի մոտ: Փարպեցին ստիպված հեռանում է Ամիդ և այնտեղ գրում է իր հայտնի «Թուղթ առ Վահան Մամիկոնեան» նամակը, որ ունի նաև «Մեղադրություն ստախոս արեղայից» անվանումը:

Ես այն Ղազարն եմ,- հիշեցնում է նամակագիրը,- «ըստ առ ի քէն տեսնէ եւ այլոց բազմաց ասացի, որում ոչ ոք գոյ փոխանակ: Իսկ այժմ, առ նախանձու աղետի, բազումք նկրտէին լինել իմ փոխանակ. բայց եթէ իցեն»: (Եվ ես այն Ղազարն եմ, որին քո՝ տիրոջդ և ուրիշ շատերի ասածների համաձայն ոչ ոք չի կարող փոխարինել: Իսկ այժմ, չար նախանձից, շատերն են ձգտում լինել իմ փոխարեն: Երանի՜ թե լինեին):

«Համարձակիմ ասել ի տոյնս յանդգնութեամբ եւ զայս եւս.- եթէ ոչ իցեն ստոյգ կարծեցեալքս յինէն, դու տէր, քաղցրութեամբ զանց արարեալ՝ ներեսջի՛ր ինձ որպէս տկարամտի, զի քոյում իսկ ամենասքանչ անձինդ, յորմանէ ամենայն մարդ ի Հայս, յաւագ եւ ի կրտսեր, հասեալ է մեծապէս օգտակարութիւն եւ գահ եւ փառք, իսկ ոմանք՝ եւ ի մահուանէ ի կեանս, եւ ի կորստենէ գտանել եւ ի միջի լինել, դու տէ՛ր, եղեալ ես պատճառ»: (Համարձակվում եմ, սրանց հետ միասին, ասել նաև, որ եթե ստույգ չլինեն իմ կարծիքները, ապա, դու, տէ՛ր, քաղցրությամբ զանց առնելով՝ ների՛ր ինձ որպէս տկարամտի, քանի որ քո ամենասքանչելի անձն է, որից Հայաստանի բոլոր մարդկանց, մեծից փոքրը, հասել է մեծ օգուտ՝ և՛ գահ, և՛ փառք, իսկ ոմանց էլ, տէ՛ր, մահից փրկել, կյանքի ես արժանացրել, կորստից հանել, դրել մարդամեջ):

Թուղթը ժամանակին գրաբարից աշխարհաբար է փոխադրել Միքայել Նալբանդյանը, որ ցույց է տալիս մեր հեղինակի գրաբարի լավ իմացությունը, և ներկայացված աշխարհաբար հատվածները քաղել ենք հենց նրա փոխադրածից:

Պատմահոր այս խոսքերից՝ «Ողբան գլեզ, Հայոց աշխարհ», որ թևավոր արտահայտության է վերածվել, անցել է մոտ 1530 տարի: Հանրահայտ «Ողբ»-ն է դա, ուր Մ. Խորենացին դիմում է Երեմիա մարգարեին, և ինքն էլ մարգարեանում, թե՛ «ինչ թշվառություններ կրեցինք և դեռ պիտի կրենք»:

«Զարթիր, Երեմիաս, զարթիր եւ ողբա՛ հանդերձ մարգարեանալով, որ ինչ թշուառացաքս եւ որ ինչ թշուառանալոցս եմք. գուշակեա՛ գլառնել հովուաց տգիտաց, որպէս երբեմն Զաքարիաս յԲարայելին...

Իշխանք ապստամբք, գողակիցք գողոց, կծծիք, ժլատք, ագահք, յափշտակողք, աշխարհաւէրք, աղտեղասէրք, ծառալիցն համամիտք:

Դատաւորք տմարդիք, սուտք, խաբողք, կաշառառուք, անընտրողք իրաւանց, անհաստատք, հակառակողք: Եւ բարձումն առ հասարակ յամենեցունց սիրոյ եւ ամօթոյ»:

Հայաստանից 50 անգամ փոքր Մինգապուրում 1965 թ. արդար ընտրությամբ վարչապետ դարձավ Լի Կուան Յուն: Այդ ժամանակ երկրում մեկ շնչին ընկնող 450 դոլար համախառն եկամուտը տարիներ անց դարձրեց 80.000 դոլար: Սա հայտնի է «Մինգապուրի հրաշք» տնտեսագիտական տերմինով: Դրա ծրագրի առաջին կետերից մեկը ուղղակիորեն ձևակերպվում է այսպես՝ «ներգրավել և գուրգուրել տաղանդներին»:

Հիմա ի՞նչ կապ ունի գրաբարն այս ամենի հետ: Եղիշեի երկում պահպանվել է Լի Կուան Յուի առաջարկածի հակապատկեր մի նկարագրություն: Հագկերտը, երբ ցանկանում է հայոց միաբանությունը քանդել ու ավիրել, հակառակը՝ տգետ ու անարժան մարդկանց էր ասպարեզ տալիս ու առաջ տանում, իսկ արժանավորներին հետ մղում:

«Սկսաւ այնուհետեւ յառաջ կոչել զկրտսերս յաւագաց եւ զանարգս ի պատուականաց եւ զտգէտս ի գիտնոց եւ զանարիս

ի քաջ արանց: Եւ զի՞ մի մի թուիցեմ, այլ զամենայն զանար-
ժանս յառաջ մատուցանէր եւ զամենայն զարժանաւորս յետս
տանէր, մինչեւ զհայր եւ զորդի քակէր ի միմեանց»: (Այնուհետև
սկսեց առաջ քաշել կրտսերներին ավագների միջից և անար-
զներին պատվականների միջից: Եվ էլ ի՞նչ մեկ-մեկ թվեմ, բոլոր
անարժաններին առաջ էր քաշում, իսկ բոլոր արժանավոր
մարդկանց հետ էր տանում, մինչև անգամ հորն ու որդուն
բաժանում էր միմյանցից):

-38-

Բարեպաշտությամբ Աստծուց անձրև խնդրելը հատուկ է ոչ
միայն սուրբգրային ժամանակներին: Եղիա, Երեմիա մարգա-
րեններին չի զիջում հայոց Մուշե Այլաբերցի կաթողիկոսը:

Սյունիքի իշխանները, ավագներն ու հոգևորականները 526
թ. խնդրում են, որ «մեծահաւատ, լի ամենայն բարեպաշ-
տութեամբ» Սյունյաց Սահակիա իշխանուհին Սյունիք հրավի-
րի Մուշե Այլաբերցի կաթողիկոսին՝ իրենց համար հոգևոր ա-
ռաջնորդի ընտրություն կազմակերպելու և ձեռնադրելու հա-
մար:

Ուղևորվում է կաթողիկոսը Սյունիք, և, ինչպես պատմում է
Ստ. Օրբելյան պատմիչը, ճանապարհին Վայոց ձորում ամե-
նուր տեսնում է սուր երաշտ, բույսերը՝ չորացած ու թորշոմած:
Արտասվագոչ պաղատանքով Մուշե հայրապետը, ձեռքերը վեր
բարձրացրած, դիմում է առ Աստված, գգնում է Տերը, և երեք օր
ու զիշեր տեղում է փրկարար անձրևը.

«Որ և ի ժամուն ցօղեաց Տէր զցօղ քաղցրութեան, և զա-
ւուրս երիս զցայգ և զցերեկ ոչ դադարեաց ի տեղալոյ, և ամե-
նայն երկիրն զարմացեալ փառս ի վեր առաքէր մեծաւ գոհու-
թեամբ»:

Կաթողիկոսին դիմավորելու եկած Սահակիա իշխանուհին,
ոտքով և հեծյալ ուղեկցող բոլոր մարդիկ «մեծաձայն աղաղա-
կաւ երգէին զերգս օրհնութեան»:

Տեղին է ասել, որ Մուշե Այլաբերցու գյուղը հնչյունափոխված ներկայիս Ալափարսն է Կոտայքի մարզում՝ հնամենի մեր գյուղերից մեկը: Այնտեղ գործում է Ս. Վարդան անունով եկեղեցին, ուր որպես մասունք պահպանվում է Վարդան Մամիկոնյանի արյունացող քարը: Մարդիկ այդպես էլ կոչում են եկեղեցին՝ Սվարդան, և ամեն տարի բերքահավաքից հետո բազմամարդ կերպով նշում «Սվարդանա ուխտը»:

-39-

Հնում հեռավորությունը չափելու տարբեր համակարգեր կային, պատմիչների մոտ շատ կարելի է հանդիպել չափման տարբեր միավորների: Այդպիսի մի չափում էր ճանապարհն ըստ ժամանակի հաշվելը, որի համար բազմաթիվ օրինակներ ունենք.

«Բացագոյն իբր մեծօր հասարակ աւուր միոյ հետեւակագնացի առն ճանապարհի» (Մ. Խորենացու այս հատվածի Ստ. Մախապյանի թարգմանությունն է՝ «հետևակ մարդու կես օրվա ճանապարհով երկար օրում»):

«Զեւանվիշն ելանէ իբրեւ աւուր միոյ ճանապարհի ի վեր կոյս Պերոժ Կաւատ քաղաքի»: (Զևանշիրը ելնում է մոտ մեկ օրվա չափ ճանապարհի դեպի վեր՝ Պերոժ Կավատ քաղաքը): Ըստ Մովսես Կաղանկատվացու՝ Զևանշիր իշխանը հյուսիսային ցեղերին հաղթելուց հետո եկեղեցի է կառուցում մեկ օրվա չափ ճանապարհի հեռավորության վրա գտնվող քաղաքում:

«Ապա դարձան յԵրուսաղէմ անուանեալ լեռնէն Զիթենեաց, որ է մերձ յԵրուսաղէմ ըստ շաբաթուն ճանապարհի»: (Ապա Երուսաղէմ վերադարձան Զիթենյաց կոչվող լեռից, որ Երուսաղէմին մոտ է շաբաթ օրն անցնելիք մի ճանապարհի չափ):

Մեկ օրվա անցնելիք ճամփան սովորաբար լինում էր մոտ 30-35 կիլոմետր: Ընդ որում, հնում մի սովորություն է եղել՝ առաջին օրվա ճանապարհին անցնել ոչ շատ երկար, որպեսզի որևէ բան մոռանալու դեպքում հնարավոր լիներ վերադառնալ:

Թերևս այդպես կարճ «մեկ օրվա ճանապարհ» են անցել Հիսուսի ծնողները, որի մասին ակնարկում է Ղուկասի Ավետարանը.

«Եւ կատարել զաւուրսն եւ դառնալ անդրէն, մնաց Յիսուս մանուկն յԵրուսաղէմ, եւ ոչ գիտացին ծնաւորքն նորա: Կարծէին զնմանէ, թէ ընդ ուղեկիցսն իցէ. եկին իբրեւ աւուր միոյ ճանապարհ, եւ խնդրէին զնա ընդ դրացիս եւ ընդ ծանալթս»: (Եվ երբ տոնական օրերը լրացան, ու նրանք վերադարձան, մանուկ Հիսուսը մնաց Երուսաղեմում, և նրա ծնողները այդ չիմացան: Կարծում էին, թե նա իրենց ուղեկիցների հետ է. մի օրվա չափ ճանապարհ եկան և նրան փնտրեցին ազգականների ու ծանոթների մեջ):

-40-

Հայկական թվականով մեզ հասած ամենահին գրավոր հիշատակումը Թալինի մայր եկեղեցու սյան վրա պահպանված 783 թ. արձանագրությունն է: Հեղինակը Ուխտատուր վանականն է.

«ՄԼԲ թուականութեան հայոց ես՝ Ուխտայտուր վանականս եւ Տուտի եղբայր իմ բերաք զաղբիւրանիս ի Քարակապ նու(՞) ատեն ի Թալին. թե յիշխանաց ոք իսէ, իմ մեղացս պարտական եղիցի» (պահպանել ենք արձանագրության ուղղագրությունը):

ՄԼԲ=232, որին հավելում ենք 551 (կամ 552)՝ ստանալու համար ներկայիս թվականը: Տոմարական նոր պարբերաշրջանն ընդունվել և 1 թվականը սկսվել է 552 թվականին, ուստի մեր թվականն ստանալու համար պետք է գումարենք 551 կամ 552:

Նման կերպ ենք վարվում թվական պարունակող հիշատակարանների մեծ մասի դեպքում, ինչպես օրինակ՝ Լազարյանի Ավետարանի, որ պահպանված ամենահին հայերեն ձեռագիրն է, որ թվական ունի: Լազարյան է կոչվում երկար ժամանակ Մոսկվայի Լազարյան ճեմարանում պահված լինելու համար:

«Գրեցաւ սուրբ եւ կենսաբեր Աւետարանս այս ՅԼԶ (336+551=887 թ.) թուականութեան հայոց, ի հայրապետութեանն Գեորգայ հայոց կաթողիկոսի եւ ի տէրութեանն Սմբատայ Բագրատունւոյ. ես՝ Սահակ Վանանդացի որդի Վարդա Վանանդացւոյ, որում կրկին Մլեհ կոչէին»:

-41-

Հովհան Օձնեցի մեր սուրբ կաթողիկոսը 719 թ. մեկնում է Դամասկոս՝ Օմար խալիֆի հետ հանդիպելու: Մեծ հեղինակություն էր վայելում Օձնեցին ողջ աշխարհով մեկ՝ որպես սրբակենցաղ քրիստոնյա, փառատես այր, իմաստուն հոգևորական:

Խալիֆի մոտ է մտնում խիստ պճնված թիկնոցով, խաչանշան և ականակուռ գավազանով: Օմար ամիրապետը թերևս այլ կերպ էր պատկերացնում քրիստոնյա հոգևորականին և Հ. Օձնեցու շքեղ տեսքից անակնկալի է գալիս: Միառժամանակ լուրջություն է տիրում պալատում, ապա խալիֆը հարցնում է.

- Քո Քրիստոս և իր աշակերտներն այդպես չեն հագել, քանզի քեզ վրա ծագած բնական գեղեցկությանդ և աստվածային շնորհների՞ն հավելում ես նաև անցողիկ այնպիսի պաճուճանք ու զարդեր, որ չեմ կարողանում վեր կենալ և համբուրելու մոտենալ քեզ.

«Զի ոչ իշխեմ յառնել եւ համբուրել զքեզ»:

Պատասխանում է նրան սուրբ հայրապետը.

- Քրիստոս և Նրա աշակերտները փայլում էին նշաններով, իսկ մենք չունենք այդպիսի նշաններ, ուստի պատկառելի տեսքով ենք երևում ձեզ և ռամիկներին: Իսկ եթե գայթակղության առիթ է դա, ուրեմն տե՛ն ինձ առանց այդ զարդերի:

«Թէ գայթակղիս՝ միայն տեսցես որպէս եւ իմս»:

Այս ասելով՝ հանում է զարդերը, որից ներս երևում են նրա հագած փշապատ հնոտիները: Խալիֆը գետնին է խոնարհվում, ձեռքով շոշափելով փորձում Օձնեցուց օրհնություն կորզել:

Հովհան Օձնեցու կենսագիր Վարդան Արևելցու ներբողում այս դրվագը գեղարվեստական մի պատկեր է դարձել.

«Եւ նոյնժամայն արտաքս հանեալ զամենեսեան՝ տեսանէր ի ներքս զտատասկաձեւ գլգլեակն, եւ անկեալ յերեսս՝ ողջունէր զնա, եւ շոշափմամբ ձեռաց գանձէր յինքն օրհնութիւն ի նմանէ»:

-42-

Մեր արքաների թագադրության և օծման արարողությունները մեծ և աշխարհային շուքով են արվել: Նման մի նկարագրություն է Աշոտ Գ Ողորմած արքայի (953-977 թթ.) թագադրությունը, որ հանդիպում ենք Մատթեոս Ուռհայեցի պատմիչի մոտ:

Աշոտ Բագրատունին Աբաս Ա-ից հետո ժառանգել էր թագավորությունը, սակայն օծումով գահին դեռ չէր բազմել: Այդ նպատակով 962 թ. Անանիա Մոկացի կաթողիկոսի մոտ են հավաքվում 45 հազարանոց մարզպետական գունդը, Հայաստանի բոլոր իշխանները, Ադվանից թագավորն ու կաթողիկոսը՝ 40 եպիսկոպոսներով: Մեծահանդես օծումը կատարվում է Անիում, որն այդ պահից դառնում է Բագրատունյաց մայրաքաղաքը: Այա մեծ ուրախություն է լինում ողջ հայոց ազգի համար.

«Վասն զի տեսին նորոգեալ զաթոռ թագաւորութեան աշխարհիս Հայոց՝ ըստ առաջին հարցն: Եւս առաւել լինէին ուրախ յաղագս քաջութեանն Աշոտայ, վասն զի էր կորովի եւ այր պատերազմող: Եւ յայնմ աւուր լինէր հանդէս զօրաց նորա հարիւր հազարաց վառելոց ընտիր արանց ի մարտ պատերազմաց անուանեաց եւ քաջ կորովեաց. վասն զի որպէս զկորինս առիծուց կամ որպէս զձագս արծուեաց յուզէին զօր պատերազմին»:(Քանզի մարդիկ ականատես եղան մեր Հայոց աշխարհի թագավորության վերականգնմանը, ինչպես նախնիների ժամանակ: Նրանց ուրախությունը կատարյալ էր այն պատճառով, որ թագավոր օծվեց քաջ Աշոտը՝ կորովի և պատերազմող մի այր: Նույն օրը տեղի ունեցավ հարյուր հազարա-

նոց սպառազեն ընտիր, քաջամարտիկ և կորովի զինվորների գորահանդեսը, որոնք պատերազմի ժամանակ առյուծների կորյուների և արծիվների ձագերի նման էին խիզախում):

Թագադրության համբավը հասնում է հարևան բոլոր տիրակալներին, և Աշոտ արքային նվերներ ու բարեկամական թանկարժեք հավաստիքներ են ուղարկում աբխազների, հույների, պարսիկների թագավորները:

-43-

Մեր մատենագրությունը լեցուն է հայկական գեներլի հաղթական դրվագներով: Վատ չի լինի, որ դրանք ընթերցելով անցկացնենք մեր օրերը, նաև՝ որ այդ դրվագները դասագրքերում առավել հաճախ հայտնվեն:

Մի լավ օրինակ է Մատթեոս Ուռհայեցու նկարագրածը, թե ինչպես 11-րդ դարի կեսերին Գրիգոր Պահլավունին իր զորքով Հուրաստան (=Հրազդան) գետի ափին Բջնի բերդի մոտ ջարդում է թշնամու բանակը, իշխաններին ձերբակալում:

«Յայնժամ սպառազինեալ մեծի իշխանին Գրիգորի որդի Վասակայ Պալիաունոյ եւ երթեալ զօրօք բանակս հարկանէր ի վերայ գետոյն Հուրաստանի մերձ ի Բջնի մեծի ամրոցին: Յայնժամ զօրք այլազգեացն գան ի վերայ զօրացն Հայոց. եւ եղև պատերազմ սաստիկ, եւ զօրքն հայոց յաղթեցին եւ արարին կոտորած մեծ ի վերայ Հուրաստանի գետոյն եւ զիշխանս թուրք զօրացն ձերբակալ արարին, եւ մնացեալքն փախստական գնացին ի Պարսիկս»: (Այն ժամանակ մեծ իշխան Գրիգորը՝ Վասակ Պահլավունու որդին, սպառազինվեց և զորքի գլուխն անցած գնաց բանակեց Հուրաստան գետի ափին՝ Բջնի մեծ ամրոցի մոտ: Այն ժամանակ այլազգիների զորքը եկավ հայոց զորքի վրա. տեղի ունեցավ կատաղի ճակատամարտ, և հայոց զորքը հաղթեց թուրք զորքին, Հուրաստան գետի ափին մեծ ջարդ տվեց և թուրք զորքերի հրամանատարներին գերեց: Մնացածները փախուստի դիմելով գնացին Պարսկաստան):

Բջնի գյուղը, բերդի մնացորդները, նրա ստորոտում հոսող Հրազդանն այսօր էլ կան, և պատկերացնել է պետք մեր զինվորների քաջագործությունները այդ վայրում:

-44-

Այն մասին, թե ինչպես Մանազկերտի հայերը խոզ արձակեցին Տուղրիլի վրա:

1055 թ. Տուղրիլ սուլթանը Պարսկաստանի կողմերից մեծ զորքով հարձակվում է Հայաստանի վրա, գրավում Բերկրին, Արճեշը և հասնում Մանազկերտ: Քաղաքը որոշում է պաշտպանվել ամեն միջոցով, պաշտպանները այրում են թշնամու հսկա բաբանը, կեռ ձողերով դուրս են քաշում փորող զինվորներին, մի քահանա հատուկ սարք է կառուցում և դրա միջոցով կոտրում բաբանի կողը:

Սուլթանը օրեր անց ստիպված դադարեցնում է հարձակումը, «լռեալ դադարեաց և կայր մեծաւ ամօթով»:

Մանազկերտցիներն իբրև լիակատար հաղթանակ մի հնարամիտ քայլ են անում. բաբանի մեջ խոզ են դնում և արձակում սուլթանի ճամբարը և ձայն տալիս՝

«Է՛յ, Սուլթան, այդ խոզը քեզ կին արա, իսկ մենք Մանազկերտը քեզ օժիտ կտանք»:

Մատթեոս Ուռհայեցին այդ դրվագը պատմում է սուր հումորով.

«Յայնժամ առեալ քաղաքացիքն խոզ մի եւ եղին ի բաբանն եւ ձգեցին զնա ի բանակն սուլտանին. եւ ձայնեալ ամենայն քաղաքն զհետ ասէին, թէ՛ «Ա՛ռ սուլտան, զայդ քեզ կին արա, եւ մենք տամք զՄանձկերտ քեզ պռոյգ»: Եւ լուեալ սուլտանն՝ ի բարկութիւն շարժեալ եւ զբերողսն գլխատեաց, որ զինքն ի Մանձկերտ բերին, եւ ինքն մեծաւ ամօթով զնայր յաշխարհն Պարսից. եւ ողորմութեամբն Աստուծոյ փրկեցաւ քաղաքն Մանձկերտ յերեսաց ազգէն Թուրքաց պղծոց»:

Աբսա Բագրատունի արքան է կառուցել Կարսի եկեղեցին 940-ական թվականներին, որ մինչ օրս վեհաշուք, բայց բանտարկված կանգուն է Թուրքիային անցած մեր Կարս քաղաքում: Աբսաի օրոք խաղաղություն ու շենություն հաստատվեց մեր երկրում, և արքայի վարքն ու նպատակադիր քայլերը քիչ դեր չունեցան դրանում՝ «ըստ քաղցր բարուց իւրոց եւ ըստ քաջագոր զօրութեանն, որով յաղթող եղեւ շուրջանակի»:



Աբսար բազմաթիվ այլ շինություններ է կատարել, կառուցել է Անիի փոքր կաթողիկե եկեղեցին, Սուրբ Գրիգոր եկեղեցին Անիի քաղաքադաշտում: Այս ամենի մասին իմանում ենք Ստեփանոս Ասողիկ պատմիչից, որն իր «Պատմություն տիեզերական» երկում առանձնակի սիրով է պատմում Կարսի եկեղեցու մասին.

«Զի էր շինեալ թագաւորին զկաթողիկէն սուրբ ի քաղաքին Կարուց վիմարդեան արձանօք, որձաքար պողովատատաշ

վիմօք բոլորապես գմբեթաւորեալ պայծառ զարդուք երկնանման խորան»:

«Հրաշք է, չես հասկանում, այնքան է պարզ: Անպաճույճ է, պարզ է դրսից, բայց հասկացողի համար որքա՛ն անհուն ու բազմահրաշ», - եկեղեցու մասին պատմում է Եղիշե Չարենցը «Երկիր Նաիրի»-ում:

-46-

Անին միջնադարում հայտնի էր իր «հագար ու մի» եկեղեցիներով: Շատերն են վիճարկել, թե իրո՞ք մեկ քաղաքում այդքան շատ եկեղեցիներ կլինեին: Բայց և պահպանված մատենագրական տվյալները անջնջելի են, անկախ նրանից՝ հավատու՞մ ենք բերված փաստերին, թե ոչ: Ըստ այդմ՝ Մատթոս Ուռհայեցին, օրինակ, իր պատմության մեջ գրում է.

«Վասն զի էր Անի բազմամբոխ, քաղաքն լցեալ բիւր բիւրուց արանց եւ կանանց, ծերոց եւ տղայոց, որ հիացումն արկանէր տեսողացն, զոր կարծեալ զօրացն բազմաց՝ եթէ մեծ մասն աշխարհիս Հայոց իցէ. եւ յայնմ աւուր հագար եւ մէկ եկեղեցի ի պատարագի կայր ի յԱնի»:

Նույնը վկայում է նաև Ուիլիամ Ռուբրոյք ֆրանսիացի ճանապարհորդը, որ 1253-55 թթ. շրջագայել է Մոնղոլական տիրապետության տարածքներով, մի շարք գրառումներ ունի Հայաստանի մասին, ուր պատմում է. «Անի կոչված քաղաքում, որ պատկանում է շահնշահին և որի դիրքը շատ գորավոր է, կային հայերի 1000 եկեղեցիներ և արաբական 2 մզկիթ»:

-47-

Կարսի թագավոր Գագիկ Աբասյանի մի հնարամտությունը հայտնի է պատմագիրներից: Տուղրիլ բեկի արշավանքից տասը տարի անց՝ 1064 թ. թուրք-սելջուկները կրկին ներխուժում են Հայաստան: Զորաբանակը գլխավորում է Տուղրիլի եղբորորդի Ալփասլանը: Արշավանքը գալիս-հասնում է Կարսին, որ Վանանդի թագավորության (963-1065 թթ.) մայրաքաղաքն էր, և

ուր իշխում էր Գագիկ Աբասյանը: Ալփասլանը դեսպան է ուղարկում և Գագիկ թագավորից պահանջում ներկայանալ ու հպատակվել իրեն:

Վանանդի արքան մի հնարամիտ ելք է գտնում: Մատթեոս Ուռհայեցին պատմում է, թե ինչպես նա հազնում է սգավորի հանդերձներ ու նստում սեւ բարձի վրա: Սուլթանի դեսպանը, պալատ մտնելով ու նրան սգավոր տեսնելով, հարցնում է. «Վասն է՞ր ես սև, զի ասիս դու այր թագաւոր ես»:

Գագիկը պատասխանում է. «Յորժամ մեռա իմ բարեկամն Տուրիլ սուլտանն՝ եղբայր Ալփասլանայ, ես յայնմ աւուր զգեցայ զայս սև զգեստս»: (Երբ մեռավ իմ բարեկամը՝ Ալփասլան սուլթանի եղբայր Տուրիլը, ասիս այդ օրվանից եմ այս սև զգեստները հագել):

Դեսպանը հիացած գնում ու սուլթանին պատմում է իր տեսածն ու լսածը: Ալփասլանն ամբողջ բանակով գալիս է Կարս, Գագիկի հետ մեծ բարեկամություն հաստատում եւ նրան արքայական հանդերձներ հազցնում՝ «Արար ընդ նմա սէր և ուրախութիւն մեծ եւ զգեցոյց նմա զգեստ թագաւորական»:

-48-

Ընտանեկան բռնության և առհասարակ բռնության դեմ պայքարի հարցում մեր 21-րդ դարը մեծ առաջընթաց քայլ է կատարել: Սակայն բազմաթիվ նորահնար իրավական նորմեր կիրառված ենք գտնում դեռևս մեր միջնադարյան կանոնադրքերում և դատաստանագրքերում, որ իրավաբանական մտքի պատմության մասնագետները կարող են հաստատել:

Մի հստակ օրինակ բերենք: Դավիթ Գանձակեցին (հայտնի է նաև Դավիթ Ալավկա որդի մականունով, 12-րդ դար), որ իր ժամանակի հեղինակավոր և գիտուն անձանցից էր, գրել է բավականին մանրամասն նորմեր ընդգրկող «Կանոնական օրենսդրութիւն», որ պարունակում է 97 կետեր գողության, սպանության, կաշառակերության և այլ հանցանքների վերա-

բերյալ: Այստեղ հանդիպում ենք նաև այր ու կնոջ հարաբերությանը վերաբերող մի «հոդվածի»: Կնոջը կամ ամուսնուն վատաբանող զանցանքի համար պատիժը խիստ լիբերալ է եղել մեր հին հեղինակի և հայերի մոտ՝ ապաշխարել երեք տարի: Ահա քաղաքական իրավունքի ոլորտի այդ կետը.

«Վասն այնոցիկ, որ զկին վատազգի համարին: Այլ այր, որ զկին իւր վատազգի համարի, կամ անժառանգ, կամ կին՝ զայր, երեք ամ ապաշխարէ: Եւ եթէ վասն այնր պատճառի մեկնին ի միմեանց, ընդ անիծիւք են եւ այրաթողաց կարգս կրեսցեն»:
(Նրանց մասին, որոնք կնոջը վատաբանում են: Ամուսինը, որ իր կնոջը վատաբանի կամ անժառանգ համարի, կամ կինը ամուսնուն՝ երեք տարի թող ապաշխարեն: Եթե այդ պատճառով հեռանան իրարից՝ անեծքի տակ կընկնեն և այրաթող մարդկանց կարգը կանցնեն):

-49-

Մի կողմից ավանդական կենսակերպը, հագուկապը, տոները, երգերը, մյուս կողմից՝ մողայիկն ու նորամուծությունները միայն մեր օրերում չէ, որ անհաշտ պայքարի մեջ են եղել: Բազում օրինակներ ունենք նաև հին ժամանակներից: Եվրոպական մշակույթին տուրք տալու վտանգ կար նաև Կիլիկյան Հայաստանում, որ առավել մոտիկից և ավելի շատ էր շփվում լատինական աշխարհի ու մշակույթի հետ:

Արքունիքն անհարկի մողայամոլության վտանգից զերծ պահելու համար Ներսես արք. Լամբրոնացի գործիչը (12-րդ դար) մի հատուկ նամակ է գրում հայոց Լևոն իշխանին և, առանց իշխանավորի առաջ իրեն կաշկանդված զգալու, բաց տեքստով հորդորում է.

«Մի՛ կայք բացագլուխ ըստ լատինացւոց իշխանացն եւ թագաւորացն, այլ դի՛ք շարփուշ (=գլխարկ) որպէս ձեր նախնիքն:

Աճեցուցէ՛ք զհերս եւ զմօրուս, զինչ ձեր հարքն:

Զգեցէ՛ք դուռայ (=կտավե հագուստ) լայն եւ թաւ, եւ մի՛ փիղոն եւ զսպեալ պատմութեանս (=այսօր կասեինք՝ կիպ շորեր):

Արդ՝ փոխեցէ՛ք դուք զայս լատինացի ձեւս եւ զանուանքս ըստ ձեր հարցն, բարեգարդեցէ՛ք զձեր արքունիսդ առաջնոցն սովորութեամբն»:

Փոխէ՛ք այս լատինական (մեր օրերի համար՝ եվրոպական կամ ամերիկյան) ձևերն ու անունները, բարեգարդե՛ք ձեր ընտանիքները նախնի սովորության համաձայն,- սա է Ներսէս Լամբրոնացու հորդորի բուն նպատակակետը:

-50-

Կիլիկիան հայոց Հերոսմ Բ արքան, հակառակ Կոստանդին Բ կաթողիկոսի հորդորների, ջանում էր հայ և լատին եկեղեցիների մերձեցման քայլեր կատարել: Այդ նպատակով 1289 թ. մայրաքաղաք Միսում ժողով է հրավիրում՝ անտեսելով կաթողիկոսին:

Ավելին, լատինամետները Կոստանդին Բ-ի դեմ մտացածին մեղադրանքներ են բարդում, որից հետո կաթողիկոսը կամովին հրաժարվում է պաշտոնից, հանձնում է մեծագին զգեստները, թագը, կնիք-մատանին, ապա ձեռքն է վերցնում Լուսավորչի աջը, օրհնում թագավորությունն ու ամբողջ երկիրը և ասում.

«Տէ՛ր Յիսուս, տու՛ր սոցա առաջնորդ բարի և հովիւ ընտիր, զի ըստ կամաց քոց հովուեսցէ զբանաւոր հօտս քո, այլ արանցս այսոցիկ, որք ամին դատաստանս քո, և նախ քան զօրն իմ աստուածաբար դատեցին զիս, դու արասցեն իրաւունս ընդ իս և ընդ նոսա»:(Տեր Հիսուս, տու՛ր սրանց բարի առաջնորդ և ընտիր հովիվ, որ ըստ Քո կամքի հովվի քո այս հոգևոր հօտը, դու էլ պիտի որոշես արդարությունը իմ և այն մարդկանց միջև, որոնք վերցրին քո դատաստանն ու նախքան իմ օրը՝ աստվածաբար դատեցին ինձ):

Ազնիվ հայրենասիրության և երկրի շահը առավել բարձր դասելու փայլուն օրինակ է սա՝ տրված Կոնստանդին Բ կաթողիկոսի կողմից:

Այն պահից, երբ հայ իրականության մեջ ու եկեղեցում ի հայտ եկավ լատինամետ ուղղությունը, անմիջապես ձևավորեց նաև մեր եկեղեցու ուղղափառ դավանությունն անխախտ պահելու նախանձախնդիր «արևելյան թևը»: Առաջինները հիմնականում Կիլիկիայից էին, արևելյանները՝ բուն Հայաստանից:

Հեթում Բ լատինասեր թագավորի 1293 թ. հրամանով կաթողիկոս օծված Գրիգոր Անավարզեցին 1305 թ. Դավանաբանական նամակ է հղում արքային, այն գրում է խոսակցական լեզվով, որպեսզի թերևս շատերին հասկանալի լինի, և շարադրում իր պատկերացումները.

«...Ջեօթս ժողովան ընդունիմք, եւ զերկու բնութիւնն եւ զներ-գործութիւնն, եւ զկամքն: Եւ զԾննունդն յիւր յատուկ աւուր տօնեմք, եւ զԶատկին շաբաթ օրն պահեմք, եւ զՅինանց ուրբաթսն ի մսէ պնտեմք, զպաքերն եւ զտօներն, որպէս նոքա, եւ մեք առնեմք: Եւ զՍուրբ Աստուածն կամ ի Սուրբ Երրորդութիւնն առանց Խաչեցարին ասեմք»:

Եվ այդպես կետ առ կետ ներկայացվում են դավանական գիշումների առաջարկներ:

Այս նորամուծության փորձերին արձագանքում է «արևելյանների» պարագլուխ Ստեփանոս Օրբելյանը՝ Տաթևի առաջնորդն ու պատմիչը, որի խիստ ու կտրուկ պատասխանը թևավոր խոսք է դարձել հնում.

«Հաւան եմք ընդ մեր հարսն ի դժոխս իջանել, եւ ոչ ընդ հոռոմոց յերկինս ելանել»: (Համաձայն ենք մեր հայրերի հետ դժոխք իջնել, քան թե կաթոլիկների հետ երկինք բարձրանալ):

Հայ գործիչների մականուններ հանդիպում ենք ողջ միջնադարում՝ գրավոր շրջանից առաջ, գրավոր շրջանում և միշտ: Դրանք ունեն փառաբանական, պատվական, երբեմն հեզմական և այլևայլ իմաստներ ու երանգներ: Մականունների մի

մասը հանրահայտ է, ինչպես՝ Լուսավորիչ, Մեծ, Շինող, Կըրտսեր, Իմաստասեր, Շնորհալի: Կան նաև քիչ հայտնի ու քիչ տարածում գտած անուններ, ինչպես՝ Խուլորբուկ, Ծծկեր, Խանձողատ, Քաֆթայ, Աստայգել, Ձագ, Քացախենց, Կուլքան, Բուք, Չիթղենց:

Աղբյուրներում հաճախ հանդիպում ենք այս կամ այն մականվան ծագման մասին վկայություններ. Գրիգոր Քարավեժ (12-րդ դ.), որը, ըստ Սամուել Անեցու՝ «Քարավեժ լեալ ի դղեկէն Կօպիտառոյ եւ կայ ի Դրագարկէն հանգուցեալ»:

Կոնստանտին Բ Պրոնագործ (այժի բուրդ գործող). «Կոստանդին երկրորդ՝ արքեպիսկոպոսն Կեսարիոյ, որ ծննդեամբ էր ի Կատուկ աւանէ, սնեալ յեկեղեցուջ Ստյ. ուստի կոչի սա կեսարացի և կատուկեցի և սսեցի, մականուամբ պրօնագործ կամ պրօնգործ ասացեալ» (ըստ Միքայել Չամչյանի):

-53-

Սարգիս Պիծակը միջնադարի մեր այն եզակի արվեստագետ մանրանկարիչներից է, որից պահպանվել են համեմատաբար շատ ձեռագրեր: Ընդ որում, նրա պատվիրատուներից են եղել մեր արքաներն ու հայրապետները, ինչպես՝ Անտիոքի օրինագրքի պատվիրատուն եղել է Լևոն Դ թագավորը (ձեռագիրն այժմ պահվում է Վենետիկի Ս. Ղազար վանքի մատենադարանում), 1346-ի Ավետարանի պատվիրատուն Մարիուն թագուհին է՝ Կոստանդին թագավորի կինը (Երուսաղեմի թ. 1973 ձեռ.), 1338 թ. Աստվածաշունչը պատկերագրողվել է Հակոբ կաթողիկոսի պատվերով (Երևանի Մատ. թ. 2627 ձեռ.) և այլն:

Պիծակ գրաբարում ուներ «բգեգ, մեղու» իմաստը: Մականվան ծագումը կապված է մի պատմության հետ, որ բերում է Ղևոնդ Ալիշանը:



Մի անգամ Սարգսի հոր՝ նշանավոր ծաղկող և գրիչ Գրիգորի մոտ հյուրեր են լինում: Փոքրիկ Սարգսի նկարելու պահին,- ասում է Ալիշանը,- «պիծակ մի նստավ հանդէպ նմա ի լուսամուտն, որ և շուտ նկարեաց զնա: Զոր տեսեալ մերձակայիցն, կարծեցին թէ պիծակն եկեալ նստաւ, զոր ընդ ձեռքն վարելն նոցա զնա՝ ծիծաղեալ տէր Գրիգորն: Ապա գիտացին զիրն, և զարմացեալ կոչեցին զնա Պիծակ»: (Մի պիծակ է նստում լուսամուտի դիմաց, որին արագ-արագ նկարում է մանուկը: Դա տեսնելով՝ ներկաները կարծեցին, թէ իրական բզեզ է նստել և փորձեցին ձեռքով քշել: Ծիծաղում է հայրը՝ Տէր Գրիգորը, և ներկաները իմացան եղելությունը, զարմացան ու նրան կոչեցին Պիծակ»):

Իշխանությունը կաշառքով ձևավորելը տանում է կործանման: Նման հարյուրավոր փաստերից մեկը հանդիպում ենք Գրիգոր Դարանաղցու պատմության մեջ, երբ նկարագրվում է 17-րդ դարի սկզբին օսմանյան կայսրությունում կաշառքով պաշտոններ առնել-ծախելու մանրամասները, որ հանգեցրեց ապստամբությունների եւ սուլթանի խորտակման՝ ներսից, առանց օտար միջամտության.

«Կաշառքով տային զիշխանութիւնն գաւառապետութեանց եւ աշխարհակալութեանց եւ դատաւորութեանց, եւ տակաւին դեռ ի տեղին ոչ էին հասեալ՝ մանդով առնէին եւ գտեղի նորա այլ ումեմն տային: Եւ յորժամ յետինն գայր, առաջին եկեալն չտայր մտանելոյ եւ նստելոյ ի տեղին, եւ երկոքեանն մարտընչէին ընդ միմեանս ի վերայ տեղոյն: Եւ զօրաժողով լինէին, ի հողագործ ռամկացն ժողովէին եւ մեծ բանակ լինէին: Եւ այնպէսն լինելով ապստամբք եղեն ամենեքեան ի թագաւորէն եւ եղեն ջալալիք: Եւ եղեն իբրեւ զձկունս մեծամեծ եւ փոքունք, որ զմիմեանս կլանեն, ըստ բանին Ամբակումայ, եւ զմիմեանս սպառէին առանց օտար թշնամեաց, այլ թշնամիք եղեն առ միմեանս եւ առ ազգայինս իւրեանց: Եւ այսպէս չարանալով՝ բնաջինջ արարին զամենայն աշխարհն Անատոլու»:

Հաճախակի ենք մտորել՝ ինչի՞ց է, որ Ռոբին Հուդի նման հերոսներ չկան մեր գրականության մեջ, որ ավարառէին հարուստներին ու ավարը բաշխէին աղքատներին: Պատասխանը գուցե այստեղ է. մեր հերոսները մշտապես մաքառել են այլազգիների դեմ՝ լինելով ժողովրդի կողքին, զավթիչների դեմ են նրանք դուրս եկել, և սեփական կեղեքիչներին հերթը չի հասել: Իսկ ազգի համար մաքառած ու նահատակված հերոսների մեր հին գրականության ու պատմության մեջ կարող ենք գտնել անհամար:

Նման մի փառահեղ օրինակ հանդիպում ենք Առաքել Դավ-
րիժեցու պատմության մեջ. մի հերոսի մասին, որ կյանքը
վտանգելով կարողանում է պարսից շահերի մոտ հավատքի
ազատություն կորզել իր հայրենակիցների համար:

Գրիգոր անունով մի քրիստոնյա էր նա՝ Վայոց ձորի Արփա
գյուղից, որ բնակվում էր Իրանի Փերա գավառի Ներքին Խո-
յիկան գյուղում.

«Էր սա մարմնովն պարթևահասակ եւ յաղթանդամ եւ
սրտին արի, բանիւք եւ խելօքն հանճարեղ, եւ հաւատովն եւ
սիրովն Քրիստոսի հաստատ եւ ջերմագոյն: Այս Գրիգոր ելեալ
շրջեցաւ ի գեղորայս գաւառին եւ քաջալերեալ յորդորեաց զա-
մենայն ժողովուրդսն եւ եղեւ գլուխ եւ առաջնորդ նոցա, էառ
ընդ իւր արս եօթն եւ եկն ի քաղաքն Սպահան եւ գնացեալ էառ
զբազում զանձս ի փոխ եւ բերեալ ետ իշխանաց շահին կա-
շառս, եւ հաւանեցոյց զամենեսեան, զի ի պատեհ ժամու բարիս
խօսեացին վասն նոցա առաջի թագաւորին: Ապա ինքն գրեաց
արգայ աղաչանաց եւ մատոյց առ թագաւորն ոչ թէ միանգամ
կամ երկիցս, այլ հնգիցս եւ վեցիցս, այնքան խօսեցաւ յատեան
եւ ի դիւան թագաւորին, մինչեւ ձանձրանալ թագաւորին եւ
ասել՝ «Թողի զձեզ ի կամս ձեր, գնացեալ պաշտեցէք զհաւատն
ձեր»:

Գրիգոր քաջորդին, ուրեմն, յոթ այլ քաջերի հետ շահի
պաշտոնյաներին կաշառում և ստիպում է շահի առաջ բարե-
խոսել իր ժողովրդի համար, ինքն էլ բազմիցս դիմում է
թագաւորին կրոնական ազատության պահանջով, և ի վերջո
ստացվում է շահի հրամանը՝ «Թողնում եմ ձեզ, գնացե՛ք և ձեր
կամքով պաշտե՛ք ձեր հավատքը»:

-56-

Սիմեոն Լեհացին, որ ուղիղ 300 տարի առաջ ճանապար-
հորդել է Կ.Պոլիս, Երուսաղեմ, Մուշ և այլուր, գրում է. «Ուր և
ինչ տեղ որ գնում էինք, հայ էինք գտնում: Քանզի տարածվել ու
սփռվել են երկրի երեսին փոշու նման»:

Յիրուցան լինելու պատճառը Միմեոն Լեհացին համարում է «մեր ծովացյալ մեղքերը».

«Եւ թէ հաշուես ի Պուղտանայ մինչեւ Ստամպոլ պուրուն Ուռումէլին մինչեւ մեծն Վենետիկ, նա չկայ քաղաք, գեղ կամ չֆթլիկ, որ հայ չկենայ, որ վասն ծովացեալ մեղաց մերոց ցիրուցան եղեալ ենք ի վերայ երկրի որպէս գփոշի»:

-57-

Խոտրջրի (Էրզրումի նահանգ) հայ բնակչությունը մեծ մասամբ բարձրահասակ, գեղեցկատես, բարեկազմ, մաքրակենցաղ, արի ու ազատասեր մարդիկ էին: Նաև ուսումնասեր էին: Առաջին աշխարհամարտի դառն օրերին՝ 1916 թ. կարողացել են ինքնապաշտպանվել:

Խոտրջրից շատ անվանի մարդիկ ունենք, որոնցից մեկն է 17-րդ դարի հեղինակ Հակոբ Կարնեցին: Իր «Տեղագիր Վերին Հայոց» երկում Հ. Կարնեցին հայրենակիցների նաև մեկ այլ հատկանիշ է նկարագրում. խոտրջրեցիները հրաշալի գինի էին պատրաստում.



«Եւ ի մէջ ձորոցն են այգիք եւ բուրաստանք եւ պտուղք ծառոց զանազան անթիւ, եւ գինի անչափ յոլով եւ քաղցրահամ,

որ մինչև 7 տարին այնպես բարեհամ եւ անապական է, որ թուի թէ այսօր հարեալ է ի հնձանէ, որ ոչ սրտի դողումն եւ կամ գլխացաւութիւն բերէ, այլ ախորժէ ըմպողաց»:

-58-

Բոլոր ժամանակների ամենից արդյունավետ հայ գործիչներից է Գրիգոր Շղթայակիրը (1670-1749): Մեծ հոգևորականի գործի հաջողությունը մեծապես բխում էր մարդկանց աշխատանքով ու սիրով վարակելու ազնիվ ու անսպառ հատկությունից: Այդպիսի տողեր ենք գտնում, օրինակ, Կ. Պոլսից Երուսաղեմի միաբաններին 1740 թ. փետրվարի 11-ին գրած նամակում.

«Եւ ահա գրեմք եւ սիրովն աստուծոյ աղաչեմք, զի զխուֆ զամենայն ի սրտից ձերոց հանիցեք, եւ ջլինի թէ կռիւ ընդ ազգաց կամ ի միջի ձերում յարուցանիցեք ի սէրն աստուծոյ:

Միրեցեալք մեր, ի տէր աղաչեմ զձեզ վասն սիրոյ Քրիստոսի, յոյժ սիրով հնազանդութեամբ եւ սիրով կենցաղավարիցիք ընդ միմեանս:

Դարագլուխ եւ, ո՛րդիք, ժրացարուք եւ լերո՛ւք յորդի գօրութեան. եւ տէր զձեզ զօրացուցէ»:

Սա այն Գրիգոր պատրիարքն է, որ կարողացավ անձնագոհությամբ Երուսաղեմի գլխին կախված 800 քսակ հսկա պարտքը մարել, շենացնել Ս. Երկրի հայ տաճարներն ու սրբավայրերը, որոնցով հպարտանում և հիանում ենք մինչ օրս: Սա այն Գրիգոր պատրիարքն է, որ իր անձնական օրինակով ցույց տվեց, թե ինչքան մեծ է ազնիվ ու նվիրված անհատի դերը ազգային ձգտումներն իրագործելիս:

-59-

Գրիգոր Շղթայակրի օրինակը, վստահ ենք, մշտապես պետք է ուղեկցի մեզ: Երուսաղեմի եկեղեցիները գրավից հանելու և կորստից փրկելու համար նա դիմում է ծայրահեղ միջոցի: 1718 թ. մի օր երկաթե շղթայակապ խաչեր է անցկացնում

պարանոցին, ուխտում այնքան ժամանակ չհանել, քանի դեռ պարտքերը մարված չեն լինի.

«Որոյ վասն եւ եղ ի պարանոցն իւր զանուրս երկաթիս գերեսարաս, եւ փակեաց զայն ախիւք ամրագունիւք, ուխտելով ընդ Աստուած ո՛չ հանել զայն ի պարանոցէն իւրմէ, մինչեւ այց արասցէ նոյն ինքն տառապեցելոյ ազգիս հայոց, եւ սրբեսցէ զարտօսը յամենայն աչաց, եւ բարձցէ զնախատինս յազգէս մերմէ, թեթեւացուցանելով զլեռնակուտակ բարդումն ծովասարաս պարտուց»:

Սա Գր. Շղթայակրի հավատարիմ տեղապահ Հաննա Երուսաղեմացի եպիսկոպոսի նկարագրությունն է, որ կարդում ենք նրա հեղինակած «Գիրք պատմութեան սրբոյ եւ մեծի քաղաքիս Աստուծոյ Երուսաղէմս» (1734 թ.) գրքում:

Այդպես Գրիգոր պատրիարքը կողպում է շղթան, 8 տարի շրջում վանքից վանք և միջոցներ հավաքում Երուսաղեմի հայոց սրբատեղիների համար.

«Ողորմեցարու՛ք, ողորմեցարու՛ք ինձ, հաւատացեալքդ Քրիստոսի, զի տուն իմ ի գրաւի է, և որդիք իմ հեռացեալ են յինէն, և ես մատնեալ ի գերութիւն՝ նստեալ եմ ի սուգ դառնութեան: Ողորմեցարու՛ք ինձ, հանէ՛ք և լուծէ՛ք զծանրութիւն պարտուցս, որք դիգեալ եմ ի վերայ իմ»:

Ճշմարիտ են Եղիվարդի՝ 20-րդ դարի Երուսաղեմի պատրիարք Եղիշե Տերտերյանի այն խոսքերը, թե՛ «Շղթայակիրը իր շղթայով բոլոր սիրտերը կապեց Երուսաղեմին»:

-60-

Որոշ փաստեր հուշում են, որ ազատատենչ հայերը ցանկացել են Դավիթ Բեկին թագավոր օծել, ազատագրական պայքարի միջոցին եղել են նման տրամադրություններ ու ծրագրեր: Դավիթ Բեկի քայլերն էլ հուշում էին դրա մասին: Եռաբլուրում դարաջոռլու թուրքերի դեմ առաջին հաղթանակից հետո Դավիթ Բեկը բանակ է դնում Շինուհայր ամրոցում, իր մոտ է հրավիրում Տաթևի առաջնորդին և ներկայացնում իր

ծրագիրը. «Պատմեաց յինչ խորհուրդս եկեալ է և ասէ. «Զնջելով ջնջեցից զամենայն այլագգիս յերկրէ աստի յայսմանէ»:

Դավիթ Բեկի հաղթական պատերազմների մասին հիմնական աղբյուրը «Ընտիր պատմութիւն Դաւիթ Բեգին եւ պատերազմաց հայոցն Ղափանու, որք եղեն ի մերում ժամանակի, այն է՝ յամի Տեառն 1722» խորագրով աշխատությունն է: Այն գրվել է Վենետիկում, ապստամբության մասնակից և Դավիթ Բեկի աջակից Ստեփանոս Շահումյանի և Տեր Ավետիքի պատմածների հիման վրա գրի են առել Մխիթարյան միաբանության անդամները, և խմբագրել է Մխիթար Սեբաստացու աշակերտ Ղուկաս Սեբաստացի Ստեփանյանը:

Թագավորությունը վերականգնելու հեռահար ծրագրի մասին է ակնարկում Մխիթարյան միաբանության դիվանում պահպանվող վավերագիրը՝ Սեբաստիայից դեռևս 1722 թ. գրված նամակը, որում նշվում է.

«Ոմն իշխանագարմ յազգէն հայոց 4.000 զօրօք կոտորեալ է լէկզին, յետոյ Մոսկոֆն մեծաւ բազմութեամբ եկեալ է զՓարվէզինն նուաճեալ: Զիշխանն հայոց ի թագաւոր օծեալ է, իսկ արքայն պարսից հանդերձ հնազանդելովք քրիստոնեայս արարեալ է»:

-61-

Հայ ռազմիկների անվեհերությունը հայտնի է եղել միջնադարում, շատ պատմիչների վկայությամբ, այդ թվում՝ բյուզանդացի. հայկական զորամիավորումներն ամենից քաջն ու աննահանջն են եղել: Թեև երկար դարեր պետականություն չենք ունեցել, սակայն այլոց բանակների կազմում հայ ռազմիկների միավորումները մշտապես նույն բնութագիրն են ունեցել:

Հերոսական նման մի դրվագ տեսնում ենք 1724 թ. Պարսկա-թուրքական կռիվների ժամանակ, երբ Երևանի և շրջակայքի հայ արիները ոտքի են կանգնում և ինքնաբուխ ջոկատներ կազմում իրենց բնակավայրերը պաշտպանելու համար: Թուրքերը գրավել էին Կարբին, Էջմիածինը և շարժվում էին Երևանի

վրա, քաղաքի պարսկական գորակայանը փախուստի էր դիմել, և թշնամուն դեմ հանդիման մնացել էին հայկական ջոկատները: 9000 զինվոր է հավաքվում «արձակաքաղաք Երևանում», ինչպես պատմում է Աբրահամ Երևանցին «Պատմութիւն պատերազմացն» փոքր, բայց տարողունակ երկում.

«Ամենեքեան միաբան ի միասին խորհուրդ արարեալ՝ ժողովեցին զընտիր երիտասարդս ի գիւղօրէիցն Երևանայ և եղեն ինն հազար վառելաք ի պատերազմ: Ամենայն այր կարող պատերազմի եկեալ ժողովեալ կային յարձակաքաղաքն Երևանայ»:

Հունիսի առաջին օրերին թեժ մարտեր են սկսվում, որոնք մեկ անգամ ևս ցույց են տալիս, թե վտանգի մեջ հայտնված հայերիս համախմբումն ինչ արդյունքի է բերում:

Աբրահամ Երևանցին հիշատակում է նաև հայկական ուժերի հրամանատարների անունները.

«Ժողովեցան բազում խումբք երիտասարդաց վառելոց ի պատերազմ, որոց կառավարքն էին գօտեմարտիկ Նիկողայոսն, Մարիամին որդի Անտոնիոսն և Շաթունի որդի Բութիկն և Տէր Մովսէսն»:

-62-

Աբրահամ Կրետացի հայոց կաթողիկոսը 1735 թ. Ապարանի մոտ հանդիպում է Պարսկաստանի վերամիավորման համար պատերազմող Թահմազ խանին՝ ապագա Նադիր Շահին, որ հաջող մարտեր էր մղում Հայաստան մտած օսմանյան զորքի դեմ:

Արևելյան սովորության համաձայն՝ օրեր անց Թահմազը Աբրահամ կաթողիկոսին փոխայցի է գալիս Էջմիածին: Այդ այցը և Նադիրի մուտքը Էջմիածնի տաճար մանրամասն նկարագրում է ինքը՝ Աբրահամ Կրետացին իր «Պատմութիւն համառօտ յառաջի ժամանակն Նատր Շահին» երկում.

«Եւ մտեալ ի սուրբ տաճարն առաջի Սուրբ իջման տեղւոյն՝ կանգնեցաւ եւ եհարց, թէ՛ «Զի՞նչ տեղ է եւ վասն է՞ր կաթո-

դիկէս»: Նոյնպէս եւ պատկերացն, եւ վասն մեծ կաթողիկէին, եւ շինմանն եւ շինողացն: Եւ ըստ պատշաճի տուաք զպատասխանին»:

Ապա սկսվում է հայ հոգևորականների ծեսը, աթոռ և խալիչա են մատուցում շահին. «Եւ ինքն նստեալ հայէր եւ ուրախանայր: Եւ առժամայն զիս յորդորեալ ծերագոյնքն ի միաբանից կանգնեցուցին ի կաթողիկոսարանի զգեստով իմով: Եւ յետ ասելոյն զերեկոյեան ժամն՝ կրկին յորդորեցին զիս ծերագոյնքն, թէ՛ «Ծանուցումն եւ շնորհակալութիւն արա՛ եւ օրինեա՛», որպէս եւ արարի իսկ: Եւ վասն զի այլազգեաց լեզուով խնդրեաց խանն, եւ ես այնպէս խօսեցայ առաջի իւր»:

Էջմիածին այցի առիթով Թահմազ խանը արձակում է երեք հրովարտակ, ըստ որոնց՝ ա) Էջմիածնին են վերադարձվում նրանից խլված կալվածքները, բ) կրոնափոխ հայերը գրկվում են ժառանգական իրավունքից, գ) որևէ մեկը իրավունք չի ունենում առանց շահի գիտության մտնել Էջմիածնի վանքը և/կամ պահանջներ ներկայացնել միաբաններին:

-63-

Հայ քաղաքական-ծրագրային մտքի մի արգասիք է 1772-73 թթ. Մադրասում տպագրված «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ» երկը: Հեղինակը՝ Մադրասի հայրենասիրական խմբակի անդամ Մովսես Բադրամյանը կոչ է անում մեր հերոսական դրվագների օրինակով պայքար մղել ազատության համար: Նա առաջարկում է կառավարման համակարգ, որը մոտ է այսօրվա պատկերացմամբ սահմանադրական միապետությանը, որտեղ առանձին դրույթներով սահմանափակված են միանձնյա իշխանավորի իրավունքները:

«Նոր տետրակում» կարելի է գտնել մեր անկախության կորստյան մի շարք պատճառներ, որոնց թվում է նաև «ուսումնատեաց» լինելը.

«Փոխանակ ստանալոյն զիմաստութիւն եւ զհանճար, ստացաք մեք ուսումնատեացքս օր քան զօր, կարի քան զչափն

զոգիտութիւն: Զի լաւ համարեցաք ինքնահաճութեամբ զոգիտութեան ընտրութիւն, քան զիմաստութեան՝ ուսանիլ յայլոց ըստ քերթողահօր կանխասաց բանին, որպէս տեսանի յողբսն»:


Ուրեմն ինչ պետք է անենք,- «Նոր տետրակը» սահմանում է քաղաքական մի հավատամք, ուր ա) կմերժվի տգիտությունն ու ինքնահավանությունը, բ) կմեծարվեն իմաստությունն ու դրա հետևորդները.

«Արդ ուրեմն պարտիմք այսուհետև մի՛ նման անցելումն, այլ որքան կար ի մէնջ իցէ՝ ստալ զոգիտութիւն եւ զինքնահաճութիւն մտաց կուրութիւն եւ սիրել զիմաստութիւն եւ զհանճար եւ զամենայն հետեւողս որոց»:

-64-

Հնում հայոց պատերազմական դրոշը նույնպէս օրհնվում էր հատուկ կարգով: Ծիսական մատյանի՝ Մայր Մաշտոցի մէջ կան դրա վերաբերյալ որոշ ցուցումներ, սակայն ծեսն ամբողջությամբ չի պահպանվել: Դրա փոխարեն հանդիպում ենք 19-րդ դարի սկզբների մի արարողության՝ հայ կամավորական ջոկատներին մարտական դրոշ տրամադրելու մասին: Այն վերաբերում է 1827 թ.-ին:

Ռուս-պարսկական և ժուռ-թուրքական պատերազմներում մի կողմից հայ մելիքներն էին մեր կամավորական ռազմիկների հրամանատարները, մյուս կողմից՝ Ներսէս Աշտարակեցին էր ռզեշնչողն ու օրհնությունը տվողը, հենց նրան է վերագրվում



դրոշի օրհնության այս կարգը: Ծիսական ու եկեղեցական կարգի շարադրանքից հետո հոգևորականը հանձնում է դրոշը մարտիկներին՝ ասելով.

«Ընկա՛լ գրիօշակս զայս օրհնեալ աստուածային օրհնությամբ, զի եղիցի սա թշնամեաց քրիստոնէից ազգի ահաւոր եւ զարհուրելի, եւ պարգեւեսցէ քեզ Տէր զշնորհս, զի ի փառս ամենասուրբ անուան Հօր անվնաս եւ արիաբար անցցես ընդ գունդս թշնամեաց»:

-65-

Ամիսներ առաջ համացանցի ներկայիս ուղիներով նամակ ենք ստանում մի լավ բարեկամից՝ զարմանալի և ոչ ամեն օր պատահող բովանդակությամբ: Բարեկամս հայտնում էր, որ Բայազետի բնակիչ ինչ-որ թուրքեր միջնորդավորված կերպով դիմել են իրեն և խնդրել որոշ տվյալներ ճշտել մի խաչքարի մասին:

Ի՞նչ խաչքար, կլինի առաջին բնական արձագանքը: Պարզվում է, որ Բայազետցի թուրքի տան բակում՝ այգում պահպանվել են քարերի բեկորներ, դրանց մեջ՝ հայերեն գրություններով խաչքար, և տանտերը ցանկանում է պարզել դրա բնույթը, հնությունը, նաև գրության բովանդակությունը: Խաչքարը շատ մեծ չէ՝ բարձրությունը 57 սմ, լայնությունը 35, հաստությունը 7:

Փորձում ենք ընթերցել գրությունը, որից մի քանի պատահիկ է հստակ հասկացվում. «Տէր Յիսուս Աստուած... Յիշատակ է խաչս փրկութեան հոգւոյն Տեառն Եղիային, կողակից Եղիսաբեթին, որդւոյն Նազարեթին, կողակից Մարիամին...»: Ըստ ոճի՝ ենթադրաբար 17-18-րդ դարի խաչքար է: Այգիներում կարող են պահպանված լինել նման խաչքարեր, եթե այդ տարածքում նախկինում հայկական գերեզմանատուն է եղել: Շատ հաճախ այլազգիները քանդում են նախկին ինչ-ինչ կառույցներ և քարերը տանում տներում նոր շինության հիմքի կամ պատի մեջ դնում, այդ քարերը շինանյութ են ծառայում:



Խաչքարի մասին բացահայտման ընթացքից գոհ՝ հետևում է բայազետցիների համառ հետաքրքրության հաջորդ փուլը. իսկ գուցե գրության մեջ ակնա՛րկ կա գերեզմանոցի կամ այնտեղ ինչ-ինչ գանձերի առկայության մասին:

Ուրեմն ամեն ինչ պարզ ու հստակ է, և այստեղ էլ ավարտվում է անսպասելի «հայտնագործության» փնտրտուքը: Հայերից՝ տվյալ տարածքի, բնակարանի, այգու, հողերի նախկին ու բնիկ տերերից «հետաքրքրասեր» թուրքերն ակնկալում են միայն իրենց պապերի պահած գանձերի մասին տեղեկություններ: Որքան էլ ցավալի լինի, գրաբարի հետ անուղակի առնչությունը նաև նման խոհերի առաջ կանգնեցրեց մեզ:

Գ Ր Ա Կ Ա Ն Ք

-66-

Մեր բանասիրությունը դեռ լիովին չի բացահայտել Մաշտոցի աշակերտների ունեցած նպաստը դպրության տարածման, գրականության ստեղծման գործում: Աղբյուրներում պահպանվել են նրանցից մոտ 30-ի անունները, որոնք բերում են ավագության կարգով:

Յովհան Եկեղեցացի, Յովսէփ Պաղնացի, Յովսէփ Հողոցմեցի, Եզնիկ Կողբացի, Կորիւն, Արձան Արծրունի, Ղեւոնդ Վանանդեցի, Տիրայր Խորձենացի, Մուշէ Տարօնեցի, Տէր Կայենացի, Մուշէ Արծրունի, Անանիա Սիւնեցի, Դանան Եկեղեցացի, Ենովք Սպերցի, Մուշեղ Բալասական, Յովնաթան Սիւնի, Բենիամին Աղուանցի, Սամուէլ Տաշրացի, Գնիթ Դերջանցի, Տիրուկ Զարիշատցի, Աղան Արծրունի, Երեմիա Վաղարշապատցի, Թաթիկ Բասենցի, Սահակ Ռշտունի, Մուշէ Աղբակեցի, Գիւտ, Եղիշէ, Մովսէս Խորենացի, Դավիթ Ներգինացի Անյաղթ:

Նրանք ներկայացնում են ողջ Մեծ Հայքը, առավել շատ են Այրարատից, Վասպուրականից, Սյունիքից սաները, չնայած մեր բոլոր նահանգներն էլ բյուրավոր տաղանդավոր մարդիկ են տվել: Մաշտոցի համերկրացի՝ տարոնեցիներ էին Մուշէ Տարոնացին, Մովսէս Խորենացին, Դավիթ Անհաղթը:

Կորյունն իր ուսուցչին մեծարում է «աշակերտասէր վարդապետ» տիտղոսով: Չի եղել մի քայլ, որ Մաշտոցն աներ առանց աշակերտների, մշտապես շրջապատված է եղել աշակերտների բազմությամբ:

«Եւ ինքն բազում աշակերտօք գայր, անցանէր ի կողմանս Հայոց Մեծաց»։ (Եվ ինքը շատ աշակերտներով եկավ անցավ Մեծ Հայքի կողմերը)։

«Առնոյր ընդ իւր գոմանս լաւագոյն աշակերտաց իւրոց՝ յաբուցանել գնայր իջանել ի կողմանս Վրաց»։ (Իր աշակերտներից մի քանի լավագույններին հետն առավ, վեր կացավ գնաց իջավ Վրաց կողմերը)։

«Շրջէր գտեղեօք կարգելովք և զգաւառօքն աշակերտելովք աշխարհին Հայոց՝ զուարթացուցանել, նորոգել և հաստատել»։ (Շրջում էր իր կարգած տեղերը և Հայոց աշխարհի աշակերտած զավառները զորացնելու, նորոգելու և հաստատելու համար)։

Եւ փութացեալ գնայր հանդերձ աշակերտօք բազմօք՝ անցանել ի կողմանս Յունաց։ (Եվ շտապեց, շատ աշակերտների հետ գնաց հունական կողմերն անցնելու)։

-67-

Գրաբարը երբեմն դուրս է գալիս զուտ հայկական սահմաններից ու ձեռք է բերում համամարդկային արժեք։ Իսկ ո՞րն է այդ արժեքը։ Միայն հայերենով պահպանվել են մեծ թվով երկեր, որոնց հունարեն, ասորերեն, լատիներեն բնագրերը կորել են, և հայերեն (գրաբար) թարգմանությունները դարձել են կան միակ, կան առավել լիարժեք աղբյուրներ տվյալ երկի համար։ Գրաբարի համաշխարհային ճանաչում ստանալու ամենակարճ ուղին է սա։ Այդպիսի երկերից են Ափրաատի «Ճառք»-ը, Հիրենեոս Լիոնացու «Յոյցք առաքելական քարոզութեան»-ը, որ հայտնաբերվել է 20-րդ դ. սկզբին և տպագրվել 1907 թ., Տիմոթեոս Կուզի (5-րդ դ.) «Հակաճառութիւն Քաղկեդոնի ժողովոյն» և այլն։

Վերջինը՝ Տիմոթեոս Կուզի երկը, քեղեդոնական ու նեստորական դավանանքի դեմ ուղղված հիմնական դավանաբանական աշխատությունն է։ Հակառակորդների կողմից Տիմոթեոսը Կուզ է կոչվել վտիտ կազմվածքի պատճառով։ Երկի նպատակն

է սուրբ և ուղղափառ հայրերի վկայություններով հերքել Քաղկեդոնի ժողովի սահմանումները.

«Որք կամիցիք կեալ բարեպաշտաբար Յիսուսի Քրիստոսի եւ քրիստիանոսք անուանելի եւ գոլ, եւ ո՛չ երկաբնակք եւ նեստորականք...»:

«Հակաճառության» հունարեն բնագիրը կորստյան է մատնվել պատմության ընթացքում, բնական է՝ ոչ առանց քաղկեդոնական եկեղեցու ջանքերի: Պահպանվել է ասորերեն համառոտ մեջբերում, իսկ 5-րդ դարում թարգմանված հայերեն երկը միակ լիարժեք աղբյուրն է: Այն նաև հունաբան հայերենի առաջնեկներից է:

Մեկ այլ նշանակալի օրինակ. հույն եկեղեցական գործիչ և պատմաբան Եվսեբիոս Կեսարացին (3-4-րդ դդ.) հեղինակել է «Քրոնիկոն» երկը, ուր պատմում է աշխարհի արարչությունից մինչև Կոստանդիանոս Մեծ կայսեր գահակալության տարիների պատմությունը: Հունարեն բնագիրը կորել է, երկար ժամանակ հայտնի է եղել լատիներեն մասնակի թարգմանությամբ: Սակայն 1792 թ. հայտնաբերվել է հայերեն՝ գրաբար ամբողջական բնագիրը:

Եվսեբիոսի մասին դեռ 5-րդ դարում հիշատակում է Մովսես Խորենացին՝ նրա «Եկեղեցական պատմութիւնը» ներկայացնելով որպես իր բերած փաստերն ապացուցող երկ.

«Եւ վկայ քեզ ի մօտոյ երաշխաւորեսցէ Եկլէսիաստէ գիրք Եւսեբի Կեսարացոյ, զոր ետ թարգմանել երանելի վարդապետն մեր Մաշտոց ի հայ լեզու»: (Եվ մերձավոր վկա և երաշխավոր թող լինի Եվսեբիոս Կեսարացու եկեղեցական պատմության գիրքը, որը մեր երանելի ուսուցիչը՝ Մաշտոցը, թարգմանել տվեց մեր հայերենով):

-68-

5-րդ դարի հայ մատենագրության առաջնեկներից մեկը «Յաճախապատում ճառք» քարոզների ժողովածուն է, որ բաղկացած է բարոյական, կրոնական բովանդակության 23

ինքնուրույն ճառերից: Դասական գրաբարի դյուրամարս բնագրերից մեկն է այն, որ մեծ ճիգ չի պահանջում հեշտ հասկանալու համար:

«Վասն վարուց առաքինութեան» ճառում, օրինակ, խոսվում է մարդու օրգաններն առաքինի կյանքի ընթացքին պատրաստելու մասին:

«Որ բանայ զաչս իւր ի լոյս արեգական ի միջօրէի, ոչ մերձանայ խաւար ի բիբս նորա:

Աչքն հաւատով սրբեալ տեսչութիւն խնամոցն է նշոյլք է լուսոյ անպակաս ուրախութեանցն:

Լսելիք անխարդախ հաւատով հնազանդեալ յառողջութիւն եւ յանարատ սրբութիւն՝ անբիծ խնամովք երախտաւոր սիրոյն:

Ձեռք սուրբ հաւատով բուրվառք են անուշահոտ խնկով ի հրոյ Հոգւոյն Սրբոյ, բուրեալ ի բարի գործս հեռաւորաց եւ մերձաւորաց ի վայելս:

Ոտք ուղղեալ հաւատով հասուցանեն ամենաբուրբ վարուք եւ կարգօք ի քաղաքն կենդանեաց ի սրբոցն ժողովս»:

Վերջնական լուծված չէ այս ճառերի հեղինակի հարցը: Դրանք Մաշտոցի գրչին պատկանելու հիշատակ ունի Կորյունը, երբ գրում է՝ «...սկսեալ երանելոյն Մաշթոցի ճառս յաճախագոյնս, դիւրապատումս, շնորհագիրս, բազմադիմիս ի լուսաւորութենէ եւ ի հիւթոյ գրոց մարգարէականաց կարգել եւ յօրինել»:

Սակայն բանասիրությունը կասկած է հայտնել այս տվյալի վերաբերյալ, և երբեմն ճառերի հեղինակ է համարվում Գրիգոր Լուսավորիչը: Համենայն դեպս, վերջին անգամ դրանք հրատարակվել են «Մատենագիրք Հայոց» ժողովածուում հենց Գր. Լուսավորչի անվամբ:

-69-

Սուրբատեսի հանրահայտ մտքերից մեկը գրաբարով հնչում է այսպես. «Ծանիր զքեզ»: Այսինքն՝ ինքդ քեզ ճանաչիր առաջին հերթին, քո հնարավորությունները, քո անձը...

Այս խոսքը գրված է եղել Ապոլոնի Դելֆյան տաճարի ճակատին՝ որպես դելֆյան պատգամախոսների պատգամ:

Իմաստուն լինելու համար հները հորդորում էին ճանաչել աշխարհի իրողությունները: «Ճանաչի՛ր ժամանակը», - ասում է Սիրաքի իմաստնությունը.

«Զխրատուն արմատն դառն ասացին, եւ զպտուղն քաղցր. բայց թէ կամիս իմաստուն լինել՝ ծանի՛ր զժամանակն»: (Խրատի արմատը դառը կլինի, իսկ պտուղը՝ քաղցր, իսկ եթե կամենում ես իմաստուն լինել՝ ճանաչի՛ր ժամանակը»:

Իմաստնության համար՝ ևս մի քանի պատգամ հներից.

«Որ նստի ընդ իմաստունս՝ գովի յիմաստնոց. իսկ որ կցորդ լինի անմտաց՝ դիւրաւ անմտացի»:

«Սիրելոյ քո եւ բարեկամի զամենայն զանձս խորհրդոց քոց մի՛ բացցես»:


«Լեզու սուր ծառայէ մարդոյ՝ որչափ լռէ. իսկ յորժամ խօսիս զանպատշաճն՝ ծառայ եղեր նմա»:

-70-

Մեր հիմնական պատմությունների ու կարևոր գրքերի պատվիրատուները անվանի անձինք, իշխաններ են եղել: Մ. Խորենացու Պատմութեան պատվիրատուն Սահակ Բագրատունին է, Ղազար Փարպեցու Պատմութեան պատվիրատուն նրա մանկության ընկեր և Հայաստանի մարզպան Վահան Մամիկոնյանն է, որ ոչ միայն պատվիրել, այլ նաև ուրվագծել է գրքի նպատակն ու ծրագիրը. առաջարկել է շարունակել Փ. Բուզանդին և շարադրել 4-րդ դարի վերջի և 5-րդ դարի Հայաստանի պատմությունը: Եվ ոչ միայն շարադրել, այլև մեծ զգուշությամբ մեկ առ մեկ գրանցել հոգևորականների առաքինություններն ու քաջ այրերի սխրանքները, որպեսզի ժողովուրդը նրանց օրինակով ցանկանա բազմապատկել սխրանքները, իսկ ծուլներն ու վատերը ջանան լավը դառնալ.

«Որպէս զի քաջքն լսելով զայլոց զգործսն յառաջագոյն քաջացելոցն՝ յաւելեալ յանձանց քաջութիւն՝ անուանի յիշատակ

թողցեն զկնի իւրեանց՝ անձանց եւ ազգի: Իսկ ծոյլքն եւ վատքն հայելով յանձինս եւ լսելով զայլոց զպարսաւանս՝ ի բարի նախանձ կրթեալք ջանասցին լաւանալ»: (Ռրպեսզի քաջերը, լսելով առաջներում գործված քաջությունների մասին, բազմա-



պատկեն իրենց անձնական սխրանքները, իրենցից հետո թողնեն անվանի հիշատակ՝ իրենց անձերի ու ազգի համար: Իսկ ծույլերն ու վատերը, անձամբ տեսնելով այս ամենը և լսելով այլոց պարսավանքները, բարի նախանձից կրթվելով, ջանան լավանալ):

-71-

Մարդկային մի չնչին թուլություն է նախանձը: Այն հաղթահարելու լավ միջոցներ են անուշադրության մատնելն ու արդյունավետ աշխատելը:

Մի լավ դեղատոմս ենք գտնում նաև Եղիշեի մոտ: Վարդանանց պատերազմից հետո նահատակված կամ գերության տարված այրերի կանայք, որ ինքնակամ գրկել էին իրենց փափկասուն կենցաղից, «կապտագույն ներկված նախանձը»

մոռացության են մատնում սուրբ սիրով: Հռչակավոր «տիկնայք փափկասունք» հատվածից է մեջբերումը.

«Միամտութեամբ յաղթեցին խորամանկութեան եւ սուրբ սիրով լուացին զկապուտակ ներկուածս նախանձուն. հատին զարմատս ագահութեան, եւ չորացան մահաբեր պտուղք ոստոց նոցա: Աղօթիւք բացին զփակեալ դրունս երկնից եւ սուրբ խնդրուածովք իջուցին զհրեշտակս ի փրկութիւն. լուան աւետիս ի հեռաստանէ եւ փառաւորեցին զԱստուած ի բարձունս»: (Միամտութեամբ հաղթեցին խորամանկութեանը եւ սուրբ սիրով լվացին նախանձի կապուտակ ներկվածքը. կտրեցին ագահության արմատները, և չորացան նրանց ոստերի մահաբեր պտուղները: Աղոթքով բաց արին երկնքի փակված դռները և սուրբ խնդրվածքներով հրեշտակներին ցած բերին փրկության համար. ավետիս լսեցին հեռաստանից և փառավորեցին Աստծուն բարձունքում):

-72-

Մովսէս Խորենացու Պատմությունն ավարտվում է Երրորդ գրքի՝ «Փոխումն յաշխարհէ մեծին Սահակայ և Մեսրոպայ», ապա և «Ողբ վասն բառնալոյ թագաւորութեանն Հայոց յազգէն Արշակունեաց եւ եպիսկոպոսությանն յազգէ Սրբոյն Գրիգորի» գլուխներով:

Հայ բանասիրության առեղվածներից է Մ. Խորենացու «Պատմութեան» չորրորդ գրքի հարցը,- արդյո՞ք Պատմահայրը հեղինակել է նաև չորրորդ գիրքը, թե՞ այնուամենայնիվ պատմությունն ավարտել է Արշակունյաց տան կործանումով: Այդ հարցին նվիրված անգամ առանձին մենագրություն է գրվել:

«Պատմութեան» պահպանված մոտ 40 ձեռագրերից ոչ մեկում չորրորդ գրքի հիշատակության հետք չկա, սակայն դրա մասին երկիցս հանդիպում ենք Թովմա Արծրունու (10-րդ դար) պատմության մեջ: Նախ Ա դպրության մեջ նա ասում է, որ Շամիրամի, Նինոսի, Աբրահամի և այլոց մասին կարող ես գտնել «ի չորրորդ դպրության Մովսէսի»: Ապա ավելի ուշ հավելում է.


«...Ժամանակ կենացն Ս. Սահակայ տնեալ ձգեալ ամս ճի եւ պարարտ ծերութեամբ, որպէս գրեալ աւանդեցաւ մեզ այս ի չորրորդ դրուագի խոստաբանեալ պատմութեանն Մովսէսի Խորենացոյ»: (Ս. Սահակի կյանքի տևողությունը ձգվել է ամբողջ 120 տարի՝ մինչ խորին ծերություն, ինչպես գրել և մեզ ավանդել է Մովսես Խորենացին պատմության խոստացած չորրորդ դրվագում):

Եթե Թովմա Արծրունու այս վկայությունը ճշգրիտ է, ուրեմն հայ բանասիրությունը դեռ անելիքներ ունի Մ. Խորենացու «Պատմութեան» չորրորդ գրքի հարցը վերջնական պարզելու համար:

-73-

Բանաստեղծ-երաժիշտ, շարականագիր կաթողիկոս Կոմիտաս Աղցեցու (7-րդ դար, նրա անունն անցել է մեծ երաժշտապետ Կոմիտաս վարդապետին) ամենահայտնի երկը «Անձինք նուիրեալք» բառերով սկսվող շարականն է:

Անձինք նուիրեալք սիրոյն Քրիստոսի,
Երկնաւոր նահատակք և կուսանք իմաստունք,
Ի պարծանրս ձեր բարձրացեալ տոնէ
Մայր Սիովն դըստերօքն իւրովք:



Շարականն ունի 36 տուն՝ այբբենական ակրոստիքոսի առաջնեկն է, որից այբբենական ծայրակապով գրված շարականները ստացել են «Անձինք» անվանումը:

Շարականը նվիրված է Հռիփսիմյան կույսերին և ըստ վկայությունների՝ առաջին անգամ կատարվել է 618 թ. Ս. Հռիփսիմն եկեղեցու օծման ժամանակ:

Մեր այս Կոմիտաս կաթողիկոսն է Ս. Հռիփսիմն եկեղեցու կառուցողը, հավանական է՝ նաև ճարտարապետը: Տաճարի խորշերից մեկի մեջ Կոմիտաս Աղցեցին թողել է շինարարական արձանագրություն. «Քրիստոս Աստուած, յիշեա՛ զԿոմիտաս Հայոց կաթողիկոս՝ շինող սրբոյ Հռիփսիմէի»:

-74-

Հայ միջնադարյան գրականության եզակի կին ստեղծագործողներից է Մահակդուխտը: 8-րդ դարի անվանի գործիչ Ստեփանոս Սյունեցու քույրն է եղել, գրել է շարականներ, սրբակենցաղ կյանքով ապրել: Նաև ուսուցանել է երաժշտություն առարկան, որի մասին իմանում ենք Սյունիքի մեծ պատմիչի՝ Ստեփանոս Օրբելյանի (13-րդ դար) նկարագրությունից:

«Ի մանկութենէ ստացեալ զվարս կուսութեան եւ առանձնացեալ ի ձորակին Քառնոյ յայրի միոջ, եւ անտանելի վարս ճգնութեան կրէր յանձն... Սա յոյժ հմուտ էր երաժշտական արհեստին, որ և ի ներքոյ վարագորի նստեալ ուսուցանէր զբազումս: Եւ արար կցորդս եւ մեղեդիս քաղցր եղանակաւ, յորոց մին «Սրբուհին Մարիամ», որ իւրով անուամբն է յօրինեալ»: (Մանկությունից ընդունել էր կույսի վարքը, առանձնացել էր Քառնու ձորի մի քարայրում եւ կյանքն անցկացնում էր անտանելի ճգնակեցությամբ: Նա շատ հմուտ էր երաժշտության արվեստում, որը և սովորեցնում էր շատերին՝ վարագորի տակ նստած, նաև ստեղծեց քաղցրեղանակ կցուրդներ ու մեղեդիներ, որոնցից մեկը՝ [նվիրված] սուրբ Մարիամին, որն իր անունով հորինեց):

Օրբելյանի հիշատակած՝ «իր անունով հորինված» (բանա-կապով գրված) երգը «Սրբուհի Մարիամ անապական» տողով սկսվող շարականն է, որի տուների առաջին տառերը ակրոս-տիքոսով հոդում են «Սահակդուխտ» անունը:

Սահակդուխտի մասին գեղեցիկ տողեր ենք կարդում նաև Մխիթար Այրիվանեցու պատմության մեջ.

«Սա էր զարդարեալ ամենայն առաքինութեամբ եւ իմաս-տութեամբ, սնուցանէր մանկունս անարատս, եւ ածեալ ի չափ հասակի՝ կարգէր ի քահանայութիւն: Իսկ ինքն ի ներքոյ վա-րագուրի նստելով՝ ուսուցանէր զաշակերտեալսն: Սա արար տաղս բագումս եւ մեղեդիս եւ կցուրդս ծննդեան եւ փոխմանն, յորոց մի է Սրբուհի Մարիամն»: (Սա զարդարված էր ամենայն առաքինությամբ և իմաստությամբ, սնուցում էր անարատ մանուկներին և չափահասության հասցնելով՝ քահանայության էր կարգում: Իսկ ինքը, վարագույրից ներս նստելով ուսու-ցանում էր աշակերտյալներին: Նա ստեղծեց ծննդյան բազմա-թիվ տաղեր և մեղեդիներ և կցուրդներ ու փոխեր, որոնցից մեկն է «Սրբուհի Մարիամ»-ը):

-75-

Որքան գերհարուստ է մեր գրավոր մշակույթը, նույնքան էլ ունենք հայտնի կորուստներ: Տարբեր աղբյուրներից տեղեկա-նում ենք, որ ժամանակին գրվել է այս կամ այն երկը, բայց զանազան պատճառներով չի պահպանվել, կուլ է գնացել ժա-մանակի արհավիրքներին կամ հանգամանքներին: Ահա նման մի խիստ համառոտ ցանկ կորսված կամ դեռևս անգյուտ հայերեն երկերի:

Մամբրե Վերծանող, «Պատմութիւն», որ ըստ Թովմա Արծ-րունու՝ գրել է իր Մովսես եղբոր հեղինակակցությամբ:

Վրթանէս Քերթող, «Համառօտ պատմութիւն շինութեան վկայարանի Հռիփսիմեանց»:

Պետրոս Սիւնեցի, «Պատմութիւն», որի ստեղծման մասին վկայում է Ստ. Օրբելյանը:

Անանիա Նարեկացի, «Գիր (հակաճառություն) ընդդեմ Սմբատայ Թոնդրակեցույ»:

Սամուել Կամբջաձորեցի, «Գահնամակ հայ եպիսկոպոսաց»:

Յովհաննէս Կոզեռն, «Պատմություն Բագրատունեաց»:

Պետրոս Գետադարձ, «Թուղթք առ Գրիգոր Մագիստրոս»:

Յովհաննէս Իմաստասեր, «Պատմություն», սելջուկյան արշավանքի մասին է, որից մանր հատվածներ պահպանվել են «Հաղպատի վանքի քեօթուկ» երկում:

Վանական Վարդապետ, «Պատմություն»:

Ղուկաս Կեղեցի, «Համառօտեալ Շարակնոց»:

Գրիգոր Կեսարացի, «Թուականք եւ պատմություն յԱդամայ մինչեւ ի մեր ՌՁԵ թովին»:

Մեր քարտարանում կուտակվել են նման կորսված գրքերի ու առանձին երկերի կամ հատվածների մասին մոտ 40 քարտեր, և այն վերջնական թիվ չէ իհարկե:

Որ դրանք ստեղծվել են, հետո կորել, ստույգ տեղեկություններ ունենք այլ աղբյուրներից: Այդպես՝ կաթողիկոս և պատմիչ Հովհաննէս Դրանսխանակերտցուց (9-10-րդ դդ.) իմանում ենք Շապուհ Բագրատունի անունով պատմիչի մասին, որ պատմություն է գրել «գեղջկաց անարուեստ» լեզվով ժամանակի պատմական շատ դրվագների մասին.

«Յայսմ հետէ ապա եթէ թերթեւ թուեսցի քեզ գառ ի ծերունեացն անցեալ բան ի պարգագունիցն չափաբերապէս հանդիպեցայց, վասն զի հաճեցաւ բանս ոչ երկրորդել միսսանգամ զհետեւանս գրուցաց Շապիոյ Բագրատունոյ եւ մերումս ժամանակի պատմագրի, որ յայտապատում իսկ արարեալ է գրոյցս պայազատութեան որդոյ Աշոտոյ սպարապետին Սմբատայ զիշխանական պատմութիւնն»: (Այսուհետս եթե քեզ հաճոթվա ծերունիներից անցած խոսքերը, պարգագոյն և չափավոր կերպով կներկայացնեմ, քանի որ հաճելի չէ կրկնել մեր ժամանակի պատմագիր Շապուհ Բագրատունու պատմության մանրամասները: Նա ստեղծել է Սմբատ սպարապետի որդու՝

Աշոտի իշխանության, թագավորների հաջորդականության ստույգ պատմությունը):

Շապուհի պատմության առանձին հատվածներ գտնելու և տպագրելու փորձեր եղել են, սակայն այն մնում է դեռևս անհայտ:

-76-

1917 թ. Արևմտյան Հայաստանից փրկված և Էջմիածին բերված հայերեն ձեռագրերի մեջ հայագետները հայտնաբերում են ոչ մեծ ձեռագիր՝ բովանդակությամբ մի նոր պատմություն, այն համարում են Շապուհ Բագրատունու հեղինակածը և 1921 թ. տպագրում «Պատմութիւն Շապիոյ Բագրատունոյ» վերնագրով: Հետագայում անվիճելի փաստերով հերքվեց, որ դա Շապուհինն է, և նրա հեղինակը սկսվեց պայմանականորեն անվանվել Անանուն Զրուցագիր:

Շատ ավելի ուշ՝ 2000 թ. Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց Մատենադարանի թ. 960 ձեռագրում գտանք մեկ էջանոց գրվածք՝ «Այս ի պատմութենէ Շապիոյ Բագրատունոյ է» վերնագրով, որի հեղինակի հարցը դեռ չենք պարզել, բայց ներկայացնում ենք մեկ հատված՝ ընթերցողին մտորել տալու համար, որ այնուամենայնիվ հայ բանասիրությունը շատ անելիքներ ունի, անգամ նոր կամ դեռևս կորստյան մեջ գտնվող երկերը «հայտնաբերելու» ուղղությամբ:

«Յաշխարհիս Հայոց այր ոմն անուն Գրիգորատուր, ի գաւառէ Անձախից ձորոց, այր ուղղափառ հաւատովք եւ զօրութեամբ արուեստիւք, յաւուրս նորա հոռոմք տիրէին զմեզ: Եւ նա բազում հերձուածս ի հոռոմոց դարձոյց եւ զՅովհաննէս Մայրազոմեցոյն զաղանդն խափանեաց, եւ յետ նորա ոմն յաշակերտաց նորա՝ անուն Յովհաննէս, նա գրեաց զկանոնոյ զայդ, քանզի զօրավարն հոռոմոց հրամայեաց աշխարհիս Հայոց յաւուրս քառասնորդաց, զի ամենայն մարդիկ կերիցեն ձեթ եւ գինի եւ ձուկն»:

Գրիգոր Նարեկացու կենսագրական շատ տվյալներ, նրա գործած հրաշքները, աղավնու վերակենդանացնելը և այլ մանրամասներ իմանում ենք իր վարքից՝ «Վարք սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Նարեկացոյ»: Այս երկից ենք իմանում նաև նրա հանդեպ եղած չարակամության մասին («իբրեւ բազմացան չարախօսք սրբոյն») և համոզվում, որ անգամ սուրբ այրերը գերծ չեն չարախոսություններից:

Գր. Նարեկացին, ըստ վարքի, ջանքեր էր գործադրում Վասպուրականը միաբանության բերելու, ծույլ ու մարմնասեր առաջնորդներից գերծ պահելու համար, և պարզ է՝ շատերը թշնամանում էին նրա հանդեպ: Ահա մի անգամ իշխաններ ու հոգևորականներ են հավաքվում Գրիգորին դատելու, մարդիկ են ուղարկում և նրան հրավիրում ատյան: Մեր սուրբը այդ մարդկանց հյուրասիրելու համար աղավնի է տապակել տալիս, այն էլ՝ պահքի ուրբաթ օրով: Եւ եկած մարդիկ ասում են.

- Վարդապետ, ո՛չ է օրս ուրբաթ:

Իսկ նա յանգեաւ եղեալ՝ ասէր.

- Թողութիւն արարէք, եղբա՛րք, ես ոչ գիտացի զաւուրս պատկեր:

Յայնժամ ասէ ցտապակեալ աղանիսն.

- Արի՛ք, գնացէ՛ք ի տեղիս ձեր և յերամս, զի պահս է օրս այս:

Եւ նոյնժամայն ընդ ասել սրբոյն՝ կենդանացան աղանիքն և թեւս առեալ թռեան առաջի ամենեցուն:

«Մատեան ողբերգութեան» բանալին Գրիգոր Նարեկացին տալիս է մի անհուն բառախաղի միջոցով.

Համարի դատել զիս նոքօք ամէնիրաւ հատուցմամբք,-

...էն ամենայնն, եւ յի՛ս ամենեցուն:

Բառակրկություններն ու նման բառախաղերը Նարեկում ամեն քայլի են հանդիպում: Առանձնացրել ենք մի քանի

օրինակ, որոնք հեղինակը կազմել է «ամեն» բառի բազմազան ձևերով.

Համայնդ յամենայնում ամենայնի ստացեալ քեզ փառս.
Ամէն:

Առ ամենեսեան ամենայնի յամենայնի կարող ես, գթա՛ծ:

Զջախս փառաց շիջեալ՝

Զամենայնիս յամենայնի ամենայն իրօք վնասակարս...

Հաւատացեալք յամենայնի ամենայնի ամենակալ տէրութեան նորա:

Սկիզբն ամենայնի եւ յամենայնի ամենայն լրմամբ օրհնեալ ի բարձունս:

Եւ զամենայնն յամենայնի ամենայնի քո կարողութեամբդ թո՛ղ ինձ:

-79-

Գր. Նարեկացու «Մատենան»-ի բառակրկնությունները գիտական գրականության մեջ անվանվում են «նարեկյան» ոճական հնարանք:



Ահա մի չքնադ նմուշ.

Եւ Քեզ միայնոյ՝ սկզբանդ եւ անսկզբանդ,

Ընդ սկզբանդ եւ սկզբնաւորիդ սկզբանց,

Սուրբ Երրորդութեանդ եւ միում Աստուածութեանդ

Փառք եւ իշխանութիւն յաւիտեանս: (Բան ԽԸ, Ը)

Նարեկացին ակնարկում է Հորը՝ «սկզբանդ եւ անսկզբանդ», Որդուն՝ «ընդ սկզբանդ», Սուրբ Հոգուն՝ «սկզբնաւորիդ սկզբանց»: Գաբրիել Ավետիքյանը մի առիթով սա համեմատում է Գր. Նազիանզացու ճառերից մեկի բանաձևի հետ՝ «Որ անսկիզբն եւ սկիզբն եւ որ ընդ սկզբանն մի Աստուած է...» (Նարեկյուծ, 249), սակայն բովանդակային նույնությունից բնավ չի բխում, որ նմանությունը պատահական չէ:

-80-

«Լինե՛լ, թե՛ չլինել...» խնդիրը մեկ այլ հարթության մեջ տիեզերական իր ընկալմամբ է բանաձևում Գրիգոր Նարեկացին.

«Ահա խնդիրք փոքունց եւ կշիռք մեծամեծաց»: Ո՛րն է Նարեկում այդ խնդիրը:

Յաւազանէ կոչեցայ Արթուն,

Եւ ի քուն մահու ննջեցի,

Ի փրկութեան աւուր Հսկող յորջորջեցայ,

Բայց զգաստութեանն աչս կափուցի,-

Ահա դատաստան, ահա յանդիմանութիւն,

Ահա ամօթ դիմաց եւ տազնապ հոգւոց,

Ահա խնդիրք փոքունց եւ կշիռք մեծամեծաց: (Բան ՀԲ, գ)

Նարեկացին այս դրվագում ակնարկում է իր անվան «արթուն, հսկող» իմաստները, որ առաջ է գալիս հունարենի Γρηγόριος անվան նշանակությունից, և որից հեռացած և ուրեմն դատաստանի արժանի է համարում իրեն:

Ավազանից կոչվեցի Արթուն,

Բայց ննջեցի մահվան քնով,

Փրկության (=ձեռնադրության) օրը Հսկող հորջորջվեցի,
Բայց զգաստության համար աչքս փակ պահեցի,-
Ահա՛ դատաստան, ահա՛ հանդիմանություն...

Ահա՛ խնդիրը մանր և կշիռը մեծամեծ [մեղքերի]:

Նարեկացուց 600 տարի անց մեծ անգլիացին Համլետի բերանով գրում է.

Լինե՛լ, թե՛ ջինե՛լ, այս է խնդիրը,

Ո՞րն է հոգեպես ավելի ազնիվ.

Տանել գոռ բախտի պարսաքարերը և սլաքները,

Թե՛ զենք վերցնել ցավ ու վշտերի մի ծովի ընդդեմ:

-81-

Մայրի ծառն ու նրա փայտը հնում մեծ պահանջարկ են ունեցել: Ծառի խեժից պատրաստել են բեկկնայուղ, լայն կիրառություն ունեւ բնափայտը, որն ամուր էր, թեթև ու գեղեցիկ, որի համար պահանջված էր նավեր շինելիս, ինչպես ընթերցում ենք Աստվածաշնչի տարբեր հատվածներում.

«Մայրք ի Սանայիր լեռնէ շինեցան քեզ պահանգք, եւ տախտակք նոճիք ի Լիբանանէ առան՝ առնել քեզ կայմս եղեւնափայտեայս»:

Գործածվում էր շինարարության մեջ (օրինակները Ս. Գրքից են).

«Ի յատակէ տանն մինչեւ ցորմսն եւ մինչեւ ցգերանսն պատեաց շուրջանակի փայտիւ ի ներքուստ. եւ դրուագեաց ի ներքոյ տանն կողմանոցաւք մայրիւք»:

«Զի շինեցեր քեզ տուն պատշաճող, վերնատուն հովանոց՝ յօրինեալ պատուհանիւք, տախտակամածս ի մայրից, ծեփեալ նաւթիւ»:

Սրանց հավելենք նաև անմահության խորհրդանիշի համա-
րումը, և պարզ կլինի մայրի ծառի պահանջված լինելը հնում:

Ոչ պակաս գործածություն ունի մայրի ծառը նաև գրական
երկերում: Նարեկի թեկուզ այս մեկ գործածությունը կարող է
հարյուրավոր օրինակներ «ծածկել».

Նա գի թէ՛ զմայրս Լիբանանու ի մի լուծ կշռոց զաւղեցից,

Եւ կամ զլեառն Արարատեան

Ի կէտ ամբարձման նժարի միոյ

Արդարութեան միջնորդ կացուցից,

Ոչ հաւասարէ այնր հարթութեան համագուգակցել:

Աշխարհաբար չափածո փոխադրումը՝ Վազգեն Գևորգյանի.

Եթե անգամ ողջ մայրի անտառներն այն Լիբանանի

Զողելով դարձնեն կշեռքի լծակ,

Եվ մի նժարին իբրև կշռաքար

Արարատ լեռը դնելու լինեն,

Դարձյալ չի կարող նա իր ծանրությամբ

Իջնելով հասնել, համագուգակցել ու հավասարվել

Մյուս նժարի հանցանքներիս հետ:

-82-

Գրիգոր Մագիստրոսը (990-1059 թթ.) հայտնի գիտնական
է, փիլիսոփա, քաղաքական և ռազմական գործիչ, 1048-ից՝
Հարավային Հայաստանի և Միջագետքի կուսակալ, Բջնիի Ս.
Աստվածածին, Կեչառիսի Ս. Գրիգոր Լուսավորիչ, Հավուց Թա-
ռի եկեղեցիների կառուցող: Նաև հայտնի բանաստեղծ է եղել:

Նրա չափածո երկերից ամենից ուշագրավը «Առ Մանուչէ»
պոեմն է՝ առավել հայտնի «Հազարտողեան» անունով:

1016 տող ընդգրկող այդ երկը Գր. Մագիստրոսը գրել և
ավարտել է ընդամենը չորս օրում, որով հաղթող է ճանաչվել Կ.

Պոլսում իր հետ վեճի բռնված արաբ աստվածաբան Մանուչեի նկատմամբ: Արաբը հպարտանում է, թե Ղուրանը հորինված է հանգավոր, և դա իբր Մուհամեդի տված շնորհի արդյունք է, մինչդեռ Ավետարանները գուրկ են այդ հատկանիշից: Մագիստրոսն առարկում է և հայտարարում, որ այնքան նյութը, որը Մուհամեդը գրել է 40 տարում, ինքը չափածո ու հանգավոր կգրի 4 օրում:

«Ո՛չ մարգարեության տեսիլ և ո՛չ նշանք և ո՛չ արհեստք, այլ տաղասացությւնք արաբացւոցն սովորաբար վարժաբանութեամբ մրցեալք միայօդ աւարտեալ գծի, զոր դուք կափայ անուանէք»:

Մագիստրոսը վերապատմում է ողջ Աստվածաշունչը հանգավորված տողերով: Հիսուսի ծննդյան պատկերը, օրինակ, ներկայացնում է այսպիսի տաղասացությամբ.

Իջեալ հրեշտակապետն բազմութեամբ գնդին՝

Երգեն գփառս Աստուծոյ և օրհնութիւն առաքողին:

Ձայնակից լինին հովիւքն, զհաշտութիւն մեզ հայցէին,

Աստղն գուշակեալ, զոր մարգարէք նախ ասէին:

Եկեալ կային ի վերայ՝ ուր էր մանուկ աստուածորդին,

Մոզք յարևելից առեալ հրաման՝ ընծայ բերին...

Մանուչէ մահմեդական գիտնականը սքանչանում է «Հազարտողեան»-ով, ընդունում իր պարտությունը, ապա, ըստ տաղերյունների, մկրտվում և քրիստոնյա դառնում:

-83-

Ներսես Շնորհալու անմահ երկերից է «Հաւատով խոստովանին» բանաստեղծությունը: 24 տնից բաղկացած այս հրաշալի ոտանավորը աղոթքների մի շարք է՝ ըստ օրվա ժամերի, և

գրված է ամենքի համար՝ «ի պէտս քահանայից և ժողովրդոց, մեծի և փոքու, արանց և կանանց»:

Ներկայացնում ենք «Հաւատով խոստովանիմ»-ի երկու տուն: Առաջինն ի դեպ արտասանում են Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանի սաներն ամեն Աստծու օր դասերն սկսելիս՝ «Հայր մեր» աղոթքից հետո:

Իմաստութիւն Հօր Յիսուս,
Տո՛ւր ինձ զիմաստութիւն՝
Զբարիս խորհիլ եւ խօսիլ եւ գործել
Առաջի քո յամենայն ժամ.
Ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց
Փրկեա՛ր զիս.
Եւ ողորմեա՛ քո արարածոց
Եւ ինձ՝ բազմամեղիս:

Պահապան ամենայնի Քրիստոս,
Աջ քո հովանի լիցի ի վերայ իմ
Ի տուէ եւ ի գիշերի.
Ի նստիլ ի տան,
Ի գնալ ի ճանապարհ,
Ի ննջել եւ ի յառնել,
Զի մի՛ երբեք սասանեցայց.
Եւ ողորմեա՛ քո արարածոց
Եւ ինձ՝ բազմամեղիս:

Ն. Շնորհալու կենսագիրն ասում է, որ բանաստեղծությունն իր ժամանակին թարգմանվել է բազմաթիվ լեզուներով, և որ նմանը չէիր գտնի մեկ այլ ազգի եկեղեցում.

«Որ եւ թարգմանեցաւ զկնի յամենայն լեզուս ազգաց եւ ազանց, զի չիք իբրեւ զայն ի մէջ ամենայն աղօթական բանից վարդապետաց ընդ համօրէն եկեղեցիս»:

«Մարդ էլ կա, մարդ էլ» խոսքի մի հին տարբերակ առաջարկում է Գրիգոր Տղա կաթողիկոսը (1173-1193)՝ Ներսես Շնորհալու եղբայրը:

Իցեն զի ոչ գիտեն և գիտեն զի ոչ գիտեն:

Իցեն զի ոչ գիտեն և ոչ գիտեն զի ոչ գիտեն:

Իցեն զի ոչ գիտեն և գիտեն զի գիտեն:

Կարծեն հավերժական բանաձև է: Աշխարհաբար հնչում է այսպես.

Մարդ կա չգիտի, և գիտի՛ որ չգիտի:

Մարդ կա չգիտի, բայց չգիտի՛ որ չգիտի

Մարդ կա չգիտի, բայց գիտի թե գիտի:

Մեկ այլ հայտնի խոսքի տարբերակ էլ գտնում ենք Հովհաննես Երզնկացու (13-րդ դար) մոտ.

Մէկ կայ, որ հազար արժէ, հազար կայ, որ մէկ չարժէ:

Այն մէկն, որ հազար արժէ, մօտ յանգէտին փող մի չարժէ:

Շատ հեռու չէ նաև Սուրբատեսի միտքը: Դելֆյան հարցուկը փիլիսոփային Հունաստանի ամենագիտուն մարդն է համարում, որին ի պատասխան Սուրբատեսն ասում է (իհարկե՛ ոչ գրաբարով, այլ հունարենով)՝

«Զայն գիտեն, զի ոչինչ գիտեն»:

Միջնադարի մեր ամենից համբավավոր հոգևորականներից է Հովհաննես Գառնեցին (13-րդ դար): Դեռ մանուկ տարիքից ճգնակյաց կյանքով ապրող Հովհաննեսը կուսակրոն քահանա ձեռնադրվելուց հետո շրջում է քաղաքից քաղաք, քարոզում մարդկանց: Ժամանակակիցները վկայում են, որ նա օժտված է եղել բժշկելու բացառիկ շնորհով, որով կարողացել է դարձի

բերել և մեր եկեղեցում մկրտել 1000-ից ավելի մահմեդականների:

Հովհաննես Գառնեցին հեղինակել է շատ խրատներ, աղոթքներ: Նրա «Աղօթագրքից» բերվող մի հատվածը կարող է ցույց տալ, թե նրա մտքերը բարոյական ինչպիսի անթերի կերպարից են սկիզբ առել, առանց որն ունենալու անհնար է մարդկանց, առավել ևս՝ այլազգիների վրա ներգործություն ունենալ, անգամ մկրտել մեր եկեղեցու ծեսով:

Որ աստ ո՛չ հոգայ վասն մեղաց իւրոց, անդ հոգայ ի հուր գեհենոյն, որ ոչ աւգտի:

Որ աստ գինով զմայլի, անդ կարաւտանայ կաթի մեղրոյ:

Որ աստ ծիծաղի անառակ եւ անյազ կարկաչելով, անդ լայ եւ ողբայ անդադար:

Որ աստ պանծայ քաջախաւսութեամբ, անդ պապանձի մեծաւ յամաթով:

Որ աստ չառնէ ողորմութիւն, անդ չի հանդիպի յողորմութեան:

Որ կրանիւքն կեղծաւորի, անդ հատանեն ընդ մէջն եւ մասնակից առնեն անհաւազիցն:

Որ աստ խռովարար է եւ ռիսապահ, անդ զտարտարոսն ժառանգեսցէ:

Որ աստ մախայ ընդ այլոց բարի, անդ չառնու զվարձս վատակոց:

-86-

Կատեխեզիսը միջնադարյան ժանր է՝ որևէ ուսմունքի հիմնադրույթների շարադրանք հարց ու պատասխանի ձևով: Լայնորեն տարածված է եղել նաև հայ մատենագրության մեջ: Ամենից նշանավոր երկերից է Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանցը», որ միջնադարյան գիտելիքների հանրագիտարան է կարծես:

Նման մի գիրք՝ հարց ու պատասխանի պարզ շարադրանքի ձևով, հեղինակել է Վարդան Արևելցին (1200-1271 թթ.) Հերոսմ Ա թագավորի պատվերով: «Լուծմունք ի Ս. Գրոց» վերնագրով այդ երկը (հայտնի է նաև «Ժղլանք» անունով) կազմված է բազմաբնույթ նյութերից, ունի հանրագիտարանային բնույթ հատկապես դավանաբանական գիտելիքներում:

Ժամանակին այն տպագրվել է բնագիրը վերցնելով Մաշտոցյան Մատենադարանի թիվ 941 ձեռագրից, որ ունի «Վարդան Վարդապետի առ Հերոսմ թագաւորն գրեալ է յԱւետարանէն. հարցումն Հերոնյ» խորագիրը: Վ. Արևելցին ներկայացնում է մի շարք սուրբգրային և դավանաբանական պարզաբանումներ՝ Հերոսմ արքայի հարցումներին ի պատասխան:

«Հարց. Զի՞նչ ասաց Տէրն ցայրն, որ ասաց՝ «Վարդապետ, եկից եւ ես զկնի քո», «աղուեսուց որջք գոն, եւ թոչնոց՝ երկնից դադարք»:

Պատասխանի. Ասեն, թէ Սիմոն կախարդն էր այրն, որ կամեցաւ ի պատճառս ազահուրթանն աշակերտել եւ ինչ ժողովել: Ասաց սրտագէտն նենգաւոր աղուիստն, որ է սատանայ, կայ տեղի ի քեզ, եւ թելաւոր թոչնոց, որ են դեւք, հանգիստ եւ ինձ՝ ո՛չ, զի ամբարտաւանելով ոչ գնաց ընդ այլ ժողով, զի հրամայեաց Տէրն»:

-87-

Միջնադարյան մեր գրիչները զուսպ էին ու խոնարհ: Իրենց ջանադիր աշխատանքի դիմաց միակ բանը, որ խնդրում էին, իրենց համար աղոթելն էր և մեկ էլ բարի հիշելը: Պահպանվել են «Ձեռքս մաշի դառնայ ի հող / Գիրս մնայ յիշատակող» բանաձև-ոտանավորի բազմաթիվ տարբերակներ: Ձեռագրերից արտագրել ենք նման մի քանի օրինակներ:

Ա.

Ձեռս երթայ, գիրս մնայ,
Մարմինս տկարանայ
Ի հող դառնայ,

Ձեզմէ խնդրեմ մէկ հայր մեղայ
Անարժանիս գլխոյն վերայ:

Բ.

Ձեռքս փտի եւ հողանայ,
Գիրս յիշատակ առ ձեզ մնայ,
Ով որ կարդայ եւ օգտի ի սմա՝
Բարին յիշեա՛ գծող սորա:

Գ.

Ո՛վ գիր, որ մնաս,
Ո՛վ եղբայր, որ կարդաս,
Ո՛հ թէ զմեզ մոռանաս,
Զի ձեռքս գնայ եւ գիրս մնայ,
Դու որ կարդաս՝ նայ զմեզ յիշեա՛:

-88-

Հնում թանաք, մելան ստանում էին՝ որպես հումք օգտագործելով խունկ, տորոն, գխտոր, կտավատի ձեթ, նռան կեղև, ձու, որդան կարմիր և այլ հանքային ու բուսական նյութեր:

Մեր ձեռագրերում պահպանվել են թանաք պատրաստելու բազմաթիվ բաղադրատոմսեր: Այդպիսի մի բաղադրատոմս քաղել ենք Երուսաղեմյան թ. 1586 ձեռագրից.

«Խրատք խում թանաքի: Առ Ա մխթալ արջասպ, Բ մխթալ գոլթոր, Ը մխթալ անապական գինի, զգոլթորն ջարդի եւ զարջասպն եւ զերկունս լի՛ց ի գինին, թող որ Բ օր թրջի: Յետոյ հան ու տորոի, եւ ապա զարջասպն եւ դի՛ր ի վերայ կրակին, որ Ա եռ գայ, եւ յստակեցո՛ւ եւ գրի՛: Բաւ է մեզ»:

Բաղադրատոմսի անձանոթ բառերը կարող ենք ճշտել միջին հայերենի բառարաններից, օրինակ՝ *մխթալ* «ծանրության չափ, որ հավասար է մոտ 1.5 գրամի», *գոլթոր* «բույսի վնասված տեղում հոսող հյութերից առաջացած պինդ նյութ»: Խորհուրդը ճշգրիտ գործածելիս ստացվում է մուգ գույնի թանաք:

Մեր տպագիր առաջին գրքերից «Պարգատումարը» տոմարական հաշվումների, գուշակությունների մի ժողովածու է, այդ թվում՝ եղանակի կանխատեսումների, արևի և լուսնի նշանների մասին: Այսինքն՝ միայն մեր օրերում չէ, որ փորձում են կանխատեսել սպասվող եղանակը, «Պարգատումարում» նման շատ դրվագներ ենք գտնում:

«Թէ արեգակն ամպով ի մայր մտանէ, անձրևոյն նշան է:

Թէ յորժամ ծագէ արևն և մեծ երևի, և ամպքն փոքրիկ՝ պարզոյ նշան է:

Յորժամ երկինքն դեղին երևի, պարզոյ նշան է:

Յորժամ ի մուտն արևու թուխ ամպ ճառագայթէ, անձրևոյ նշան է»:

Պարգայ

Թ.է. Հոկտեմբեր. Լւ. չորէ քշաբժի. գիւտիսս. Հոկտեմբէ. իգ. Նոյեմբեր. Լ. շաբաթ. յիսնակացբարեկ. Նոյեմբեր. ժգ. քմբրոնադ. Նոյեմբ. իգ. կիրակի: Հեկտեմբեր. Լւ. Երկուշաբթի. սբ. յակոբայբարեկ. դեկտ. է. ճմեռնամուտ. դեկտ. ժր. յայտնու. Թիբարեկ. Դեկտեմբեր. իգ. Երկուշաբթի:

Գ.է. Երրեակ. Բ. Յունվար. Լւ. Երէ քշաբժի. Յայտնու. Թի. յունվար. գ. կիրակի. միջոցշաբ. ամ. Ելիօր. Լւ. Հրապարկիբարեկ. յունվար. ժգ. փետրվար. իր. ամ. Բ. ուրբաթ. միսին

Արուստի

դատ. Զ. փետր. ժգ. Տիսեշաբժի. Բ. ունբարեկեդ. փետր. գ. մարտ. Լւ. ուրբ. գարնանամուտ մարտ. ի. չորէ քշաբժի. Չ. ատիկմարտ. իդ. Հւրի. Լ. Երկուշաբթի. Հ. Լեւոնի քապր. է. կիրակի. Հ. Զնկատոյ. ապր. ժգ. կիրակի. Մայիս. Լւ. չորէ քշաբժի. Լ. Լաստյ. մայիս. իդ. ուրբ. Յունիս. Լ. շաբաթ. ամառնամուտ. յուլիս. ժգ. չորէ քշաբժի. Վ. արդ. ապտ. յուն. Լ. միջոցշաբաթ. է. Յունիս. Լւ. Երկուշաբթի. Հ. Լ. գոստոս. Լւ. Տիսեշաբժի. ամառնամուտ. ժր. միջոցշաբ. դ. սեմտեմբեր. Լ. կիրա

Գրքի «Կաղանդացոյց» բաժինը ցույց է տալիս, թե շաբաթ-վա որ օրով սկսվելու դեպքում տարին ինչպիսին կլինի: Որքան էլ պատկերացումները հին են, սակայն նշենք, որ 2018 թվականը, օրինակ, սկսվում է չորեքշաբթի օրով, և ուրեմն ըստ «Պարզատումարի»՝

«Եթե կաղանդն չորեքշաբթի լինի, ձմեռն երկար և խիստ [լինի], գարուն գիճային (=խոնավ), ամառն ազնի՝ ցորեն և գինի և մեղր շատ, միրգ առատ, ամենայն իրաց աճումն, աշուն չոր և հողմային»:

-90-

Հայ միջնադարյան գիտական մտքից անբաժան է փիլիսոփայությունը: Արդեն 5-րդ դարում հռչակված Դավիթ Անհաղթն իր փառքը ձեռք էր բերել բանավիճական ձիրքերի շնորհիվ: Արևմտյան գրականության մեջ նա հայտնի է նաև Դավիթ Արմենիոս անունով: Դավիթ Անհաղթի երկերից առավել հայտնի են «Սահմանք իմաստասիրութեան», «Վերլուծութիւն Ներածութեանն Պորփիրի», «Մեկնութիւն Ստորոգութեանցն Արիստոտելի» և «Մեկնութիւն ի Վերլուծականն Արիստոտելի», առաջին երեքը պահպանվել են նաև հունարեն:

Դավիթ Անհաղթի և այլոց փիլիսոփայական երկերին զուգահեռ ստեղծվել են նաև բառարաններ:

Մաշտոցյան Մատենադարանի թ. 110 ձեռագրում հանդիպում ենք 17-րդ դ. թարգմանիչ, փիլիսոփա, աստվածաբան Ստեփանոս վրդ. Լեհացու «Բանք իմաստասիրականք և աստուածաբանականք» աշխատությունը: Իր բնույթով փիլիսոփայական և աստվածաբանական հասկացությունների բացատրական բառարան է այն, որում բերված են բառ-հասկացությունների ընդարձակ բացատրություններ, օրինակ՝ ազատություն, անհատ, գեղեցիկ, գիտություն, գոյացություն և այլն:

Ներկայացնում ենք մեկ-երկու բառահոդված՝ միջնադարի հայ փիլիսոփայական մտքի մասին պատկերացում կազմելու համար:

«Արիություն է մանաւանդ շուրջ գերկիւղի մահու և նախ է շուրջ գերկիւղի և երկրորդաբար՝ շուրջ զհամարձակութեամբ: Արիություն սանձահարէ գերկիւղ և ժուժկալութիւն՝ զտրտմութիւն, իսկ հեգութիւն՝ զբարկութիւն: Եւ որ միանգամ է արի, գոյ և համբերող, այլ ոչ անդրադարձաբար, քանզի համբերութիւն է մասն արիութեան: Եւ արիութիւն տանի զվտանգ մահու, բայց համբերութիւն տանի զինչնիցէ չար: Արիութիւն նախկնաբար է առ երկիւղի և երկրորդաբար՝ առ տրտմութեան, իսկ համբերութիւն՝ առ ներհակ սոցին»:

«Արուեստ է ուղիղ բան առնելեաց և ունակութիւն ներգործական: Արուեստ, որ կարգաւորի առ գործ բանականին, ասի ազատական, իսկ որ կարգաւորի առ գործ մարմնոյ, կոչի ծառայական: Արուեստ ոչ կարէ ածել զտեսակ գոյացական, եթէ ոչ զօրութեամբ բնութեան, զի տեսակք արուեստաւորաց են պատահմունք: Արուեստ միշտ է առ բարի, որպէս և գիտութիւն, իսկ որ ինչ յինքնէ կարգաւորի առ չար ոչ է արուեստ: Տեսակք արուեստաւորաց ոչ այլ ինչ են, եթէ ոչ բաղադրութիւն, կարգ և ձև»:

-91-

Կարինի նահանգի Սալաճոր գյուղը տեղավորված է Եփրատի վտակներից մեկի ափին: Այն Կարինի ամառանոցային վայրերից է եղել՝ զով կլիմայով ու բնությամբ: Փարթամ ծաղիկներ է ունեցել անշուշտ, և Դավիթ Սալաճորեցի տաղասացը (16-17-րդ դդ.), իր հայրենի չքնաղ բնաշխարհին աչքի առաջ ունենալով, մի գողտրիկ ոտանավոր է ստեղծել՝ «Գովասանք ծաղկանց» վերնագրով: Ընթերցում ես այն և կարծես շնչառությամբ զգում սարերի մաքուր ու թափանցիկ զովությունը, աչքերումդ՝ մեր սարերի ծաղկատեսակ գույներն ու գեղեցկությունը.

Ծաղկունք բուսնին հարիւր հազար, ցեղ-ցեղ ներկած եւ գունզգուն,

Թուրլու-թուրլու հոտեր ունին, մինն քանց զմիսն սիրուն...

Նախ *ձնծաղիկն* ու *չիկտամ*, *բարփն* ու *խաժուակն* յառաջագոյն,

Յետոյ *բարքոշն* ու *կոկոռշն* կու ջահառին ի հետ *զամ-պուն*:

Սնպուլ մանաւուշ է հագել, դրնզի՝ *եօթնաղբբանցարին*,

Հոռոմծաղիկն է փշոտել, բուսել հետ *մոշին*, *մորենուն*:

Կռնկուկն ու *կաքւեղեզն* խիստ կու բուսանին մէջ սոր-բերուն,

Ակնետուկն ու *գառինդմակն* կարօտ են *մանուշկին* տեսուն...

Հազրէվարդն, *շարուրիկ* ծաղիկ, *գուլիսպահ*, *փենահ*, *ճշնարօտ*, *գինեվուն*, *խասթութիա*, *զաֆրան*, *զամքիւղ*, *լեզուակ*, *շրվան*, *խոլորձ*, *սուսամ*, *գուլգազ*...

Սակաւ ծաղկունքն ես եմ գովեր, բազում մնաց վարպետնե-րուն:

Կարծեմ թե չկա որևէ հայ հեղինակ, որ ծաղիկների գովք արած չլինի: Դեռևս 5-րդ դարում Ագաթանգեղոսը ծառերի բողբոջելն ու ծաղկանց ծաղկելը համեմատում է Ս. Հարության հետ և ապա թվարկում մի շարք ծաղիկներ.

«Սոյնպէս եւ գունակ գունակ եւ երփն երփն ծաղկանց, որ-պէս մանրագորն եւ վարդն եւ շուշանն եւ ասպազանն եւ յաս-միկն եւ անիարն եւ սմնակն եւ ներգիսն եւ շամպոլիտակն եւ մեղրուկն, հօրօտն եւ մօրօտն եւ մանիշակն...»:

-92-

Բժշկական հարյուրավոր դեղատոմսեր են պահպանվել մեր հին աղբյուրներում: 17-րդ դարի անվանի հայ բժիշկ Ասար Մեբաստացու մի պարզ ու մատչելի դեղատոմսի օրինակով կարելի է ցույց տալ դրանց բովանդակությունը և ուղղվածույ-թյունը.

«Շարապ դամոնի, որ օգտակար է խիստ ջերմութեան և գծարան կտրէ և զբնութիւն կակղացնէ: Առ աղեկ դամոն չիր և

կաթը փէ և արկ ի պտուկ և ջուր լից, որ ծածկէ և եռցու մէկ եռ և կտաւով քամէ և արկ ի մէջ պտկին և այլ եփէ, որ ի Դ-ից մէկ մնայ և առ ամ աման: Երբ պիտենայ՝ տուր ըստ կարեացն հիւանդին և օգտէ»:

Աշխարհաբար փոխադրել ենք մենք (թե՛ն դեռ չենք փորձել օգտակարութիւնը).

«Սալորի օշարակ, որ խիստ օգտակար է ջերմութեանը, ծառավը կտրում է և աղիները կակղացնում: Վերցրու սալորի լավ չիր և կորիզները հանիր, լցրու ամանի մեջ և վրան ջուր ավելացրու, որ ծածկի և եռացրու մեկ անգամ, ապա կտավով քամիր և [ստացված քամութիւնը] լցրու ամանի մեջ և կրկին եփիր, որ մնա մեկ քառորդ մասը, ապա վերցրու և դիր ամանի մեջ: Տուր հիվանդին ըստ անհրաժեշտութեան, և կօգնի»:

Կարծում եմ՝ ստացվելու է սալորի դոշաբ:

-93-

Միմեոն Լեհացին՝ 17-րդ դ. մեր ճանապարհորդ հեղինակը, միառժամանակ ապրել է Լեհաստանի Զամոսցա քաղաքում, հանդիպել խնդիրների, որից և, անշուշտ, կյանքի փորձից ծնվել է «Վիպասանութիւն Նիկոլական» երկար ոտանավորը: Նրանում պատմում է Լեհաստանում Նիկոլ Թորոսովիչի հետ կապված անցուդարձերը, երբ հայերին ստիպմամբ կաթոլիկություն պարտադրվեց, և այդ ընթացքում գնահատում է նաև հայկական վարք ու բարքի որոշ դրսևորումներ.

Այլեւ մեր ազգն հայկազան,
Ընկերատեացք եւ ամբարտաւան,
Միշտ կռուով կենան եւ անմիաբան,
Բնաւ սէր չունին, չեն միաբան,
Ո՛ր եւ գաւառք մեր հայրենի,
Ո՛ր կան թախտերն թագաւորի,
Մեծ Արշակայ եւ Տրդատի:
Եղեալ ենք ցիրուցան երկրի,
Օտար աշխարհ եւ յոյժ հեռի:

Հակոբ Նալյանը (1701-1764) եղել է Կ. Պոլսի ու նաև Երուսաղեմի հայոց պատրիարք: Մեծ մտածող հոգևորականներից է, հեղինակել է Նարեկի ստվար ու մանրակրկիտ մեկնություն, առաջին անգամ տպագրել է Եզնիկի «Եղծը» (1762): Նրա գրած երկերից մեկն է «Գանձարան ծանուցմանց» (1758) քարոզների ժողովածուն, որի շատ հատվածներ այսօր ևս արդիական են: Օգտակար կլինի դրանք ընթերցել, մանավանդ՝ հաճախ անհանդուրժող մթնոլորտում: Գրաբարից փոխադրել են Գևորգյան հոգևոր ճեմարանի սաները:

«Հարցնողին արագ պատասխանիր եւ արագ տեղի՛ տուր նախատողին: Ոչ ռքից մի՛ բաժանվիր արհամարհական խոսքով եւ կռվով: Սակավախոս եղիր և համբերութեամբ լսիր խոսողին, իսկ անկարգ խոսքերից երեն դարձրու: Զվարթաղեմ եղիր, երբ խոսում ես մարդկանց հետ»:

Ահա նույն հատվածի գրաբար բնագիրը.


«Հարցողին փութով պատասխանեա՛ր եւ նախատողին փութով տու՛ր տեղի: Մի՛ բաժանեսցիս յումեքէ անգոսնելի բանիւք եւ կռուով: Լե՛ր սակաւախօս եւ խօսողին համբերող: Ընդ անկարգ բանից խոժոռոբարոյ: Ընդ ումեք խօսիլդ լե՛ր գուարթագոյն»:

1794 թ. Իրանի շիրազեցի մի քահանա՝ Տեր Հարություն Շմավոնյան, Հնդկաստանի Մադրաս քաղաքում, որ այն ժամանակ մի կուռ և հարուստ հայ համայնք էր պարունակում, անգլիացիների օրինակով սկսում է լրագիր հրատարակել: Առաջին տպագիր հայերեն պարբերականն է դա՝ «Ազդարարը»՝ մեծ մասամբ գրաբար նյութերով:

Առաջին համարի սկզբում Հ. Շմավոնյանն իր նպատակները շարադրելիս կարևոր է համարում ամսագրի միջոցով բարություն, ազգասիրություն սերմանելը և այսպիսի տողեր է գրում.

«Նախապէս խոստովանիմ, զի ոչ ունիմ այնքան ցանկութիւն կրելոյ պտուղ, որքան փափագ՝ տեսանելոյ զաշխատանս իմ ի վաճառս բարութեան եւ մատուցանելոյ ձեզ երէ ոչ նորագիտ ինչ, այլ զայն, զոր ի վաղուց հետէ ճանաչէք... ազգասիրութեան եւ բարեկարգութեան»:

Առաջին համարը միայն 28 բաժանորդ ունեցավ, որի բովանդակությունն էր նշանավոր մարդկանց կյանքը, առակներ և պատմություններ, գրական հատվածներ, օրացույց և այլ նյութեր:



«Ազդարարը» տպագրվեց մինչև 1796 թվականը, որից հետո, թվում է, վախճանվել է բավականին ցավագին կյանք ունեցած նրա հիմնադիրը, և դրանից հետո պարբերականի տպագրությունը՝ դադարել:

-96-

Առ ի՞նչ պիտին քեզ ուսմունք,

Քո ցաւագին սկզբունք,

Այն ինչ ոսկի և արծաթ

Զմարդ առնեն միայն մարդ:

Մեսրոպ Թադիսայանն այս տողերը գրել է մեզանից մոտ 180 տարիներ առաջ իր օրերի մասին՝ պատկերացում չունենալով մեր օրերի մասին:

-97-

1848 թվականին ողջ Եվրոպան ցնցած Իտալիայի ազատագրական շարժումը որոշ ներգործություն է ունեցել նաև հայ գրականության վրա: Մի փոքր հիշենք՝ ընդդեմ ավստրիական զավթիչների ոտքի կանգնած իտալացի ժողովուրդը ստեղծում է ժամանակավոր կառավարություն, պայքարն առանձնապես բորբոքվում է, երբ Ավստրիան կանոնավոր զորքերով մարտեր է սկսում ապստամբների դեմ:

1849 թվականին, երբ Վենետիկում ազատագրական պայքարը իր կիզակետին էր հասել, այնտեղ գտնվող Ղ. Ալիշանը գրում է իր գրական գոհարներից մեկը՝ «Երգ ու գնացք զօրացն հայոց ընդ Վահանայ Մամիկոնենոյ ի Շաւարշական դաշտին վրէժք» (Օ՛ն անդր առաջ) բանաստեղծությունը, որ ավելի հայտնի է իր առաջին քառատողի առաջին երկու բառերով: Դա նշանավոր «Բան. փորոտանն» է, խրոխտ քայլերգը, որ այսօր էլ կատարվում է զանազան առիթներով:

Բան. փորոտան, բարձուստ բոմբիւք յԱրարատեան դաշտն ի վայր,

Արի արանց արինք յեռանդն առատանան ի հրագայր.

Հրաւեր հայրենեաց հռչակի՜նդ հանուր

Հոգիք Հայկազանց բորբոքին ի հուր:

Ազատագրական պայքարն այս բանաստեղծությամբ տեղափոխված է հայոց իրականություն. իր քաջարի գործերին դեպի մարտ է առաջնորդում Վահանը՝ հետևյալ հորդորը կարդալով նրանց.

Հապ՝ օ՛ն, արի արանց մանկունք՝

Հայրենավրէժքըդ Հայկազունք,

Հապ՝ օ՛ն, ի գէն գունդ առ գունդ,

Յեռեալ ի պար թունդ ի թունդ՝

Ի գէն ի վրէժ, օ՛ն անդր յառաջ...

Ողջ բանաստեղծություն-երգը բռնապետության լուծը թոթափելու կոչ է, վերջում Մամիկոնյանների մարտադրոշը հպարտ բարձրացվում է արյունոտ ռազմադաշտի վրա՝ որպես հայության ազատության նշան:

-98-

Մկրտիչ վրդ. Խրիմյանը՝ ապագա կաթողիկոսը, 1855 թ.-ից Կ. Պոլսում հրատարակում է «Արծուի Վասպուրականի» ամսաթերթը: Համարներից մեկում Մկրտիչ վրդ.-ը ընթերցողներին է ներկայացնում իր նպատակները և ապա հայտնում, որ «Արծուին» իր թռիչքը շարունակելու է հայրենի Վասպուրականում:

Եւ իրոք, շատ չանցած նույն ամսագրի տպագրությունը վերականգնվում է Վանում, որ բուն Հայաստանի տարածքում հրատարակվող առաջին պարբերականն էր (նախորդները տպվել են Հնդկաստանում, Թբիլիսիում, Կ. Պոլսում և այլուր):

«Արծուի» հիմնական ուղղվածությունը հայրենի աշխարհի վերադառնալն ու այն շենացնելու հորդորն ու մղումն էր: «Դարձ Արծույն պանդխտելոյն ի Բիւզանդիոնէն յաշխարհն իւր հայրենի Վասպուրական» վերնագրով հոդվածում (1856 թ.)



խոսում է ինքը՝ Արծուին, հայկածին որդիներին կոչ է անում վերադառնալ օտարաշխարհիկ վայրերից, շենացնել հայրենի գավառներն ու շեները:

«Արի՛ք եկայք ընդ իս, եւ դու՛ք, ո՛վ տարաշխարհիկ հայկազունք, ձեզ առաջնորդ լիցի Վասպուրական Արծուին. գԳողթնացուն Վահանայ քնար առէ՛ք ի ձեռս, նովին ոգւով վառեալ՝ հարցէ թող իւրաքանչիւր ոք ի ձէնջ գնոյն աղերսաձայն թել: Արձակեցէ՛ք, որ տեսանեմ զորչափութիւն աւերածոյ երկրին իմոյ հայրենեաց: Ձեռն արկէ՛ք նոր եւս կրկին կառուցանել զաւերած անշքացեալս տաճարն հայրենի փառաց»:

Արծուի կոչը շարունակում է օղում սավառնել և արդիական մնալ մինչ օրս:

-99-

Հայերեն առաջին հանրագիտարանը պետք է համարել Մանուել Քաջբերունու (1823-1904 թթ.) «Բառգիրք արուեստից եւ գեղեցիկ դպրութեանց» երկը: Նրանում հեղինակը հավաքել

է գիտությունների, արվեստների, արհեստների, բուսական և կենդանական աշխարհի և այլնի վերաբերյալ բազմաբնույթ տեղեկություններ, բացատրություններ, նկարագրողումներ: Վենետիկում 1894 թ. տպագրված այս գիրքը գրաբարով ստեղծված թերևս վերջին մեծածավալ աշխատությունն է:

Արվեստ բառահոդվածի բացատրությունն է, օրինակ.

«Այն ամենայն, որով մարթ իցէ կատարել զգործ ինչ, եթէ ի պահպանութիւն անձին, եւ եթէ ի մտաւոր զարգացումն եւ ի գուարճութիւն»:

Այս շարքում ներկայացվում են նաև «ազատ արվեստները»՝

«Որք ծնունդ են երեւակայութեան եւ հաստատեալք ի պարարել զհոգի, որպէս է բանասիրութիւն, եւ կամ զգայարանս եւ զհոգի միանգամայն, որպէս են գեղարուեստք: Նախնիք դնէին եօթն ազատական արուեստս, որք են՝ քերականութիւն, ճարտասանութիւն, իմաստասիրութիւն, համարողութիւն, երկրաչափութիւն, աստեղաբաշխութիւն եւ երաժշտութիւն»:

Հանրագիտարանի տիտղոսաթերթին որպէս բնաբան է բերված Վերգիլիոսի խոսքը՝ «Ամենայնի յաղթէ ժիր ջան»:

(Ամեն ինչ կարող է հաղթահարել ժրաջան մարդը):

-100-

Կոմիտասից պահպանված գրություններից մի քանիսը ստեղծված են մաքուր, և որ էլ ավելի կարևոր է՝ գեղարվեստական գրաբարով: Այդպիսին է Խրիմյան Հայրիկին գրած նամակը (1895 թ. հուլիսի 25).

«Ի ժողովրդական եղանակսն Հայոց իբրեւ զծիր իմն կարմիր նկատեն առնչութիւնք սոցա եղանակաց շարականաց: Ի մէն միում յերգսն գեղջկայինսն որպէս զշող ցոլայ բնատուր հանճար հայաստան ազգին, որ եւ կարօտի բազմապիսի ուսումնասիրութեանց»:

1899-ից Գևորգյան ճեմարանում դասավանդած Հրաչյա Աճառյանը երեք տարի ապրել է Կոմիտասի հետ նույն սենյակում

և այսպիսի տողեր ունի նրա մասին. «Վերին աստիճան սրամիտ, կենսուրախ և պատրաստաբան էր Կոմիտաս և սիրված ճեմարանի մեծեն ու փոքրեն: Կոմիտաս բացառիկ դուրեկան ձայն մը ուներ և արժանացած էր Խրիմյան Հայրիկի մասնավոր համակրանքին»:

-101-

Դպրոցական ձեռնարկներում կամ այլ գրքերում երբեմն կարելի է կարդալ, որ «Գրաբարը մեռած լեզու է»: Հաճախ ձևակերպումները զավեշտի են հասնում, ինչպես այս մեկում՝ «գրաբարը գործածվում է իբրև մեռած լեզու»: Այսինքն՝ միաժամանակ և՛ մեռած է, և՛ գործածվում է և մեռած չէ...

Լեզվի կենդանի, գործող լինելու առաջին հատկանիշն այն է, որ նրանով ստեղծվում են նոր երկեր, իսկ գրաբարի դեպքում այդպիսիք ստեղծվում են նաև մեր օրերում: Այս ու այնտեղ հաճախ ենք հանդիպում նման փորձերի, գրաբարով են ստեղծվում զանազան շինությունների ու եկեղեցիների քարե հիշատակարանները, դասեր են անցկացվում Հայաստանում և արտերկրում, թարգմանվում են շարունակ: Ամեն օր գրաբարով է արվում մեր եկեղեցու ծեսը:

Ի դեպ, գրաբարով է գրված նաև «Գրիգոր Շղթայակիր Պատրիարք» մենագրության (տպ. Երուսաղեմ, 2017 թ.) մեր հիշատակարանը, այն գրել ենք Ս. Էջմիածնի նորաբաց գրադարանում, զարնանային մի հիասքանչ օր, երբ հստակ երևում էին Արարատները («ի զարնանայնոյ ամանակի նստեալ կամ առաջի Նոյաէջ Մասեաց լերանց»), և հիշատակարանը գրվել է նաև այդ տեսարանի ազդեցությամբ.

«Սկիզբն եղաւ գրելոյ պատմութեանս ի Սուրբ Քաղաքն յԵրուսաղեմ, յղացումն սորա եղել ընդ հովանեաւ Սրբոց Յակոբեանց, Ս. Հրեշտակապետոյ և Ս. Փրկչի, ապա և զկնի աւուրց և ամաց ինչ եղև զրաւ և կատարումն ի Հայաստան յԵրևան և ի Սբ. Էջմիածին, և որ յայսմ պահու ի զարնանայնոյ

ամանակի նստեալ կամ առաջի Նոյաէջ Մասեաց լերանց և ընդ կամարօք Սրբոյ Էջմիածնի, և երախտագէտ սրտիւ ի ճիգ արկանեմ յաւարտ հասուցանել զգիրս զայս վասն Շղթայակիր սրբազան Պատրիարքի»:

Եթե վերը նշված գործառույթներից նույնիսկ մեկը գործելիս լիներ այսօր, բավարար էր գրաբարը կենսունակ համարելու համար:

Լ Ե Ջ Վ Ա Կ Ա Ն Ք

-102-

Ոսկեդարը, հին ընկալմամբ, լեզվից բացի տարածվում է նաև կյանքի այլ ոլորտների վրա: Տարբեր լեզենդներ կան այն մասին, որ ոսկեդարում մարդիկ ու աստվածներն ապրել են միասին, պատերազմներ, հիվանդություններ չեն եղել, և երկիրն առանց չարչարանքի պտուղ է տվել մարդուն կերակրվելու համար, որի մասին հանդիպում ենք Հեսիոդոսի «Աշխատանք և օրեր» պոեմում:

Հին լեզուներից հունարենն ու լատիներենը ևս ունեն ոսկեդարի (կլասիկ) շրջանը, այսպես.

Հին հունարեն. ծագել է Ք. մոտ 3000 տարի առաջ, դասական շրջանը կամ ոսկեդարը կոչվում է «Պերիկլեսի դար» (Եվրոպայում սովորություն ունեն ոսկեդարը կապել այս կամ այն գործչի հետ): Լատիներեն. ծագել է Ք. մոտ 1000 տարի առաջ, դասական շրջանը համարվում է «Օգոստոսի դարը»:

Հին լեզուներից հիշատակելի են նաև եբրայերենը. ծագել է Ք. մոտ 1000 տարի առաջ, նրանով է գրված Հին Կտակարանը, հրեաների լեզուն է, հին պարսկերենը՝ հին, միջին (պահլավերեն) և նոր շրջաններով: Այսօր տարածված է 12 երկրներում:

Դասական մեռած լեզուներից են սանսկրիտը, որ առաջինը գործածված ենք գտնում Ռիգ վեդայում (տարածվել է Ք. ա. մոտ 3000 տարի առաջ), շումերերենը Միջագետքում (Ք. ա. 5000 տարի առաջ), արքադերենը Միջագետքում (Ք. ա. 4500

տարի առաջ), արամերենը Մերձավոր Արևելքում, որ Հիսուսի ժամանակների խոսակցական լեզուն էր:

Գրաբարն իր տարիքով, ստեղծված գրավոր արժեքներով պետք է դիտարկել դասական այս լեզուների շարքում: Եվ երբ ասում ենք դասական հայերեն, նկատի ենք ունենում դասական գրաբարը՝ 5-րդ դարի առաջին կեսի հայերենը, նրանով ստեղծված կամ թարգմանված երկերի լեզուն՝ բառապաշարով, հնչյունական և քերականական համակարգերով, իմաստներով, շարահյուսությամբ:

-103-

Տարիներ առաջ Վազգեն Ա հայրապետը ճեմարանի սաների հետ հանդիպելիս այսպիսի միտք է ասել.

«Տղա՛ք, լավ սովորեք մեր գրաբարը, քանի որ այն մեր աղոթքի լեզուն է»:

Մեր եկեղեցում հաճախ արծարծվող հարցերից է այն, թե գրաբարով կատարվող ծեսը ճիշտ կլինի աշխարհաբարացնել, որպեսզի առավել հասկանալի լինի եկեղեցի այցելողների համար, թե՛ այնուամենայնիվ թողնել գրաբարը:

Հարցը նոր չէ, դեռևս 14-րդ դարում Գրիգոր Տաթևացու քարոզների «Ձմռան հատորներում» հանդիպում ենք նույն հարցադրմանը:

Հարց են տալիս Գ. Տաթևացուն՝ ի՞նչ օգուտ կլինի, երբ մեկը աղոթք անի, բայց չհասկանա իր աղոթքը, երբ ունկնդրի քահանային, բայց չհասկանա նրան, քանի որ «խրթին բառով է»:

Գրիգոր Տաթևացու պատասխանը միարժեք է. անկախ նրանից, թե պատվական քարն ում ձեռքին է գտնվում՝ իր արժեքը չի կորցնում.

«Ակն մի պատռուական անկանի ի ձեռս շինական մարդոյ, որ ոչ գիտէ զգինն, և ապա տայ զակն ի ձեռս մարդոյ մի սառաֆի (=սեղանավոր), որ գիտէ զգինն, որչափ արժէ ի ձեռս

սառաֆին՝ նոյնչափ արժէ ի ձեռն շինականին, թէպէտ ոչ գիտէ զգինն»:

Այսինքն, ասում է Տաթևացին, մարդ իմաստուն լինի, թե շինական, հասկանա գրաբարը, թե ոչ, աղոթք անելիս «միապէս առնու զվարձս»:

-104-

Ճարտասանությունը մշտապես եղել է մեր հին դպրոցների ուսումնասիրման կարևոր առարկաներից մեկը: Դեռևս 5-րդ դարում թարգմանվել, լրամշակվել, կազմվել և ողջ միջնադարում տարածում է գտել «Գիրք պիտոյից» երկը, որ ճարտասանական սահմանումների ուսուցողական ձեռնարկ է: Եվ ինչն է գրքի գրավիչ կողմերից մեկը. օրինակները քաղված են իմաստասերներից, մեծ մարդկանցից, ուրախ և ուսանելի պատմություններից: Բերվող օրինակները կվկայեն դրա մասին:

«Ոմն պիթագորական եհարց, եթէ յետ քանի՛ աւուր կնոջ առ այր մերձաւորութիւն արժան է մտանել ի տէրունիսն: Եւ նա ասէ. «Յիւրմենէն՝ նոյն օրին, յօտարէն՝ եւ ոչ բնաւ երբեք»:(Մի պյութագորական հարցնում է, թե կինը տղամարդու հետ հարաբերությունից որքա՞ն ժամանակ անց իրավունք ունի տաճար մտնել: Պյութագորասը պատասխանում է. «Իր ամուսնու մոտից՝ նույն օրն և եթ, օտարի մոտից՝ ոչ երբեք»:

Ի դեպ, այս անեկդոտը տեղ է գտել Բյուզանդիայի Կոստանդ կայսրին հայոց եկեղեցու հղած դավանաբանական թղթում (7-րդ դար), որ վերցրել են «Գիրք պիտոյից»-ից:

Մեկ-երկու այլ զվարճալի և սրամիտ պատմություններ ճարտասանական ձեռնարկից:

«Դիոգենէս տեսեալ զմանուկ ստամբակ (=ստահակ), զմանկածուն գաւազանաւ եհար»:(Դիոգենէսը անդաստիարակ մանկան համար գավազանով ծեծում է նրա մանկավարժին):

«Աղէքսանդրոս Մակեդոնացի հարցեալ յումեմնէ. «Ո՛ր եմ քո գանձք», զսիրելիսն ցուցեալ՝ ասաց. «Ի նոսա»:(Ալեքսանդր

Մակեդոնացուն հարցնում է մեկը, թե որտե՞ղ են քո գանձերը: «Ահա նրանց մեջ»,- պատասխանում է նա՝ իր սիրելի մարդկանց ցույց տալով):

«Արժան է յաղքատութենէ փախչել եւ ի մեծն անկանել ծով, եւ կամ ի վիմաց հոսիլ ի բարձանց»: (Աղքատությունից պետք է հեռու փախչել, մեծ ծովն ընկնել և կամ ժայռերից ցած նետվել):

Եվ «Գիրք պիտոյից»-ի ամենից մեծ դասը, որ այդ ձեռնարկի մի ենթաբաժնի վերնագիրն է.

«Կրթութիւն է ամենայն ինչ»:

-105-

Սուրբ Թարգմանչաց տոնը մեր եկեղեցին նշում է աշնանը՝ Սուրբ Խաչ տոնից հինգ շաբաթ անց: Մեր եկեղեցին սրբացրել է թարգմանիչներին՝ Մեսրոպին, Եղիշեին, Մովսեսին, Դավիթ Անհաղթին, Գրիգոր Նարեկացուն, Ներսես Շնորհալուն: Այդ առիթով և միշտ պետք է հիշել, որ մեր գրերը աստվածային պարզ և պարզաբան լինելով, մեր գրերը աստվածային պարզ են: Կորյունն իր պատմությունն այդպես էլ սկսում է՝

«Հայաստան աշխարհի աստվածապարզ գրի մասին, թե՛րբ և որ ժամանակ բաշխվեց և ինչպիսի՛ մարդու ձեռքով»:

«Որում պարզե՛ր իսկ վիճակ յամենաշնորհողէն Աստուծոյ հայրական չափուն ծնեալ ծնունդս նորոգ և սքանչելի՝ սուրբ աջովն իւրով, նշանագիրս հայերէն լեզուին»: (Ամեն բան շնորհող Աստուծոց իսկապես պարզակեց նրան այդ բախտը. նա իր սուրբ աջով հայրաբար ծնեց նոր և սքանչելի ծնունդներ՝ հայերեն լեզվի նշանագրեր):

Մ. Խորենացին առավել շեշտում է աստվածային միջամտության պահը և մի գեղեցիկ պատկեր տալիս. «Ի սրտին գործարանի երևութացեալ հոգւոյն աչաց թաթ ձեռինն աջոյ՝ գրելով ի վերայ վիմի»: Այսինքն՝ «հոգու աչքերով» տեսնում է ձեռքը, որ գրում էր քարի վրա մեր տառերը:

Ագաթանգեղոսը Տիրի մասին պատմում է «Աւերումն երազամոյն մեհենին Տրի դից, փախուստ եւ պատերազմ դիւաց» գլխում: Դրանից իմանում ենք, թե ինչպէս Տրդատ թագավորը հրաման է տալիս և Գրիգոր Լուսավորչին է հանձնում հնամենի ու նախնիների պաշտամունքը անհիշատակ դարձնելու գործը՝ «գիր կարծեալ աստուածսն չաստուածս անուանեալ՝ անյիշատակ առնել, ջնջել ի միջոյ»:

Կուռքերի մեհյանները ջնջելու ճանապարհին առաջինը հանդիպում է Տիրը (գուցե ո՛չ պատահամբ, այլ որովհետև առավել սիրելի էր ժողովրդին). «Նախ դիպեալ ի ճանապարհի երազացոյց երազահան պաշտաման Տիր, դպիր գիտութեան քրմաց, անուանեալ Դիւան գրչի Ռմգդի, ուսման ճարտարութեան մեհեան»:

Տիրի սիրված լինելու մասին են վկայում բազմաթիվ բառերն ու անունները հայերենում, որ կազմված են «տիր» բաղադրիչով, այդ թվում՝ տրէ ամսանունը, Տիրակատար քաղաքը և նույնանուն լեռը Տարոնում, Տիրան, Տիրոց, Տրդատ անունները և այլն:

5-րդ դարում ու նաև հետագայում շատ ենք հանդիպում հայ երաժիշտների *փանդին* գործիքին: Թե ինչ է այն եղել, ստույգ նկարագրությունը չկա, մանավանդ որ 14-րդ դարից դուրս է եկել գործածությունից: Սակայն երաժշտագետները հավանական են համարում, որ փանդիոնը նախատիպն է մեր սագի, և ունեցել է 3 կամ 4 լար, այսինքն՝ այն լարային կամիթավոր գործիք է եղել:

Փանդիոնով են հին հայերը երգել ու նվագակցել Վահագնի մասին հանրահայտ հատվածը՝ «Երկնէր երկին, երկնէր երկիր...»: Յուրաքանչյուր հայորդու անշուշտ քաջ ծանոթ է այդ առասպելական դրվագը:



«Զայս երգելով ոմանց փանդռամբ՝ լուաք մերով իսկ ական-
ջօք», ասում է պատմահայր Մովսես Խորենացին: Նշանակում
է՝ իր օրերում մեր նախնի հայերը, փանդիռ նվագելով, երգել ու
գովերգել են Վահագնի մասին: Առասպելի՝ մեզ ծանոթ դրվագի
շարունակությունը պակաս հետաքրքիր չէ, Վահագնը կռվել ու
հաղթել է վիշապներին.

«Յետ որոյ եկ ընդ վիշապաց, ասէին յերգին, կռուել նմա եւ
յաղթել, եւ կարի իմն նմանագոյնս զՀերակլեայ նահատակու-
թիւնսն նմա երգէին: Այլ ասան զսա եւ աստուածացեալ, եւ
անդրի ի Վրաց աշխարհին զտորա չափ հասակին կանգնեալ՝
պատուէին զոհիւք»: (Դրանից հետո երգում էին, թե կռվել է
վիշապների դեմ ու հաղթել, և Հերակլեսի քաջագործություն-
ներին շատ նման բաներ էին երգում նրա մասին: Բայց ասում
են նաև, թե սա աստվածացրած է, և Վրաց աշխարհում սրա
հասակով արձան կանգնեցնելով՝ պատվում էին զոհերով):

Փանդիժի մասին չխոսելով՝ Վահագնին հիշատակում է նաև Ագաթանգեղոսը, նրան բնութագրում «հռչակավոր» մակդիրով.

«Ուրերորդ պաշտօն հռչակաւոր, անուանեալն Վիշապա-
քաղն Վահագնի, յաշտից տեղիք թագաւորացն Հայոց Մեծաց,
ի սնարս լերինն Քարքեայ, ի վերայ գետոյն Եփրատայ, որ
հանդէպ հայի մեծի լերինն Տաւրոսի, որ եւ անուանեալ ըստ
յաճախաշատ պաշտաման տեղեացն՝ Յաշտիշատ»: (Պաշտա-
մունքի ուրերորդ հռչակավոր վայրն էր Վիշապաքաղն Վահագ-
նի անվամբ, Մեծ Հայքի թագավորների գոհերի տեղը, Քարքե
լեռան լանջին, Եփրատ գետի վրա, Տավրոս մեծ լեռան դիմա-
ցը, որը և պաշտամունքի վայրերի հաճախաշատ լինելու պատ-
ճառով անվանված էր Աշտիշատ):

-108-

Ողջույն տալու ձևերով ու արտահայտություններով հա-
րուստ են բոլոր լեզուները, նաև հայերենը:

Լատիներեն *salut* ծագում է «թնդանոթի համազարկ»
բառից: Հին հունարենում ասում էին «խայրէ»՝ «ողջ (ուրախ)
եղիր»: Եբրայերեն «շալոմ լեքհա» նշանակում է «խաղաղությ-
յուն ընդ քեզ»: Ս. Հարությունից հետո, երբ Հիսուս երևում է
առաքյալներին, իր ողջույնն է տալիս. «Եւ յետ ութ ատուր դարձ-
եալ էին ի ներքս աշակերտքն, եւ Թովմաս ընդ նոսա: Գայ Յի-
սուս դրօքն փակելովք, եւ եկաց ի մէջ եւ ասէ՝ «Ողջո՛յն ընդ
ձեզ», որ հնչել է «խաղաղութիւն ընդ ձեզ»:

Առհասարակ արևելյան ժողովուրդների մոտ հատուկ կա-
րևորություն ունի երկար ողջունելու սովորույթը: Մեկը գալիս է
հարևանին գույժ տալու, թե տունդ այրվում է, բայց նախ եր-
կար-բարակ օրվա ողջույնն է տալիս ու ստանում, քաղաքա-
վարական ժեստերից հետո միայն հայտնում. «Ինչ որ Աստված
կամենա, բարի է, բայց իմացիր, որ տունդ բոցերի մեջ է...»:

Հայերենի «ողջոյն» բառն իր մեջ առողջության մաղթանք է
պարունակում, «բարեւ»-ը՝ բարիքի, բարության ցանկություն:

Ողջունի մի արտահայտություն կարդում ենք Հայաստանի բյուզանդական մասի թագավոր Խոսրով Արշակունու նամակում ուղղված հայ նախարարներին (ըստ Մ. Խորենացու)։

«Թուղթ Խոսրովու առ նախարարսն։ Քաջ արանց Խոսրով Հայոց արքայ ստրատելատիդ գազատնի եւ ամենայն նախարարացդ մերոց, ողջոյն շատ։ Ուրախ լերու՛ք, զի մեք ողջ ենք եւ ուրախացաք ընդ լուր ողջունի ձերոյ եւ առաքեցաք ըստ խնդրոյ ձերոյ զայս պայման ուխտի. առաջին՝ չիշել զյանցանս ձեր...», ապա ողջունի այս խոսքերից հետո շարադրում է իր բուն ասելիքը։

Մեկ այլ բանաձև է Եղիշեի մեջբերածը՝ Հագկերտ Բ-ի հրովարտակ-նամակը հայերին.

«Առ ամենայն ազգս տէրութեան իմոյ՝ արեաց եւ անարեաց, բազմասցի ի ձեզ ողջոյն մարդասիրութեան մերոյ. դուք ողջ լերուք, եւ մեք մեզէն ողջ ենք դիցն օգնականութեամբ...»։

-109-

Թագը պատվի, իշխանության, գորության նշան է։ Հին հայերենում թագ բառին բազմաթիվ հոմանիշներ ունենք՝ պսակ, խոյր, ապարոշ, արտախոյր, շիգդ, գլխադիր, շամփրակ, միթր։



Սա ցույց է տալիս թագի տեսակների բազմազանությունը։ Եվ իրոք, մատենագրական աղբյուրներում հանդիպում ենք հոմանշային բազմազան կիրառությունների։ Զուտ ոսկե թագերի մասին հիշատակումներ շատ կան, դրանից բացի թագը լի-

նում էր պսակաձև, կամ սպիտակ ժապավեն՝ հյուսված ոսկերթել երիզներով ու անգին քարերով:

Ըստ Ագաթանգեղոսի՝ երբ Տրդատ Արշակունին Հռոմի կայսեր փոխարեն նրա զգեստները հագած մենամարտում է Գոթաց արքայի դեմ և հաղթում, մեծ պատվի է արժանանում և թագ ստանում, որը կապում են Տրդատի գլխին:

«Յայնժամ մեծացոյց յոյժ թագաւորն զՏրդատիոս եւ մեծամեծ պարգեւս ետ նմա՝ թագ կապեաց ի գլուխ նորա եւ ծիրանեօք զարդարեալ մեծացոյց զնա եւ կայսերակերպն զարդու շքեղացեալ՝ մեծարեաց զնա»: (Այն ժամանակ թագավորը հույժ մեծարեց Տրդատին և մեծամեծ պարգևներ տվեց նրան, թագ կապեց նրա գլխին և ծիրանի պատմունճաններով զարդարելով՝ պատվեց նրան):

Թագ է դրվել նաև Հիսուսի գլխին, բայց այն եղել է փշերից պատրաստված պսակ: Հռոմեացի զինվորները նման կերպ փորձել են անվանարկել Հիսուսի «թագավոր հրեից» մեղադրանքը:

«Եւ զգեցուցանեն նմա քղամիդ կարմիր եկ ծիրանիս, եւ եղին ի գլուխ նորա պսակ՝ արարեալ ի փշոց: Եւ սկսան ողջոյն տալ նման եւ ասել՝ Ողջո՛յն, արքա՛յդ հրեից»:

-110-

Երբեմն կարելի է կարծիք լսել, թե հայերենը այնքան հարուստ չէ, ինչպես օրինակ՝ ռուսերենը, որ նախամասնիկների միջոցով ճկուն է դառնում և բազմաթիվ նոր իմաստներ ստանում, օրինակ՝ вылить, влить, полить, пролить, прилить, подлить, разлить, отлить, излить, залить, долить և այլն: Սակայն այդպես մտածողները մոռանում են, որ հայերենը կարող է առանձին բառերով արտահայտել բազմաթիվ իմաստներ, ինչպես՝ լցնել, ջրել, ոռոգել, հեղել, թափել, պարպել, ոթել, ածել և այլն:

Այդպիսի «ռուսագետների» է նմանեցնում Հրաչյա Աճառ-
յանը նաև մեր հին հունաբաններին, որոնք, «հրավականանալով
հայերենի արմատական ձևերով կամ նախորդալոր բացա-
տըրություններով, որոշեցին հնարել հայերեն նախամասնիկ-
ներ համաձայն հունարենի» (Հ. Աճառյան): Այդ պատճառով
ստացվեցին դերանուն, ենթադրել, ներհակ, ներգործել, շաղ-
կապ, շարունակ, վերձանել, տարբերել, փոխարկել և հարյու-
րավոր այլ բառեր, առանց որոնց հայերենը դժվար է պատկե-
րացնել:

Սակայն երբեմն այնքան էին տարվում իրենց հունականու-
թյան մեջ, որ հայերենին հաղորդում էին ոչ դասական գու-
նավորում ու ձևավորում: Հետևյալ փոքրիկ հատվածն իր իմաս-
տը պարզ մատուցելու փոխարեն իմացնել է տալիս հեղինակի
կամ թարգմանչի «իմաստուն» լինելը.

«Յարահետեւողք իմաստասիրացն եւ վերահայեցողք չա-
փաբերապէս մակագրութեանց՝ զաստեղս ի լուսնոյ ասեն
ընծուիլ եւ զլուսին արեգակամբ ուռճացեալ եւ զբոլոր արեգակն
յարբայինն երկնէ, հիկէն արփւոյն հեղեալ զծագումն յերկա-
քանչիւր գօտիսն, եւ զանձնիւր գօտիսն ի ձեռն արեգական
ընծուի՝ ըստ դասի, ըստ բերման, ըստ ժամանակ»:

Այսինքն՝ հունարենասիրությունը (կամ մեր օրերի ռուսերե-
նասիրությունը, անգլերենասիրությունը) պետք է բերի հայե-
րենի զարգացմանը: Հակառակ դեպքում վերածվում է մերժելի
օտարամոլության:

-111-

Գրաբարում հաճախ են նույն խոսքում, նույն նախադա-
սության մեջ իրար կողք կողքի գործածվում հոմանիշ բառեր,
հոմանշային շարքեր:

«Յորժամ ամենայն ձմեռն եւ ամառն տառապիցեն եւ ցօղահար եւ ցրտաբեկ եւ խորշակահար լինիցին»:

«Պարտի զմիտս յստակել եւ զխորհուրդս սրբել, գյոյզս շարժմանց պարգել» (Եզնիկ):

«Եթէ ցածութիւն իցէ, եւ եթէ իմաստութիւն, եւ եթէ հեզութիւն, եւ եթէ խոնարհութիւն՝ զամենայն փարատէ» (Հովհ. Ոսկեբերան):

«Վարեցաւ ի գերութիւն Յուդա՝ ի բազում տառապանս, ի նեղութեան, ստրկութեան, ծառայութեան» (Կիրեղ Երուսաղեմացի):

Մի առանձին ոճական հնարանք է սա, աստիճանավորում անվանումն է ստացել, որ շուք ու գեղեցկություն է հաղորդում գրաբար ստեղծագործություններին:

-112-

Գրաբարը, ինչպես մեր լեզվի բոլոր հատվածները, խիստ հարուստ է դարձվածքներով: Ի՞նչ է դարձվածքը. երկու և ավելի բառերի կայուն կապակցություն, որ գործածվում է իբրև լեզվի պատրաստի միավոր: Շատ կարևոր է, որ դարձվածքի բաղադրիչները նախնական իմաստի համեմատ վերաիմաստավորում ստացած լինեն: Ինչպես՝ «գլուխ տալ» բնավ չի նշանակում «գլուխը հանել ու տալ մեկին», այլ վերաիմաստավորմամբ՝ «խոնարհվել»:

Վերաիմաստավորումն առավել հստակ է երևում գրաբարի դարձվածքներում, քանի որ այդ միավորները դուրս են մղվել աշխարհաբարից և ուրեմն իմաստով հեռացել նոր լեզվից: Օրինակ, ունենք՝

Ակն ունել՝ «հուսալ, ակնկալել», որ հին հայերը հասկանում էին «աչքը ինչ-որ բանի պահել». «Ես ակն ունեի ի քէն պարգև կենաց» (ակնկալում էի քեզանից կյանքի պարգև ստանալու),-

ասում է Արշակ Բ արքան Շապուհին, երբ վերջինս ամբաստանում է իր դեմ շարունակ ապստամբելու համար:

Գինին զակամբ գալ՝ «հարբել», հին հայերը թերևս պատկերացնում էին, որ հարբելիս «գինին աչքերին է անցնում», իսկ աշխարհաբարում ասում ենք՝ «գինին գլխին տվեց»։ «Յորժամ Արշակն արբեցաւ, եւ գինին եկն զակամբ նորա, արբեցաւ հրպարտացաւ եւ ասէ», - ասում է Արշակ Բ արքան, երբ նրա Դրաստամատ համհարզը գալիս է այցելության Անհուշ բերդ և հյուրասիրության սեղան բացում:

Յոտն կալ՝ «ոտքի ելնել, կանգնել»։ «Եւ Դրաստամատն մեծապէս ուրախ առնէր զնա, կայր յոտն եւ մխիթարէր զնա»։ Նույն Անհուշ բերդում Դրաստամատը ոտքի կանգնած սպասավորում և ուրախացնում էր իր տիրոջը:

Բերված բոլոր օրինակները Փ. Բուզանդից են, նրա լեզուն հարուստ է ժողովրդական տարրերով: Սակայն մյուս հեղինակները ևս մեծ թվով դարձվածքներ են գործածում:

Աշխարհաբարում ասում ենք «ծեծ ուտել», իսկ գրաբարով խոսող հայերը նույն իմաստը ստանում էին «գան ըմպել»՝ «ծեծ ըմպել» դարձվածքով. «Ծառայ, որ գիտիցէ զկամս տեառն իւրոյ եւ ոչ պատրաստեսցի ըստ կամաց նորա՝ արբցէ գան բագում», հանդիպում ենք Ղուկասի Ավետարանում:

-113-

Եղիշեն իր պատմության սկզբում ասում է.

«Արդ որովհետեւ ընկալաք զհրաման պատուիրանի յաննախանձ քոյոց բարուց բնութեանդ, սկսցուք, ուստի արժան է սկսանել»։ (Արդ որովհետեւ քո աննախանձ բարք ու բնությունից պատվեր և հրաման ընդունեցինք, սկսենք, որտեղից արժան է սկսել):

Ուստի-ն, նկատելի է, թարգմանված է «որտեղից», «որովհետև» շաղկապի իմաստով գրաբարում քիչ է հանդիպում, իմաստն աշխարհաբարում է տարածում ստացել:

Անգամ մեր բարբառները պահպանել են գրաբարի իմաստը, և այսօր էլ շատ գյուղերում ասում են՝ «հու՛ստ» (գրաբարյան «ի+ուստ=յուստ»), նկատի ունենալով, ասենք՝ «Որտեղի՞ց ես գալիս»: Պերճ Պռոշյանի «Հացի խնդիր» վեպում մշեցի գյուղացին դժգոհելիս ասում է.

-Խինգ մանեթ էր, մկա տաս մանեթ կուզա՝ խրամանք չի տա, ես հու՛ստ ճարեմ...

Հիշենք նաև մեր երգերը՝

Ուստի՛ գու քաս, դարիբ բըլբուլ / Դու մի՛ լաց լի, յի՛ն իմ լալու...

Կռու՛նկ, ուստի կու գաս...

-114-

Մեր լեզվում բազում են ժողովի տեսակները, օրինակ՝ համաժողով, դրամաժողով, աշխարհաժողով, զորաժողով, քաղաքաժողով, գիտաժողով, խորհրդաժողով, ի վերջո՝ Ազգային ժողով: Սա ապացույց է արդյոք հայերիս ժողովասիրության:

Այս բառերի դիմաց հնում ունեինք գեղեցիկ և, ցավոք, շատ առումներով մոռացված մեկ այլ բառ՝ պարկեշտաժողով, որի առկայությունը մյուս բոլորին կարող է իմաստ տալ միայն: Այն հանդիպում ենք Ազանթազեղոսի պատմության մեջ, ուր խոսում է Ս. Գայանեի, նրա սան Հռիփսիմեի և պարկեշտաժողով մյուս ընկերների մասին.

«Եւ յետ այսորիկ Սուրբն Գայիանէ սանականաւն Հռիփսիմեաւ եւ պարկեշտաժողով ընկերօքն հանդերձ դէմ եղեալ տարադէմ գնացեալ փախստեայ լինէին, զի զանձինս իւրեանց սրբութեամբ պահեսցեն յայսմիկ հողաթաւալ, մեղսաթաթաւ,

մեղանշական, անօրէն ի դիւական խառնից մարդկան. զի առաւելութեան յուսոյն կենդանութեան եւ լոսոյն յարութեան արժանի լինիցին հասանել»։ (Սրանից հետո Սուրբ Գայանեն Հռիփսիմէ սանով ու մյուս պարկեշտաժողով ընկերներով հանդերձ գնացին հեռացան՝ փախուստ տալով, որպէսզի իրենց անձերը սրբությամբ պահպանեն հողաթավալ, մեղսաթաթալ, մեղանշական, անօրէն ու դիվական մարդկանց խառնակոյթյունից և արժանի լինեն հույսի կենդանւոյթյան և լույսի հարուրթյան լիութեանը հասնելու)։

-115-

Գրաբարով էին գրում իրենց ստեղծագործությունները մեր հին՝ 5-11-րդ դարերի բոլոր հեղինակներն անկախ ժանրից, հեղինակի ծննդավայրից, կրթությունից կամ այլ հանգամանքներից։ Դա նշանակում է, որ գրաբարը համաժողովրդական լեզու էր, հասկանալի ամենքին, գործածվում էր կյանքի բոլոր ոլորտներում, այդ թվում՝ արքունիքում։

Իսկ բարբառներ չկային՝ հին ժամանակներում։ Այս հարցի մասին քննարկումները թողնելով բանասերներին՝ միայն ասենք, որ շատ մատենագիրներ ուղղակի կամ անուղղակի փաստում են բարբառների գոյությունը։ 8-րդ դարի հեղինակ Ստեփանոս Սյունեցին իր քերականության մեջ ուղղակի թվարկում է յոթ նահանգներ, որոնցում հայերը «միջերկրյա» ոստանիկ գավառների համեմատ այլ լեզվով էին խոսում.

«Եւ դարձեալ զքո լեզուիդ գիտելն զբովանդակ բառսն զեզերականս, որպէս Գորճայն եւ զՏայեցին եւ զԽութայինն եւ զՉորրորդ Հայեցին եւ զՍպերացին եւ զՄիւնեցին եւ զԱրցախայինն։ Այն մի՛ միայն զՄիջերկրեայն եւ զՈստանիկսն, վասն

զի պիտանիք են այսոքիկ ի տաղաչափութեան, այլ եւ օգտակարք ի պատմութիւն, զի մի՛ վրիպեսցի անընտել գոլով լեզուացն»:

Կարելի է վստահ ասել, որ Ստեփանոս Սյունեցին թվարկում է իր ժամանակի Կորճայքի, Տայքի, Խուլթի, Ծովքի, Սպերի, Սյունիքի, Արցախի բարբառները, դրանց հակադրում կենտրոնական ոստանիկ խոսքը, որ թերևս գրական հայերենն էր՝ գրաբարը:

-116-

Դեռևս 5-րդ դարի հեղինակներն իրենց երկերում գործածում են որոշ բառեր, որ չենք հանդիպում հետագայի երկերում, բայց փոխարենը պահպանվել են հայերենի բարբառներում ընդհուպ մինչև մեր օրերը:

Ցայտուն օրինակներից մեկը շոթ «թխվածք» բառն է, որ գտնում ենք Մ. Գրքում:

«Առցես զուարակ մի յանդոյ, եւ խոյս երկուս անարատս, եւ պանս բաղարջս, եւ շօթս բաղարջս զանգեալ իւղով, եւ քաքարս բաղարջս օծեալ իւղով, նաշիի ցորենոյ զանգեալ իւրով արասցես զայն» (Ելից, ԻԹ.2): Այն թարգմանել են աշխարհաբարի «կարկանդակ» բառով. «Հոտից կվերցնես ոչ արատավոր մի զվարակ եւ ոչ արատավոր երկու խոյ, նաև բաղարջ հաց, յուղով հունցած բաղարջ կարկանդակներ ու յուղով շաղված բաղարջ բլիթներ»:

Գրական հայերենում շոթ բառը չի գործածվում, բայց կա Ադանայի բարբառում՝ «թոնրի բարակ և երկար անխմոր հաց», Գանձակի խոսվածքում՝ «մահիկի ձևով թոնրի տափակ հաց»:

Նման կերպ Փ. Բուզանդն ունի «արջոյ ի բայոց մտանել», բայոց բառը հանդիպում ենք խոսակցական, մանկական լեզվի «բայ-բայ» ձևով: Մ. Խորենացին ունի ակճիռ «ուշադիր» բառը,

որ կազմված է ակ «աչք» և ճիռ «չռել» բառերից, և այն բնավ գրական չես համարի:

Մեկ այլ ցայտուն օրինակ Ղազար Փարպեցուց. «Զի եթէ լոկ ի բանիցն խօսելոյ ընդ մեզ սիրով Նիխորոյ զձեօք այդպէս ամպ մթագին եւ շափառուկ անկաւ, եւ չերելիք ի գետինոյդ»: (Թե որ լոկ Նիխորի՝ մեզ հետ ունեցած գրույցի սիրալիր խոսքերից այդպէս ձեզ թանձր ամպ ու մռայլ խավարը պատեցին, և գետնի վրա չէք երևում), ուր շափառուկ հասկացվում է «մթություն, խավար», նաև՝ «տխրություն»: Կրկին՝ գրական լեզվում չի պահպանվել այդ բառը, բայց ունենք Հովհաննէս Թումանյանի քառակներից մեկում որպէս բարբառից վերցրած բառ.

Մըթնեց հոգուս երկինքն անհուն,
Սիրտըս պատեց մեծ շափառուկ.
Մեռա՛ն, կորա՛ն շուրջս ու հեռուն,
Քընարս է լոկ մնացել... և դուք...

-117-

Թովմա Արծրունի մեր պատմիչը (10-րդ դար) խութեցիների մասին պատմելիս ասում է, որ ապրում էին խոր ձորերում, լեռների փապարներին, տներն այնքան հեռու էին միմյանցից, որ եթե մեկը ուժգին ձայնով գոչի, հարևանը հազիվ կկարողանա լսել: Բայց մեկուսի ապրելը չի խանգարում վտանգի պահին արագ միավորվելուն, որ «ի ժամանակս հասելոց թշնամեաց յերկիրն իւրեանց՝ գան միաբան լեռնայինքն յօգնութիւն իշխանացն»:

Մեր այս խութեցիների լեզուն խրթին ու անհասկանալի է եղել Թովմա Արծրունու համար, որից՝ խութ բառից էլ բխեցնում է նրանց լեզուն ու Խութ անվան ծագումը.

«Եւ յաղագս խրթնի եւ անհետազօտելի խօսիցն եւ բարուցն կոչին Խութ, յորոց անուն եւ լեառնն Խոյթ անուանի: Եւ գիտեն

զաղմոսսն զհին թարգմանեալսն վարդապետացն Հայոց, զոր հանապազ ի բերան ունին»։ (Եվ խորթին և անհասկանալի խոսքի ու բարքի պատճառով կոչվում ենք Խույթ, որից և լեռն է անվանվում Խույթ։ Եվ գիտեն հայոց վարդապետների հին թարգմանած սաղմոսները, որ միշտ իրենց բերանին ունեն)։

Այս հակիրճ նկարագրությունից տեղեկանում ենք նաև, որ խութեցիները իմացել են հին թարգմանության սաղմոսները, որ շատերի կարծիքով 5-րդ դարի Ս. Գրքի «փութանակի» թարգմանության մնացորդներից կարող էին լինել (տե՛ս նաև 21-րդ հատվածը)։

-118-

Գրաբարի և ժողովրդական աշխարհիկ լեզվի առնչությունների հարցը քիչ չի զբաղեցրել նաև մեր հին հեղինակներին։ Կիրակոս Գանձակեցին պատմում է, թե ինչպես Ներսես Շնորհալին նպատակ ուներ և ջանքեր էր գործադրում աշխարհիկ լեզուն մոռացության տալու և նրա տեղը գրաբարը դնելու համար։ Այդ նպատակով է, որ ստեղծում է դյուրընկալելի տեքստեր, հանելուկներ, որպեսզի գինարբուքի, հարսանիքների ժամանակ մարդիկ ոչ թե անտեղի բաներից խոսեն, այլ գրական թեմաներով ու բարձր լեզվով։

«Գրեաց նա եւ ճառս հրեշտակապետացն... թարգմանեաց եւ բազում ճառս վկայից Աստուծոյ։ Եւ այսպիսի բարուք կարգաւորութեամբ փոխեցաւ առ Քրիստոս յոյսն ամենեցուն ցանկալի եւ երանելի մահուամբ, զի այնպիսի էին կամք սրբոյն, զի թէ հնար իցէ՝ ոչ ոք խօսեսցի ի խօսս աշխարհականս, բայց ի գրոց, ո՛չ ի գինարբուս եւ ո՛չ յայլ ուրախութիւնս։ Վասն այնորիկ արար նա երգս եւ ուսոյց այնոցիկ, որ պահէին զբերդն, զի փոխանակ վայրապար ձայնիցն զայն ասասցեն, որոյ սկիզբն է սաղմոսն Դաւթի՝ «Յիշեցի ի գիշերի զանուն քո, տէր» (Սաղմոս

ՃԺԸ. 55): (Գրեց նաև հրեշտակապետներին նվիրված ճառեր, թարգմանեց Աստծու վկաների մասին բազմաթիվ ճառեր: Եվ այսպիսի բարի կարգադրություններից հետո երանելին փոխվեց առ Քրիստոս՝ ցանկալի հույսն ամենքի, քանզի այնպիսի կամք ուներ սուրբը, որ եթե հնարավոր լինի, բացի գրքերում եղածից ոչ մեկը չգործածի աշխարհիկ խոսքը՝ ո՛չ գինարբուքի և ո՛չ էլ այլ ուրախությունների ժամանակ: Այդ նպատակով ստեղծեց երգեր և ուսուցանեց նրանց, ովքեր բերդերն էին պահպանում, որպեսզի անտեղի ձայնելու փոխարեն այդ երգերն ասեն, որ սկսվում է Դավթի սաղմոսի տողով՝ «Գիշերը հիշեցի Քո անունը, Տէր»):

Այս վկայությունից իմանում ենք, որ առավոտյան գողտրիկ շարականներից մեկը՝ «Զարթի՛ք...», Ն. Շնորհալին ստեղծել է բերդապահների, զինվորների համար.

Զարթի՛ք, փառք իմ, զարթի՛ք,
Եւ ես զարթեայց առաւօտուց. ալելուիա:
Զարթի՛ք ընդ զուարթունս,
Մանկո՛ւնք վերինն Սիոնի. ալելուիա:
Զարթի՛ք որդիք լուսոյ,
Ի յօրհնութիւն հօրըն լուսոյ. ալելուիա:
Զարթի՛ք փրկեալք արեամբ,
Եւ տուք զփառըս փրկողին. ալելուիա:
Զարթի՛ք նոր ժողովուրդք,
Նոր երգս առեալ. ալելուիա:

-119-

Այն պահից, ինչ գրաբարը քիչ հասկանալի դարձավ ժողովրդի մեծ մասի համար, գրագետ այրերը սկսեցին ուղիներ մտածել գրավոր խոսքը խոսակցականին մոտեցնելու, հասկանալի լինելու համար:

Նման մի ազնիվ ջանքի հանդիպում ենք հայոց իրավական օրենսգրքի հեղինակ Սմբատ Գունդստարբի մոտ: Դեռ 1265 թ. իր «Դատաստանագրքում», որ միջին հայերենի դասական գեղեցիկ նմուշ է, նա գրում է, թե ստեղծել է «ի մեր հեշտալուր և սովորական բառս», քանի որ հին լեզուն «դժվարաբառ էր և անհասկանալի»: Սա աշխարհիկ լեզվի ճանապարհը հարթելու առաջին հրապարակային պաշտպանություններից մեկն է:

«Ես՝ Սմբատ անարժան եւ մեղաւոր ծառայս Աստուծոյ, որդի Կոստանդնեայ թագաւորահօր եւ եղբայր բարեպաշտ թագաւորին Հայոց Հեթմոյ, բազում աշխատանօք աշխատեցայ ի Դատաստանագիրքս ծերացեալ մտօք, վասն զի այլակերպած էր եւ հեռացած ի հին հայ բառէն ի նորոյս՝ հայնց իսկի չէին ի հասկնալ եւ ոչ յօկտել գայր: Եւ ես բազում աշխատութեամբ փոխեցի զսա ի հին եւ դժուարաբառ եւ յանհասկընալի գրոց ի մեր հեշտալուր եւ ի սովորական բառս: Ի թըւականութեանս հայոց ՉԺԴ ամին» (1265):

-120-

Երևանի Մաշտոցյան Մատենադարանի թ. 6275 ձեռագիր բժշկարան-բառարանում հանդիպել ենք Ֆիրիկ անվան Ֆիրիկ տարբերակը, բացատրությունը գրեթե չի տարբերվում Ամիր-դովլաթ Ամասիացու «Անգիտաց անպէտ»-ում բերվածից.

«Ֆիրիկ, որ է եղի ցորենն, որ այրեն ի կրակն և ուտեն, թուրքերէն ութմայ կասեն»:

Նույն ձեռագիր բառարանում հնչյունական նոր տարբերակ է նաև տարիխ-ը, որ մեզ հայտնի Վանի տառեխն է.

«Տարիխ, որ է չոր մանտր ձուկն»:

Նման շատ տարբերակներ կարելի է գտնել հեղինակիս «Հայ բառարանագրության պատմության դրվագներ» գրքի Ա պրակում: Օրինակ՝ մեր մայրաքաղաքի անվան մի նոր տարբե-

րակ. «Վերիվան - Երևան է», «Բեթշապատ - Մօսկօֆ է», «Վըրացտուն-Գուրճիստան» (թ. 2271 ձեռագիր, 1724 թ.):

-121-

«Բառզիրք հայոց» բառարանը, որ ձեռագրերի հիման վրա կազմել և 1698 թ. Իտալիայում տպագրել է Երեմիա Մեղրեցին, պարունակում է հայերիս մի գեղեցիկ ինքնանվանում. «հայ - գեղնի», այլ տարբերակով՝ գեղնիկ, գղնի:

Հրաչյա Աճառյանը բավարարվում է բառը սոսկ հիշատակելով. «Այս հետաքրքրական բառը ունի միայն Երեմիա Մեղրեցու բառարանը»: Ստուգաբանական փորձ ունի Գևորգ Զահուկյանը, որ գեղնի բառը հնդեվրոպական ծագման է համարում:

Սակայն դեռևս պետք է բացահայտել, թե ինչ է թաքնված «գեղնի = հայ» բացատրության տակ:

-122-

Բազմաթիվ մեկնաբանություններ կան հայերենի շարական բառի ծագման մասին: Ահա դրանցից մի քանիսը. ա) շարքականց, բ) եբրայերեն շիր, շիրահ «երգ» բառից, գ) ասորերեն շահրա «հսկում, հսկման երգ», դ) սարեակ՝ «սոխակ», ե) շար(ք)+ական: Վերջինն ամենից ընդունվածն է:

Դեռ 5-րդ դարում Սահակ Պարթևն ու Մեսրոպ Մաշտոցն են գրի առել հոգևոր երգերը, մի մասն էլ իրենք են ստեղծել, որոնք հիրավի «ականց շարք» են, այսինքն՝ թանկագին գոհարների մի շարք՝ շարական: Մ. Մաշտոցի ստեղծած այս շարականը կհաստատի գոհար լինելը.

Ի նեղութեան իմում օգնեա՛ ինձ, տէ՛ր,

Որպէս երբեմն Յովնանու, եւ ողորմեա՛:

Ի յանցանաց իմոց մաքրեա՛ զիս, տէ՛ր,

Որպէս երբեմն զմաքսաւորն, եւ ողորմեա՛:
 Ի նենգաւոր շրթանց փրկեա՛ զիս, տէ՛ր,
 Եւ յարենէ ապրեցո՛ւ եւ ողորմեա՛:

-123-

Մեր խազերի մասին շատ բան իմանում ենք ձեռագրերից: Երուսաղեմյան հայերեն ձեռագիր մատյաններից մեկում Գեորգ Սկևռացու (12-րդ դար) «Խրատ գրչութեան» ձեռնարկի վերջում տրված է խազերի ցանկը՝ որպես առողջանության նշաններ: Անուններից շատերը դեռևս ստուգաբանված չեն, իսկ խազերի երաժշտական արժեքը սպասում է իր վերծանողին: Բերում ենք միայն անվանումները՝ ըստ Երուսաղեմի թ. 1506 ձեռագրի.

«Եւ այլ եւս առողջանութիւնք գրոց, որ ի պէտս խազից եւ մեղեդիկաց.

Զարկ, դիր, լերկ, խունճ, քաշ, շեշտ, թուր, սուր, ցոց, բեր, բենկորճայ, ձակորճայ, էկորճայ, խաղ, վերնախաղ, ներքնախաղ, դում, խոսրովային, քարքաշ, փաթութ, հայուհա, թաշտ, ծնկիկ, գլոր, բարձրահարեր, վերքաշ, միմնաւոր, փուշ»:

	խաղ
	վերնախաղ, խաղբեր
	ներքնախաղ, աքիվեր, դող
	քարքաշ
	բենկորճ, բենկորճա, կորճա
	էկորճ, էկորճա, խաժբեկ, հար, խոզող
	ձակորճ, ծակորճա, խաձլե, հարկորճա
	Վանկ, տակն, մենկորճ
	Փաթութ, հանգույց
	Յէ, կիսափաթութ

Շարքից մի քանիսը բերված են նկարներով: Սրանք իհարկե ամենը չեն, կան այլ տարբերակներ ևս:

-124-

Մեր հեղինակները սիրել են բառախաղեր: Դրանց միջոցով միտքն առավել դիպուկ և սրամիտ է արտահայտվում: Աղբյուրներից քաղած մի քանի բառախաղ ենք ներկայացնում, ստեղծողները տարբեր են՝ հիշատակարանների գրիչներ, նամակագիրներ, դիվանական փաստաթղթերի հեղինակներ և այլք:

Առուծախ - առուկապ. «Վաճառականքն առուկապ եղեալ են եւ ոչ կարեն գնալ ուրեք»:

Դիւրընթերց - թիւրընթերց. «Եւ թէպէտ գովելի չէ զգիր սորին, այլ թիւրընթերց է դիտողին»:

Կայսր - կիսառ. «Զի եթէ պիղծն այն կիսառ սատակիւր, յաստուստ ևս դիւրին էր զամբաստանօրէն առ կայսր բողոքել»:

Ճարտասանութիւն - չառթագանութիւն. «Ոմանք ուսան զփիլիսոփայութիւն, ոմանք՝ զչառթագանութիւն»:

Պատրիկ (=պատրիարք) - պատրիչ. «Յետոյ գնացին մօտ ի պատրիչն իւրեանց՝ թէ մեր մեծն դու ես, այլոց ի՞նչ պարտիմք»:

Սուլթան - շունթան. «Սուրբ Սարգսի շաբթուն մեռաւ սուլթան Մուրատն, եւ թագաւորեաց եղբայրն իւր շունթան Իբրահիմ»:

-125-

Հայերենում բազմավանկ ու բարդ բառերի հոգնակիի -եր կամ -ներ մասնիկով կազմությունը բարդագույն մի «համակարգ» է՝ բազում կանոններով ու դրանց բացառություններով լեցուն: Օրինակ՝ ա) եթե բարդ գոյականի երկրորդ բաղադրիչը միավանկ գոյական է, գրվում է -եր՝ խաչափայտեր: բ) Եթե երկրորդ բաղադրիչը բայարմատ է, ստանում է -ներ՝ կերուխումներ: գ) Ածականը, որ գոյականաբար է կիրառվում, ստա-

նում է -ներ՝ շիկահերներ: դ) Անհողակապ բառերը ստանում են -ներ՝ ջրհորներ և այդպես շարունակ:

Բայց կա նաև արևմտահայերենը, ուր հաճախ այլ կանոններ են գործում: Դեռևս 1936 թ. «Սիոն» հանդեսում Խ. Պ. Քարտաշ հեղինակը «Հայերէնի հարցեր» հոդվածում բերում է բոլոր այս կանոնները՝ հերքելու համար Հ. Վարդան Հացունու այն պնդումը, որ միավանկ արմատով ավարտվող բարդ բառերի համար ճիշտը -եր մասնիկն է՝ նախդրեր, մատենագրեր և այլն:

Բանավեճը կշարունակվի այնքան ժամանակ, քանի դեռ հայերենը բնական կերպով կանոնները չի գտել և նախընտրել իր տարբերակը:


Հարցը գրեթե լուծված ենք տեսնում գրաբարում: Հոգնակին բացարձակ մեծամասնությամբ ստանում է *ք* հոգնակի մասնիկը: Անգամ լրացումներն են այն ստանում, եթե դրվում են գոյականից հետո, ինչպես՝

բանք սրտաբանք
բարք անբարիք
գիրք սրտագիրք
գնացք մեղմագնացք
գոյնք սեւագոյնք
զէնք սպառազէնք
կամք հրամանականք
կեանք երկայնակեանք
ձորք խորաձորք
մարտիկք բռնամարտիկք
միտք յստակամիտք
նշանք բարենշանք
սուրք սայրասուրք
տունկք մատաղատունկք
փողք աւագափողք և այլն:

Տեսեք, թե մեր հին Քրիստոս (գավառակ է Կարնո նահանգում) մանկական ինչ բազմազան խաղեր են եղել.

անպարեշ, բըլլի, գիրի, գիրկկայնուկ, գլարուկ, երեքշինք, ընկզմանուկ, թիզուկ, թելխշտիկ, թաւալուկ, թուրագիրի, լողվրայ, խամզուկ, ճորճորիկ, մագպոջիկ (աղջիկներու խաղ), նետ, շիդբմանուկ, չըլլոր, պաճնէպաճ, պարնէօղ (աղջիկներու), պարնքաշուկ (երիտասարդներու), պըզպըզ, ջուրստուկ, ջաղջիկ, տատամամայ, փարուկ, քարուկ, օշօշիկ, օսկիպալապան... 100-ից ավելի նման անվանումներ:

Քաղել ենք Տիրայր արք. Տէր Յովհաննիսեանի «Քրիի բարբառի բառարան» դեռևս անտիպ երկից:




Մի քանիսը հանդիպում ենք գրաբարում, սակայն գրական լեզվի մեջ չեն մտել և անցել են բարբառներին:

Գրաբարյան բնագրերը ոչ միշտ են մեզ հասել ամբողջական տեսքով, հստակ շարադրանքով, ընթեռնելի տառապատկերով կամ ձեռագրով: Հաճախ անհրաժեշտ է լինում տեքստ ստանալու համար անընթեռնելի տեղերը վերականգնել, կրճատ գրությունները բացել, հնարավոր վրիպակները ճշտել, այսինքն՝ վերծանել բնագիրը: Այդ դեպքում հաճախ են ի հայտ գալիս տարբերակներ, որոնք կարող են իրարից տարբեր


խմաստ հաղորդել տեքստին, ինչպես օրինակ՝ Վռամշապուհի թագավորության «Ե ամս» և «Ե ամիս» ընթերցումներն են, որից ստացվում է երկու տարբերակ՝ տառերի գյուտը եղել է Վռամշապուհի թագավորության «5-րդ տարում» կամ «5-րդ ամսում»:

Այստեղ բերում ենք մի հիշատակի խաչքարի արձանագրության պատկերը, որ առաջին հայացքից տառերի «կուտակում» է, և պարզ տեքստ չի նշմարվում, ապա՝ դրանից վերականգնված փոքր հիշատակի տեքստը:



«Ի թվ[[ին] ՉԿԵ (1316). այս է հանգիստ Ասլանին, յիշեցեք»:

Առաջարկում ենք նաև Տաթևի վանքից մի արձանագրություն, որ հեղինակել է Ստեփանոս Օրբելյանը: Տրված է լուսապատճենը, դրա վերծանությունը և տեքստը:



«Ի թվ[ին] ՉԽԴ (=1295) զՏ[Է]ր Ստեփաննոս մետրապալիտ Սիւնեաց, որ է պրատաւֆրանտէս Հայոց Մեծաց, որդի մեծափառ իշխանին Տարսաւյիժին, շինող Սուրբ եկեղեցոյս, յիշեցէք ի Քրիստոյս»:

Արձանագրութիւնն ստեղծվել է 1295 թվականին, երբ Ստեփաննոս արքեպիսկոպոս Օրբելյանը հիմնովին վերակառուցել է երկրաշարժից ավերված Տաթևի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին և այդ առիթով եկեղեցու բարավորին հիշատակի գրութիւն թողել: Արձանագրութեան մեջ հիշատակվում է հայոց պրոտոֆրոնտէս (=նախաթոռ եպիսկոպոս) տիտղոսը, որը 1286 թ. Կիլիկիայում Կոստանդին Բ Կատուկեցի կաթողիկոսը շնորհել է Սյունյաց աթոռի մետրոպոլիտ Ստեփաննոս արք. Օրբելյանին:

Ստ. Օրբելյանը միավորել է Սյունյաց տարանջատված եպիսկոպոսարանները, հաստատել Տաթևի վանքի գերագա-

հույությունը Սյունիքի բոլոր թեմերի նկատմամբ, Տաթևի վանքին նվիրել սեփական Արիտ գյուղը: 1297 թվականին Տաթևի վանքում ավարտել է «Պատմություն նահանգին Սիսական» կոթողային երկը:

-128-

Գրաբար տեքստեր վերծանելու մեկ բնորոշ օրինակ է 1685 թ. Վենետիկում տպագրված «Ավետարանի» 433-րդ էջի ձեռագիր հիշատակագրությունը: Այն քաղել ենք Հայաստանի Ազգային գրադարանի թ. 615 հնատիպ օրինակից: Նշենք, որ Հայաստանում պահվում են 1512-ից մինչև 1800 թվականը տպագրված հնատիպ գրքի մոտ 3000 օրինակներ:

Տպագիր գրքերի էջերին պահպանվել են նվիրատվությունների, բարեմաղթանքների, պատմական ինչ-ինչ փաստերի մասին զանազան գրություններ, որ լեզվական ու պատմական

գրությունք, որոշով լինիս մանրագիրս համեմատ
 Կաթնից, զկերպարանիս, զցանկս և զհանձնագիրս
 Ի գրեալս ուսումնասիրաց, և ի սկսութանս Զմեղ
 Կաթնից և ի զհամեմատեալս անսկսելովս և
 ամ օրինակելով, զի որով զմորհեցեալ իրման
 Ին գրեալս, զի հարկու հարցաց Զարեւ զայն, և
 Ին պատահմանս զիր ինչ սխալեցեալ Եղի ինքն
 Է, քանզի քանզի և զխառնութիւնս Երանան
 Են անխառնակս յառաջագրել զայն սկսելուս
 Բարեւ մեղոյ ինչ, և զի մինչև ցայժմ համար
 Բիւք տեսնաւսն ոչ էր տպեցեալ երեւե զն
 Դուարութե զանազանից թուոցն, և մեզ զն պալ
 Դուարութե հայոց յանձն առաք զամենայն դժուար
 Թիւ, ուղ զի անուանել տարածիցի ի միջի ձերումս
 Կաթն անխառնակ երկրորդութե և ի պատիւ երա
 Կաթն Զուսն մեղքաւուն, որե՛ւ բարեխառն առ որ
 Իւր մեղքին վն փրկութե ամ քրիստոսեցեալ ե
 Կաթն զն այնպիսի որ զիւն ի մեղքաւունս յա
 Կաթն իւրանց զայնպիսի որ և զմտաւարտս
 արքիմանն Է :



Եղ ապա ի ի մեղքաւունս
 Կաթն Եղ ապա ի ի մեղքաւունս
 Կաթն Եղ ապա ի ի մեղքաւունս
 Կաթն Եղ ապա ի ի մեղքաւունս
 Կաթն Եղ ապա ի ի մեղքաւունս
 Կաթն Եղ ապա ի ի մեղքաւունս
 Կաթն Եղ ապա ի ի մեղքաւունս
 Կաթն Եղ ապա ի ի մեղքաւունս
 Կաթն Եղ ապա ի ի մեղքաւունս
 Կաթն Եղ ապա ի ի մեղքաւունս

առումով հետաքրքրություն են ներկայացնում: Տարիներ առաջ նման հիշատակագրությունների մի ժողովածու հրատարակեցինք (տե՛ս Նորայր Պողոսյան, Հայ հնատիպ գրքի ձեռագիր հիշատակագրություններ, Երևան, 2012 թ.):

Բերվող հատվածում Տեր Ավետիս հոգևորականը գրքի տպագիր հիշատակարանից հետո հարկ է համարել թողնել ի՛ր ձեռքով գրված հիշատակարանը (նկարում՝ աջ կողմում)՝ խնդրելով «մեկ բերան ողորմի ասել» իր հարազատներին:

«Յիշատակ է ս[ուր]բ Աւետարանս Վանքեցի Պողոսին, Մարքարիտին, Աղամին, Միրզին և այլ իւր ննջեցելոցնս. Ա[ստուա]՞ծ ողորմի, տվին Հալիձորա եկեղեցին, Ա[ստուա]՞ծ իւրեաց հոգին լուսաորէ, արդարոց դասն դասեսցէ: Ես՝ անարժան տ[է]ր Նազարէթս գրեցի, որ է իմ հայրս Մէլիք Պալասան, մայրս էր Մինան. ով որ կարդա[յ]՝ մէկ բերան ողորմի ասէ, ով որ ողորմի ասէ՝ Ա[ստուա]՞ծ զինքն օրինէ: Գրեցաւ ապրիելի Ի, թվ. ՌՃԿԹ (1720) թիւին»:

-129-

Լատինաբան հայերենը կամ լատինաբան գրաբարը կաթոլիկ միջավայրում ստեղծված և գործածվող հայերենի մի վիճակ էր, իր վրա էր կրում լատիներենի ազդեցությունը, առաջին հերթին՝ բառերի միջոցով:

Լատինաբան հայերը (հատկապես 17-րդ դարում) գործածում էին այդ լեզուն, ստեղծում էին նոր բառեր, որոնց համարժեքը կարող է արդեն գոյություն ունենալ գրաբարում: Լատինաբան Վարդան Հունանյանի «Բառարան գրքիս» բառարանից դուրս ենք գրել երեք նորակերտ բառ, իրենց բացատրություններով՝ հասկանալու համար բառակերտման տրամաբանությունը.

Անկարելոչ – տեղի ինչ, շրջափակեցեալ պատուարաւ և լաւաբաժանեալ ի ներքս յորձապատիւ ճանապարհօք և համա-

նմանիք: Լատիներեն labyrinthus «լաբիրինթոս» բառն է փաստորեն:

Հայեցարան - տեղի, ուր խաղք և պէսպէս հրճուանք հասարակականք հրապարակին: Լատիներեն spectaculum «ցուցադրություն»:

Տեսափոխ - կոչին զանազանութիւնք փոփոխմանց ընտեսարանում, մինչ իրակին ի դերասանից պոզոտենուագք կամ քաղենուագք: Լատիներեն scene «տեսարան, սցենա»:

Գեղեցիկ այլ բառեր շատ կան Վարդան Հունանյանի բառարանում. դիմայլակ «ուրվական», եփարան «ստամոքս», ապերջան «դժբախտ», նմանակերտ «տիպար, նմանակ», կերակիր «կերակուր կրող՝ մատուցող» և այլն: Այս երկերը շատ լավ շտեմարան են մեր օրեր նոր բառեր փոխադրելու համար:

-130-

Դեռևս ցարական Ռուսաստանում հայերենի ու ռուսերենի համատեղ գոյակցության մի ուսանելի նախադեպ ենք հանդիպում ամենաբարձր՝ կայսերական մակարդակով: Եկատերինա կայսրուհին հայերին ուղղված մի հրաման թարգմանել է տալիս հայերեն, ապա ռուսերեն ու հայերեն հրամանագրերը կապում մեկ փաթեթում, կնքում մեկ կնիքով: Այսինքն՝ ցարական Ռուսաստանում հայերենը ռուսերենի հետ հավասար պաշտոնական լեզվի նման կիրառություն ուներ: Այդ մասին վկայություն գտնում ենք Սիմեոն Երևանցու «Ջամբռ» ժողովածուում.

«Գրեցուցանէ ի վերայ մագաղաթի ոսկեայ գրով, եւ զնոյնն հրամայէ թարգմանել ի հայ լեզուս եւ նոյնպէս գրել ի մագաղաթի: Եւ ապա զերկոսեանն, այսինքն՝ զռուսերէնն եւ զհայերէնն ի մի յարկեցեալ եւ կապեալ թելի՝ ուր վերջանայ բանն, եւ ի վերայ կապին դնէ զմեծագոյն կնիքն կայսերական ի վերայ զմոսեալ, որպէս տեսանես, որ գոյ յԱթոռոջս ի միում յատուկ արկղոջ ի ներքոյ փականաց»:

Ամեն ինչ չէ, որ գրաբարյան տեքստերն ընթերցելիս առաջին հայացքից հասկանալի է դառնում: Շատ հաճախ գրաբարյան այս կամ այն արտահայտությունը ճշգրիտ ընկալելու և թարգմանելու համար, ստիպում է երկար մտորել իր մասին: Նման մի բնորոշ օրինակ է Ղևոնդ Ալիշանի «Միսական» երկի առաջաբանի մի արտահայտությունը, որն աշխարհաբարացնելու առիթն ունեցել ենք:

Հիմնարար այս երկում Ղ. Ալիշանը նախ խոսում է իր ծրագրի մասին՝ ստեղծելու Մեծ Հայքի բոլոր աշխարհներին նվիրված երկեր (տպագրվել են 4-ը՝ Այրարատ, Շիրակ, Միսական և Միսուան), ապա հիշեցնում իր առաջ գնացած տարիքը՝ «շրջան կենաց խոնարհեալ ի բոլորումն» (=կյանքիս շրջագիծը խոնարհվում է դեպի ավարտը):

Ահա այստեղ Ալիշանը հավելում է այսպիսի միտք. «ոչ նուազ յարտաքնոցն ի ներքուստ յորդորե»: Եթե այն լատիներեն կամ մեկ այլ լեզվի ասույթ չէ, ապա դժվար է կռահել, թե ինչ նկատի ունի բազմավաստակ մեր հեղինակը: Գուցե հասկանալ այսպե՛ս. «արտաքին ոչ քիչ բաներ ներսից է թելադրվում», իսկ գուցե այսպե՛ս. «ոչ քիչ արտաքին բաներ ներս են հորդում»:

Պատմական-աշխարհագրական բնույթի «Միսականը» ընդհանուր առմամբ գրված է հաղթահարելի գրաբարով, Ալիշանն ի ցույց է դրել գրաբարի իր ողջ գերագույն իմացությունը: Գիտական լինելով՝ այս երկը նաև գեղարվեստական շունչ ունի: Հենց թեկուզ Սևան կղզու նկարագրությունը կարող է դա հավաստել.

«Զետեղեալ ի միջի կանաչագարդ կատարաց՝ իբրեւ ակն շափիղայ ի լայնալիճ կապիճս՝ ծիծաղախիտ ծովն Գեղամայ ունի յանկեան միում գոհար ակնախտիղ գկղզին Մեւան, միակ մենարան մարդկան ի կենսունակ ամայության լայնասփիռ տատանական դաշտին: Զի թէպէտ եւ իցեն երկու եւս այլ կղզի-

աձեւ փոքրիկ ժայռք գցուեալք ընդ երեսս ջուրցն՝ ի հարաւակողմանն, այլ անբնակք են եւ անկենդանք»։ (Գեղամա ծիծաղախիտ ծովը գետեղված է կանաչագարդ կատարներ ունեցող լեռների միջև և ասես մի շափյուղե քար լինի լայնալիճ ակնակապիճի մեջ։ Լայնատարած ու ծածանվող կենսունակ այս դաշտում մարդային միակ մենարանը ակնախտիտ Սևանա կղզին է ծովի մի անկյունում։ Ու թէև հարավային կողմում երկու այլ կղզիաձև փոքրիկ ժայռեր ևս կան՝ ցցված ջրի երեսին, սակայն դրանք անբնակ և անկենդան են)։

-132-

Հայ գրավոր մշակույթն ունեցել է կլասիցիզմի գրական ուղղվածության շրջանը։ Ամենից նշանավոր դեմքն անշուշտ Արսեն Բագրատունին է (1790-1866 թթ.)՝ Վենետիկի Մխիթարյան միաբանության անվանի անդամը, Հոմերոսի «Իլիականի» և «Ոդիսականի» հայերեն թարգմանողը, գրաբարի խոշորագույն գիտակը, «Գրաբար քերականութիւն ի պէտս զարգացելոց» գրքի հեղինակը։

Հայոց լեզվի՝ գրաբարի պատմության ընթացքը նա ներկայացրել է որպես «անկում» կատարյալ վիճակից, և դա արտացոլող տերմիններով օժտել լեզվի տարբեր շրջանները, ինչպես՝ 4-6-րդ դդ. «ոսկեդար», 7-12-րդ դդ. «արծաթե դար», 13-րդ դ. «պղնձի դար», հաջորդ դարերը՝ «երկաթի, խեցու և վատթարագոյն»։

Արսեն Բագրատունին կլասիցիզմը հայ մշակույթ բերեց նախ և առաջ մեծածավալ՝ 20 գլուխ և 22.210 տող ընդգրկող «Հայկ դիւցազն» պոեմ-դյուցազներգությամբ։ 1858 թ. տպագրված պոեմը պատմում է Հայկ Նահապետի ու նրա ժամանակների գործերը։ Մ. Խորենացու բերածն ամբողջովին գեղարվեստականացրել է, հաճախ նոր հերոսներ մուծել, ինչպես օրինակ՝ Հայաստանի հին բնիկներից Վստամը, որ անհաջող

ապստամբում է Հայկի դեմ: Պոեմը ճոխ, բանադարձումներով և ոճական այլ միջոցներով հարուստ գրաբար է: Օրինակ՝ Հայկի նկարագիրը.

Գեղաղէշ մատանցն գործ Հայկանուշայ սիրուն դստերն,
Եւ ի գլուխն սաղաւարտ ահեղ ճոճեալ փաղփուռն վերջօք,
Ելանէր որդուվք հանդերձ, խայտայր դիւցազն ի մէջ քաջաց,
Խուպոպք վարսից գանգուրագեղ զուտուվք իջեալ ծածանէ-
ին...

Կամ, օրինակ, Վստամի մենամարտից մի հատված.

Բոմբիւնք ոտիցն եւ կոփմանց իբրեւ անկեալ վիճաց թնդէ-
ին,

Եւ յանկարծ թոթափեալք առ ի միմեանց ձիգ ասպարէզ
Ամենայն ուժգնութեամբ իրան յիրան բախել դիմեն՝
Խորտակել երկոցունց կամ գեթ միումն եւ վճարել:

Մեծ ազդեցություն չունեցավ պոեմն իր ժամանակի հայ գրականության վրա, սակայն դրանով հանդերձ մեր մշակույթը հարստացրեց նշանակալի մի երկով:

Զարմանալի շրջանաբաժան է 1858 թվականը հայ լեզվի համար: Այդ տարի տպագրվեցին գրաբարով կոթողային «Հայկ Դիւցազնը», Քանաքեռի բարբառով (բնավ ոչ գրական լեզվով, ինչպես հաճախ է ներկայացվում) Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպը, արևելյան աշխարհաբարի առաջնեկ «Հիւսիսափայլ» ամսագիրը Մոսկվայում: Եվ դա արտացոլում է հայերենի լեզվավիճակը 19-րդ դարակեսին, հնի ու նորի գրապայքարը:

-133-

Մեր հանճարեղ Խաչատուր Աբովյանին շատ հաճախ որպես աշխարհաբարի հիմնադիր են ներկայացնում: Թերևս այդպես դյուրին է աշխարհաբարի ձևավորումը մատուցելու համար: Երբեմն էլ առաջ գնալով՝ նրան գրաբարի դեմ պայ-

քարի առաջամարտիկ են փորձում անցկացնել՝ ասելով. «Մենք Աբովյանին համարում ենք աշխարհաբարի դատի պաշտպանության հիմնադիր, գրաբարամերժ պայքարի հիմնադիր» (Գուրգեն Սևակ):

Իրականում Խ. Աբովյանը երբևէ գրաբարի մասին վատ չի արտահայտվել ու գործել, հակառակը, մշտապես բարձր է գնահատել այն: «Պարապ վախտի խաղալիք» գրքի առաջաբանից բերվող հատվածը մեկ վկայություն է ասվածի.

«Մեր գրաբառ լեզուն անգին է, նմանը չունի, ինչքան լեզու էլ որ գիտեմ, մեկն էլ ա՛ն էն համը, էն քաղցրությունը, էն ճոխությունը չունի. բայց մեր վատ բախտիցը՝ հագարիցը մեկը չի հասկանում, ի՞նչ պետք է արած: Երանի էն սհաթին, որ մեր ազգը քիչ քիչ կարողանա էս կորած գանձը գտնիլ, ու իր լեզուն սովորիլ, իմանալ»:

Աբովյանն իր «Նախաշավիղ» դասագրքին կցել է գերմաներեն բացատրական, որի մեջ քննադատում է հոգևորականությանը, որովհետև գրաբարը դարձրել է իր սեփականությունը և սկսել «այդ լեզուն էգոիստորեն դարձնել եգիպտական գաղտնիք, որպեսզի ժողովրդի աչքում ավելի դիրք ու ակնածություն ունենա»:

Խ. Աբովյանն ինքն էլ գրաբարով գրած շատ գործեր ունի: Ահա օրինակ՝ գողտրիկ մի քառատող «Երեւակայութիւն ի վերայ ճանապարհորդութեան ի լեառն Արարատ» (1829 թ.) բանաստեղծությունից:

Լէր ինձ առաջնորդ՝ որ եսդ ես միշտ տէր անհուն եւ անճառ,
Լէր ինձ ուղեկից մուր տարագրիս առ դարձս իմ ի վայր,
Ա՛ռ, տա՛ր զիս աստի, ուր մերձ են սահիլ ջախջախուն իմ ոտք,
Ա՛ռ, տա՛ր զիս աստի, զի մի՛ հասցէ ինձ զիշեր կամ խաւար:

Զ Վ Ա Ր Ճ Ա Լ Ի Ք

-134-

Հայ միջնադարի առաջին խոշոր գիտնականը ճշգրիտ գիտությունների ասպարեզում Անանիա Շիրակացի էր: Զբաղվել է փիլիսոփայությամբ, աստղագիտությամբ, աշխարհագրությամբ, մաթեմատիկայով, ալքիմիայով: Իր հիմնարար ուսումնաստացել է Տրապիզոնում՝ Տյուքիկոս Բյուզանդացի գիտունի մոտ, ապա վերադարձել է Հայաստան, փորձել այստեղ բանեցնել իր գիտությունը, բացել դպրոց, գրել դասագրքեր:

Մաթեմատիկական աշխատություններից ամենաարժեքավորը թվաբանության դասագիրքն է՝ գումարման, հանման, բազմապատկման և բաժանման գործողություններով, դրանց աղյուսակներով, մի շարք խնդիրներով:

Ուսուցման նպատակ ունեցող խնդիրները՝ «Յաղագս հարցման եւ լուծման», պարունակում են մաթեմատիկական բազմազան հարցումներ և դրանց լուծումները: 7-րդ դարում կազմած այդ խնդիրները կարող են սնուցել նաև մեր օրերի մանուկների միտքը.

Ա.

«Հարցումն.

Ես եկեղեցի շինեի, քարակոփ մի կալայ, որ ածեր ատուրն ճխ քար: Եւ յետ ԼԹ ատուր գործառնութեանն միւս այլ քարակոփ կալայ, եւ ածեր ատուրն ՄԺԸ քար: Եւ որպէս նա նմա հաւասարեաց՝ եկեղեցին կատարեցաւ: Արդ, գիտեա՛, եթէ ի քանի՞ օրն հաւասարեաց:

Լուծումն՝ հաւասարեաց յատուրս Հ»:

Բ.

«Հարցումն.

Նաւ մի երթայր լի ցորենով, եւ կէտ մի զհետ մտեալ նաւին՝ նաւորդքն երկեան եւ ընկեցին նմա կեր զհասարակ ցորենոյն: Եւ ի Բ ատուրն ընկեցին զհինգ մասն մնացելոյն, յերրորդումն զԸ, ի չորրորդումն զԷ: Ապա ի նաւահանգիստն հասին, եւ մնաց ԻՄ: Արդ, գիտեա՛, թէ ընդ ամենայնն քանի՞ լեալ էր:

Լուծումն՝ Էր հացն ի նաւին ԻԴՌ կայր»:

-135-

Հայտնի է, որ Ներսէս Շնորհալին ուսուցողական հանելուկների հեղինակ է: Ներկայացնում ենք դրանցից երեքը, միայն թե պատասխանները վերջում տրված են խառը դասավորությամբ, ընթերցողն ինքը կարող է ճիշտ հերթականությունը որոշել:

Ա.

Մեռանի՛մ եւ մահանամ,
Դարձեալ յառնեմ կենդանանամ,
Զաչս ի յերկինս համբառնամ՝
Բազմաստեղօք պայծառանամ:

Բ.

Որպէս տիկին յուշիկ գնայ,
Պարան յետեւն ի քաշ կու գայ:

Բազմի յոսկի բարձի վերայ,
Որսիկ առնէ քան զբազայ:

Գ.

Տեսի զմանուկ մի, որ ծնանէր
Եւ ի նոյն օրն մեռանէր,
Յետ թաղելոյն դարձեալ յառնէր
Եւ այլ գեղեցիկ զինքն ցուցանէր:
(կատու, արեգակ, ցորեն)

Շնորհալու հետևորդներից մեկը նրա օրինակով հանելուկ է
ստեղծել հենց իր՝ Ներսես Շնորհալու մասին.

Իշխան մի կայր յեկեղեցի,
Եւ ի բարձրագոյն աստիճանի,
Քան զոր չեղէ ոք աւելի՝
Երգիչ տաղի, շարականի:

-136-

Վարդան Այգեկցու դիպուկ առակներից երեքը քաղել ենք
Զարեհ արք. Ազնաուրեանի «Դիւրին գրաբար» դասագրքի Ա
հատորից, որ նախատեսված է միջին դպրոցների աշակերտնե-
րի համար, երեք տարվա դյուրամարս դասընթաց է: Առակներն
էլ կարծեմ դյուրին են թե՛ ընթերցելու, թե՛ թարգմանել կա-
րողանալու համար:

Ա.

Ասացին աղուեսուն, թե՛

- Քանի՛ տեսակ արուեստս գիտես:

Եւ ասէ աղուեսն.

- Հարիւր տեսակ արուեստս ագով (=պոչով) առնեմ առաջի
շան: Բայց մեծ արուեստ իմ այն է, զի ո՛չ զշուն տեսանեմ, եւ ո՛չ
շուն՝ զիս:

Բ.

Աղուէն խաբեաց զգայլն եւ ետ թուղթ՝ տանել առ տանուտեառսն գեղջ եւ բերել կերակուր: Եւ իբրեւ գնաց գայլն ի գիւղն, թափեցան ի վերայ նորա շունքն եւ խաճատեալ վիրաւորեցին զնա: Եւ իբրեւ գայլն եկն ողորմելի կենօք (=վիճակով), ասէ աղուէն.

- Ընդէ՛ր ոչ ցուցեր զթուղթն:

Ասէ գայլն.

- Այո՛, ցուցի, բայց հազար շունք կային, որք ոչ գիտէին զգիր:

Գ.

Այր ոմն միշտ գներ յաւուրն վեց հաց: Հարցին, թէ զի՞նչ առնէր զնոսա: Պատասխանեաց.

- Պահեմ զմին, ընկենում զմիւսն, զերկուս յետս վճարեմ և զերկուս փոխ տամ:

- Մեկնեա՛ (=մեկնաբանի՛ր) մեզ,- ասացին,- զխրթնութիւն բանիցդ:

Եւ նա ասաց.

- Զհացն զոր պահեմ՝ ուտեմ: Զոր ընկենում՝ զոքանչիս տամ: Զոր յետս վճարեմ՝ տամ հօր և մօր իմում: Իսկ զորս փոխ տամ՝ մատուցանեմ ի կերակուր երկուց որդուց իմոց:

-137-

16-րդ դարի տաղերգու Մարտիրոս Խարասացին Խարբերդի նահանգի Չմշկածագի Խարասար կամ Քարասար գյուղից է: Ուշ միջնադարում աշխարհիկ թեմաներն առավել հաճախակի են հանդիպում գրականության մեջ, և Մ. Խարասացու մոտ

գտնում ենք «Տաղ վասն ուրախութեան» ոտանավորը՝ որպես խրախճանքի գովք:

Այբն ասէ. Այսօր ընպեմք:

Բենն ասէ. Բերէք գինի:

Գիմն ասէ. Գինիս անուշ:

Դան ասէ. Դուր է տեղիս:

Եչն ասէ. Իջնումք ի վայր:

Զան ասէ. Զիս կոչեցէք:

Էն ասէ. Ես եմ ու ես:

Ըթն ասէ. Ընդ մեզ Աստուած:

...Յոն ասէ. Յնծամք այսօր:

Իւնն ասէ. Իւրերս ասէն:

Փիւրն ասէ. Փառք տամք այսօր:

Քէն ասէ. Քահանայիւք:

-138-

Գրաբարը և մանավանդ գրաբարի դասերը զերծ չեն սրամիտ պատմություններից: Օրինակ՝ ուսանողը թարգմանում է տեքստը, ուր գրված է. «Մի՛ խնայեր խրատել զտղայ, զի թէ հարկանես զնա գաւազանաւ, ոչ մեռանի. դու հարկանես զնա գաւազանաւ, բայց զանձն նորա փրկես ի մահուանէ»:

Եվ քանի որ «զանձն» սխալմամբ կարդացել է «զանձն», թարգմանությունը ստացվում է այսպես՝ «Դու նրան հարվածում ես գավազանով, բայց նրա զանձը փրկում ես մահվանից»...

Առակաց գիրքը, որից քաղված է վերը բերված հատվածը, արդիական քիչ խրատներ չունի.

«Մի՛ լինիր ընկեր առն բարկացողի եւ ընդ բարեկամի գայրացողի մի՛ բնակեր»:

«Լաւ է անուն բարի, քան զմեծութիւն բազում եւ քան զարծաթ եւ զոսկի շնորհ բարիք»:

«Որ սերմանէ զանգագամութիւն՝ հնձեսցէ զգարիս եւ զհարուածս գործոց իւրոց բովանդակեսցէ»:

-139-

Գրատախտակին գրում ենք Եզնիկի «Եղծից» գեղեցիկ մի կառույց՝ «չեւ եւս էին լեալ» (=դեռևս չէին ստեղծվել): Համբարձունը դժվարանում է թարգմանել, և ընկերը՝ գյումրեցի Արթուրը օգնում է.

- Ի՞նչ կա դժվարանալու, պարզ գրված է՝ «Չելսի և Ռեալ»:

- Ի՞նչ Չելսի, ի՞նչ Ռեալ, Արթուր, 5-րդ դարի տեքստ է, հարցնում ենք զարմացած:

- Այդ պատճառով էլ ասում եմ՝ «Չելսին և Ռեալը դեռևս չկային»:

Եզնիկն այդ հատվածում «եղծում է» պարսից զրադաշտական կրոնի որոշ դրույթներ և ասում.

«Եթէ արեգակն եւ լուսին չեւ եւս էին լեալ, որով ժամքն եւ ատուրք եւ ամիսք եւ տարիք կարգին, հազար ամն ուստի՛ երեւէր: Զի չէին ի միջի լուսաւորքն, որ զթիւ ատուրց եւ տարեաց կարգէին»:

-140-

Գրաբարում ունենք պատճառական բայեր՝ անցուցանել, մատուցանել, սնուցանել և նմանները: Սրանց հրամայականները կազմվում են անցո՛ւ, մատո՛ւ ձևերով, այսինքն՝ անցկացրո՛ւ, մոտեցրո՛ւ:

Ուսանողը, ուրեմն, կարդում է տեքստը, ուր գրված է. «Փութով հասո՛ւ զնամակս այս առ արքայն», և հասո՛ւ բառը թարգմա-

նելիս մի պահ հապաղում է, ապա կասկածանքով հարցնում արդյո՞ք դա Հասմիկ անվան կրճատ ձևը չէ:

Ընդհանուր ծիծաղի միջից լսվում են նմանատիպ հարցեր՝ այդ դեպքում ի՞նչ են նշանակում Հովո՞,- հովացրո՞, կամ Լիլո՞, Փառո՞...

Նույն հասո՞ հրամայական ձևին շատ ենք հանդիպում, օրինակ նաև՝ «Նարեկ»-ում.

Դիւաւորս ընթացո՛ր ի յաւարտումն լրմանն,

Ի վախճա՛ն իրին բերկրութեան գիս հասո՛:

(=Գործի վախճանին բերկրությամբ ինձ հասցրո՛):

-141-

Գրաբարում ունենք ԼԻ վերջավորություն ունեցող դերբայը՝ ածելի, ունելի և այլն...

Ուսանողներն այդ դասն անցնելիս հավելում են՝ ուրեմն դրանից է ծագել Արցախի «լավ եմ, լի՞» արտահայտությունը:

Ուրեմն Բրյուս Լի-ն՝ մարտարվեստի հայտնի վարպետը, ծագումով նու՛յնպես արցախեցի է...

Դա դեռ ամբողջը չէ, ուրեմն նույն մասնիկի՞ց է կազմված վրացական խմելի-սունելի, այսինքն վրացիները այդ կերակրատեսակը մեզանից են վերցրել:

-142-

Եղիշեի երկում հանդիպում ենք գեղեցիկ մի ասույթի՝ «Ամենայն չարիք մտանեն ի միտս մարդոյ յանուսումնութենէ»: (Բոլոր չարիքները մարդու միտքն են մտնում անուսումնությունից՝ անգիտությունից): Միսալ ընթերցելու պատճառով, թե միտումնավոր՝ գյումրեցի Արթուրը փոխում է տեքստը և դարձնում՝

«յամուսնութենէ», և ստացվում է՝ «բոլոր չարիքները մարդու միտքն են մտնում ամուսնությունից»:

Սա Եղիշեի «Որոց ոգիքն թուլացեալ են» հանրահայտ հատվածից է, որ բազմաթիվ մտքի խտացումներ է պարունակում, ամեն մի միտքը հանրահայտ ասույթ է: Բերում ենք մի քանի առավել խորունկ օրինակներ.

Որոց ոգիքն թուլացեալ են յերկնաւոր առաքինութենէն՝ յոյժ ընդ ահիւ անկեալ է բնութիւն մարմնոյ. յամենայն հողմոյ շարժի, եւ յամենայն բանէ խռովի, եւ յամենայն իրաց դողայ:

Որպէս եւ ասաց ոմն ի հնումն՝ «մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ անմահութիւն է»:

Կոյր գրկի ի ճառագայթից արեգական, եւ տգիտութիւն գրկի ի կատարեալ կենաց:

Լաւ է կոյր աչաւք, քան կոյր մտաւք:

Թագաւոր եթէ ոչ ունի զիմաստութիւն արթոռակից իւր, ոչ կարէ ի վիճակին իւրում վայելուչ գոլ:

-143-

Հայերենի որոշ բարբառներում խուլ բաղաձայնները վերածվում են ձայնեղների, օրինակ՝ «տարի»-ն դառնում է «դարի», «կարմիր»-ը՝ «գարմիր»: Դեռևս Անանուն մեկնիչի (6-7-րդ դդ.) քերականության մեջ մի ուշագրավ փաստ ենք գտնում բաղաձայնական տարբերակների գոյության մասին. «Այլ էր իսկ ճշմարտապէս և ի տեսակի խօսիցն, որպէս՝ բագուկ, պագուկ, փագուկ», այսինքն՝ հստակ տարբերակվում էին բ-պ-փ շարքերը:

Եվ քննությանը ուսանողը այս հարցին պատասխանելիս ասում է.

Ուսանող - ... Բաղաձայնները վերածվում են խուլերի:

Դասախոս - Կարո՞ղ եք օրինակներ բերել:

Ուս. - Օրինակ՝ Ճ-ն դառնում է Ծ:

Դաս. - ՚՚՚

Ուս. - Օրինակ՝ «ճուտ»-ը դառնում է «ծիտ»:

-144-

Գրաբարյան մեր ընթերցումներն առաջարկում ենք ավարտել ուսանողական աղոթքի մասին փոքրիկ գրույցով՝ հույս ունենալով, որ նախորդող հատվածները կարողացան մի կողմից ինչ-ինչ գիտելիքներ արթնացնել մեր հին ու նոր պատմությունից ու մատենագրությունից, մյուս կողմից՝ (որ մեզ համար առավել կարևոր է) մեր հին ու դասական լեզվի հետ առնչվելու հնարավորություն ընձեռեցին և վերարթնացրին գրաբարի հանդեպ մեր ականածանքը:

Տարիներ առաջ «գրաբար» առարկայի քննության ժամանակ ուսանողիներից մեկի մոտ պատճենված թուղթ տեսանք՝ «Ուսանողի աղոթք» վերնագրով: Հետագա հարցուփորձից պարզեցինք ու իմացանք, որ Գարեգին Բ ամենայն հայոց կաթողիկոսի օրհնությամբ ժամանակին հաստատվել է այդ աղոթքի տեքստը: Կաթողիկոսի բարեմաղթանքը հետևյալն է աղոթքն օրհնելիս.

«Ամենայն հայոց մայր աթոռ Ս. Էջմիածնից հայրապետական մեր օրհնությունն ենք բերում հանրակրթական դպրոցների սիրելի շրջանավարտներիդ՝ հայցելով, որ Տիրոջ Սուրբ Հոգին հովանի լինի ձեզ և առաջնորդի ամենքիդ դեպի լուսառատ գալիք՝ լեցուն սիրով, բարությամբ և երջանկությամբ»:

Ահա ուսանողի աղոթքի տեքստն ամբողջությամբ: Ամեն ինչից զատ՝ նաև պարզ և գեղեցիկ գրաբարով է ստեղծված այն.

«Արարիչ անճառելի և աղբիւր ճշմարիտ լուսոյ եւ իմաստութեան,

Հեղ ի միտս իմ գնշոյլս պայծառութեան եւ փարատեցո՛յ յանձնէ իմմէ՛ գմէ՛գ եւ զանգիտութիւն:

Դու, որ զլեզուս տղայոց դնես պարգախօսս, վարժեա՛ զլեզու իմ եւ լի՛ց օրհնութեամբ շնորհաց Քոց զշրթունս իմ:

Տու՛ր ինձ սրութիւն իմանալոյ, զընդունակութիւն պահելոյ, զկորովամտութիւն մեկնելոյ, զդիւրընկալութիւն ուսանելոյ եւ զամենառատ շնորհախօսելոյ:

Կազմեալ յարդարեա՛ զմուտս իմ, ուղղեա՛ զգնացս իմ եւ կատարեա՛ զգալս իմ ի Յիսուս Քրիստոս ի Տէր, ամէն»:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ	3
ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆՔ	7
ՊԱՏՄԱԿԱՆՔ	29
ԳՐԱԿԱՆՔ	70
ԼԵԶՎԱԿԱՆՔ	106
ԶՎԱՐՃԱԼԻՔ	139

ՆՈՐԱՅՐ ՊՈԴՈՍՅԱՆ

ՄԵՐ ԳՐԱԲԱՐԸ Զրույց-ընթերցումներ

1

Տպագրվել է «ՄԵԿՆԱՐԿ» ՍՊԸ տպարանում:
Տպագրությունը՝ լազերային, թուղթ՝ օֆսեթ,
ծավալ՝ 9,5 տպ մամուլ, տպաքանակը՝ 200:

ԵՐԵՎԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆ
2018